

# ԹՐԱՖԻԲԻՆԳ

ՄԱՐԴԿԱՆՑ ԸԱՅԱԳՈՐԾՈՒՄ



ՁԵՌՆԱՐԿ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ռ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ,  
Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Կ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

# ԹՐԱՖԻԲԻՆԳ

(ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ)

ՁԵՌՆԱՐԿ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից  
երաշխավորված է հանրակրթական ավագ դպրոցում  
որպես ուսումնասովանողական ձեռնարկ գործածելու համար

ԵՐԵՎԱՆ



2 0 1 0

ՀՏԳ 373.167.1:341.231.14 (075)

ԳՄԳ 67.91 ց 72

Թ 880

Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում):

Թ 880 Չեռնարկ սովորողների համար /Ս.Պետրոսյան, Ռ.Մուրադյան,  
Ս. Խաչատրյան և ուրիշ. –Եր.: Տիգրան Մեծ, 2010. – 120 էջ:

ՀՏԳ 373.167.1:341.231.14 (075)

ԳՄԳ 67.91 ց 72

ISBN 978-99941-0-361-4

*Հեղինակային խոսք՝*

Միլվա Պետրոսյան, Ռուզաննա Մուրադյան, Սերոբ Խաչատրյան,  
Հեղինե Խաչատրյան, Կոռյուն Նահապետյան

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է:** Մույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հեղինակների և հրատարակչի նախնական գրավոր թույլտրվության:

\* \* \*

Մույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության պաշտոնական տեսակետների հետ:

\* \* \*



IOM International Organization for Migration  
OIM Organisation internationale pour les migrations  
OIM Organización Internacional para las Migraciones

Միգրացիայի միջազգային  
կազմակերպություն



Schweizerische Eidgenossenschaft  
Confédération suisse  
Confederazione Svizzera  
Confederaziun svizra

**Swiss Agency for Development  
and Cooperation SDC**

Շվեյցարիայի զարգացման և  
համագործակցության գործակալություն

Գիրքը հրատարակվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ:

## **Ձեռնարկը վաճառքի ենթակա չէ**

**Հրատարակիչ՝** Միգրացիայի միջազգային կազմակերպություն

Տպագրության պատրաստեց ՄՄԿ-ի Հայաստանում ծրագրերի մշակման և իրականացման բաժինը:

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)**

**Հայաստանյան առաքելություն**

Հայաստան, Երևան 0010, ՄԱԿ-ի գրասենյակ, Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ  
Հեռ.՝ (+374 10) 58 56 92, 58 37 86

Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65

Էլ.փոստ՝ iom@iom.am

Կայք՝ <http://www.iom.int/armenia>

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱՍ 1. Ի՞նչ է մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) . . . . .	7
ԳԱՍ 2. Մարդկանց շահագործման՝ թրաֆիքինգի պատճառները . . . .	12
ԳԱՍ 3. Թրաֆիքինգի դրսևորումները . . . . .	14
ԳԱՍ 4. Թրաֆիքինգի դրսևորումները (շարունակություն) . . . . .	16
ԳԱՍ 5. Երիտասարդությունը որպես թրաֆիքինգի ռիսկային խումբ . . . . .	22
ԳԱՍ 6. «Վիկտիմություն» և «վիկտիմ վարք» հասկացությունները . . . . .	26
ԳԱՍ 7. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում . . . . .	29
ԳԱՍ 8. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գոհերի պաշտպանությունը և աջակցությունը . . . . .	36
ՀԱՎԵԼՎԱԾ . . . . .	43
ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ . . . . .	47

## **ՄԻՐԵԼԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐ**

Չեզ ներկայացվող շեռնարկը սրեղծվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) «**Մարդկանց առևտուրը կանխելուն ուղղված դպրոցական կրթություն Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում**» փարաժաշրջանային ծրագրի շրջանակներում:

Դուք գիտեք, որ միգրացիան բնակչության րեղաշարժն է մեկ երկրից մյուսը, իսկ Միգրացիայի միջազգային կազմակերպությունը միջկառավարական կառույց է, որն աշխատում է միգրացիայի կառավարման չորս հիմնական ոլորտներում՝ միգրացիա և զարգացում, միգրացիայի խթանում, միգրացիայի կարգավորում և աջակցություն բռնի միգրացիայի ենթարկվածներին: Իր բազմամյա գործունեության ընթացքում ՄՄԿ-ն մարդասիրական օգնություն է ցուցաբերել դժվարին կացության մեջ հայրենված միգրանտներին՝ լինեն նրանք փախստականներ, րեղահանվածներ կամ թրաֆիքինգի զոհեր:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում Միգրացիայի միջազգային կազմակերպության կարևորագույն դերն **անմիջական աջակցությունն է թրաֆիքինգի զոհերին:** ՄՄԿ-ը միակ միջազգային միջկառավարական կազմակերպությունն է, որը րարբեր երկրներում իր գրասենյակների ցանցի միջոցով իրականացնում է թրաֆիքինգի զոհերի նույնականացումն ու րեղափոխումը՝ վերադարձը: Մինչ օրս թրաֆիքինգի զոհերի նույնականացման համար օգրագործվում է ՄՄԿ-ի կողմից մշակված հարցաշարը: Թրաֆիքինգի զոհերի անմիջական օգնությունն ընդգրկում է.

- ◆ ապահով վայրում կացարանի րրամադրում
- ◆ բժշկական, հոգեբանական, սոցիալական աջակցություն
- ◆ հմրությունների զարգացում ու միջին մասնագիտական պրոֆրեհնիկական ուսուցում
- ◆ աջակցություն վերաինրեգրման գործում
- ◆ ապահով ու արժանավայել կերպով դեպի հայրենիք կամավոր վերադարձի կամ ժայրահեղ դեպքերում՝ երրորդ երկրներում վերաբնակեցման հնարավորությունների ընշեռում
- ◆ հարուղ պաշրպանության ապահովում անչափահաս զոհերին:

Թրաֆիքինգը մրահոգություն ներկայացնող ինղիր է ներկա հասարակության համար: Յավոք, Հայաստանի Հանրապետության համար այն ևս արդիական է: ՄՄԿ-ն և շեռնարկը սրեղծող հեղինակային

խումբը հուսով են, որ մարդկանց շահագործման՝ թրաֆիքինգի հիմնախնդիրներին նվիրված առաջարկվող դասընթացն ուսումնասիրելուց հետո դուք ավելի իրազեկ կգտնվեք ու կօգնեք նաև չեր շրջապատի մարդկանց հանդես բերելու ավելի տեղեկացված ու գործուն վարք, որպեսզի թե՛ դուք, թե՛ նրանք երբևէ չդառնաք թրաֆիքինգի գոհ: Հուսով ենք նաև, որ դասընթացը կնպաստի արդեն թրաֆիքինգից տուժածների հանդեպ ավելի մարդասիրական ու հանդուրժողական վերաբերմունքի մշակմանը և նրանց վերականգնման հեշտացմանը:

Չեռնարկը բաղկացած է 8 հիմնական դասերից, տեղեկատվական հավելվածից և գեղարվեստական գրականությունից ընտրովի հատվածներից, որոնց ընթերցումն ու խորհրդածում-վերլուծությունները, հուսով ենք, չեզ կդարձնեն ավելի պաշտպանված ու իրազեկ մարդկանց շահագործման՝ թրաֆիքինգի խնդիրներում:

Առաջարկում ենք դասընթացի ժամանակ չեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիսել ծնողների ու մտերիմ ընկերների հետ՝ դրանով նպաստելով հասարակության էլ ավելի իրազեկմանը:

Մաղթում ենք հաջողություն:



## ԳԱՍ 1. ԻՆՉ Է ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ (ԹՐԱՖԻՔԻՆԳԸ)

*Ընթերցեք տեքստը.*

Գլոբալացվող արդի հասարակությունում համընդհանուր են դառնում ոչ միայն մարդկության առաջընթացի արդյունքները, այլև մարդկային հանրության առջև ծառայած պրոբլեմները: Գլոբալացումն իր հետ բերում է նաև կազմակերպված հանցավորության աճ, քանի որ երկրների միջև տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ կապերի սերտացումը հանցավոր խմբերն օգտագործում են իրենց նպատակներին հասնելու համար: Դրան նպաստում են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Ի թիվս այլ հիմնախնդիրների, գլոբալացման դարաշրջանում ահագնացող պրոբլեմ է դառնում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հիմնախնդիրը:

Թրաֆիկինգը կամ մարդկանց շահագործումը համարվում է 21-րդ դարի ստրկություն, այն հաճախ անվանում են նաև «սպիտակ ստրկություն»: Հայտնի են կանանց, անչափահասների և տղամարդկանց աշխատանքային և սեռական շահագործման բազմաթիվ դեպքեր:

Թրաֆիքինգն արդիական խնդիր է նաև Հայաստանի համար: Որպես կանոն, մարդկանց շահագործման գոհեր են դառնում մեր այն հայրենակիցները, ովքեր ցանկանում են ամեն գնով խուսափել ցածր կենսապայմաններից, երբեմն անշրջահայացորեն, այդ նպատակով համաձայնում են լքել մեր հայրենիքը, միամտորեն հավատարիվ եկամուտներն արագ բարձրացնելու իրենց տրված հաճախ սին խոստումներին: Արդյունքում նրանցից շատերը հայտնվում են ծանր կացության մեջ. ֆիզիկապես և բարոյապես անխղճորեն շահագործվում են, ստիպված են լինում կատարել իրենց ուժերից վեր ծանր աշխատանք՝ դրա դիմաց չվճարվելով, արժանապատվության նսեմացմամբ, ենթարկվելով ծեծի ու սպառնալիքների:

Մարդկանց շահագործման դեմ գործուն պայքար մղելու նպատակով 2000թ. հռչակվեց ՄԱԿ-ի Գերագույն հանձնաժողովի «Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կռիվնեցիան», որը հետագայում լրացվեց 2003թ. Պալերմոյում ընդունված երկու արձանագրություններով՝ «Ցամաքով, օդով կամ ծովով մարդկանց ապօրինի փոխադրումների դեմ» և «Մարդկանց, հարկապես կանանց և երեխաների շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման, արգելման և պարտի մասին» արձանագրություններ:

րով: Վերջին արձանագրությունում տրվեց մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) երևույթի սահմանումը և դրա դեմ պայքարի ուղիները:

Իսկ ի՞նչ է մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) ըստ վերոնշյալ արձանագրության:

Արձանագրության երրորդ հոդվածում ասվում է.

*ա) «մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) հասկացությունը նշանակում է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, պահում կամ ընդունում սպառնալիքի կամ ուժի գործադրմամբ կամ հարկադրանքի որևէ այլ ձևի կիրառմամբ, առևանգմամբ, խարդախությամբ, խաբեությամբ, պաշտոնեական դիրքի կամ խոցելի վիճակի չարաշահմամբ անչի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի համաչայնությունը չեռք բերելու նպատակով, գումարների կամ այլ շահույթի փրամադրմամբ կամ չեռք բերմամբ: «Շահագործում» հասկացությունն առնվազն ներառում է մարմնավաճառության նպատակներով այլ անձանց շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, սրբկությունը կամ սրբկությանը համարժեք գործելակերպը, փաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը*

*բ) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գոհի համաչայնությունը սույն հոդվածի «ա» ենթակետով սահմանված շահագործման այս կամ այն ձևին չունի որևէ նշանակություն, եթե կիրառվել է «ա» ենթակետով սահմանված եղանակներից որևէ մեկը.*

*գ) շահագործման նպատակով երեխաներին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է «մարդկանց շահագործում» նույնիսկ այն դեպքում, երբ դա չի ներառում սույն հոդվածի «ա» կետով սահմանված եղանակներից որևէ մեկը.*

*դ) «երեխա» համարվում է փաստոթ փարին չլրացած ցանկացած անձ.*

*ե) «գոհ» համարվում է սույն հոդվածում սահմանված մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթակա ցանկացած ֆիզիկական անձ:*

Այժմ փորձենք մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերոնշյալ սահմանումը մեկնաբանել կետ առ կետ: Նախ, ինչու է տրվում մնան հանգամանալից և թվարկումներով հարուստ սահմանում: Պատասխան. քանի որ նախքան սահմանման խնդրին հանգելը եղել են թվարկված երևույթներին համապատասխան բազմազան օրինակներ, որոնց մեկ հոդվածի տակ ամրագրելու պահանջն էլ հոդվածին տվել է թվարկումների շարքի տեսք: Որպես կանոն, մարդկանց շահագործողները նախ և առաջ գործարքի են գնում իրենց խղճի հետ, փորձելով իրենք իրենց հա-

մոգել, որ իրենց գործողություններում ելել են շահագործվողի շահերից: *Հեյրևապես, անհրաժեշտությունն է առաջանում սահմանել «մարդկանց շահագործում» հասկացությունը, որի արդյունքում նման արարք կատարած մարդիկ պետք է կանգնեն պատասխանարվության առաջ:* Թրաֆիքինգի դեմ պայքարի ամենագործուն միջոցն այս երևույթի քրեականացումն է, որի համար հարկավոր են ճշգրիտ սահմանումներ:

Ստորև բերվում են մի շարք օրինակներ, որոնցում կա մարդկանց շահագործում, քանի որ վերոնշյալ սահմանման մեջ նշված հանգամանքներն առկա են.

- Քաղաքացի Վ.-ն տղամարդկանց մի խումբ էր *հավաքագրել ու րեդայփոխել* Ռուսաստանի Դաշնություն շինարարության վրա աշխատելու համար: Այդ խմբի հանդեպ կիրառվել էր *հարկադրանք*, տղամարդկանց ստիպել էին աշխատել, իսկ վճարվելիք *գումարները յուրացրել էին* Վ.-ն ու իր գործակիցները՝ աշխատողներին տալով միայն սնունդ:
- Քաղաքացի Կ.-ն գտնվում էր X երկրում ապօրինի (նրա մուտքի թույլտվության ժամկետը լրացել էր), սակայն չէր ցանկանում վերադառնալ Հայաստան, քանի որ հիվանդ կնոջ վիրահատության համար ցանկանում էր գումար վաստակել: Նա դիմում է իր ծանոթներին, խնդրելով իր հետ տվյալ երկիր եկած իր անչափահաս տղային իրենց հետ տանել Հայաստան, որպեսզի ինքը հնարավորություն ունենա աշխատանք գտնելու: Ծանոթները՝ *չարաշահելով Կ.-ի խոցելի վիճակը, նրա անչափահաս րդային հանձնեցին* «բարեգութ» մի ընտանիքի *համարյա որպես սիրունկ* աշխատացնելու համար:
- Քաղաքացի Մ.-ն մարմնավաճառ էր իր հայրենի քաղաքում: Նա համաձայնվում է մեկնել Y երկիր, քանի որ հավաքագրողը *խարդախության է դիմում*՝ նրան խոստանալով իր «աշխատանքի» համար կրկնակի եկամուտ: Այնինչ Y երկրում Մ.-ն աշխատում է կրկնակի շատ, սակայն չի վճարվում, քանի որ նրան *հասանելիք գումարները չենք* են բերում *խաբեությանը* նրա փաստաթղթերին տեր դարձած միջնորդ-կավատները:

Վերոնշյալ սահմանման «ա» կետում ներկայացվում է գործողությունների այն ցանկը, որը պետք է որակվի որպես մարդկանց շահագործում (թրաֆիքինգ): Իսկ «բ» կետում նշվում է մի կարևոր հանգամանք. *եթե նույնիսկ զոհը համաձայնում է շահագործման այս կամ այն ձևին, դա չի արդարացնում շահագործողներին*: Հնարավոր է, որ ինչ-որ մեկը,

ելնելով դժվարին իրավիճակից, համաձայնի իրեն առաջադրվող պայմաններին, սակայն եթե դրանցում առկա է սահմանմամբ տրված շահագործման տարրը, ուրեմն շահագործողները պետք է կանգնեն պատասխանատվության առաջ: *Սահմանման «գ» կետում հայտնի նշվում է, որ երեխաներին շահագործման նպատակով հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է «մարդկանց շահագործում», եթե դա նույնիսկ չի նկարագրված «ա» կետում:* Սա կարևոր է, քանի որ հնարավոր է, որ ինչ-որ մեկն ընդունի ու թաքցնի, օրինակ, սեռական շահագործման ենթարկվող երեխայի, ներկայացնելով դա որպես բարեգործություն: Հոդվածում պարզ նշվում է, որ դա նույնպես շահագործում է:

Վերոնշյալ արձանագրության մեջ տեղ գտած սահմանման ընկալումը հեշտացնելուն կարող է նպաստել հետևյալ աղյուսակը<sup>1</sup>.

Թրաֆիքինգ իրականացողների գործողությունները	Թրաֆիքինգի իրականացման եղանակները	Թրաֆիքինգ իրականացնելու նպատակները
<p>Թրաֆիքինգի դեպքում ստորև նշված գործողությունները կատարվում են <b>շահագործման</b> նպատակով.</p> <ul style="list-style-type: none"> <li>◆ հավաքագրելը</li> <li>◆ տեղափոխելը</li> <li>◆ փոխանցելը</li> <li>◆ պահելը</li> <li>◆ ընդունելը</li> <li>◆ թաքցնելը</li> <li>◆ ստանալը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>◆ սպառնալիքի գործադրում</li> <li>◆ ուժի կիրառում</li> <li>◆ հարկադրանքի այլ միջոցների կիրառում (օրինակ՝ փաստաթղթերի կեղծում կամ առգրավում)</li> <li>◆ առևանգում</li> <li>◆ խարդախություն</li> <li>◆ խաբեություն</li> <li>◆ պաշտոնական դիրքի չարաշահում</li> <li>◆ գոհի վիճակի խոցելիության շահարկում</li> <li>◆ գումարների տրամադրում</li> <li>◆ կաշառում</li> <li>◆ անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի համաձայնության ձեռք բերում</li> </ul>	<p>Հիմնական նպատակը <b>շահագործումն է</b>, որը կարող է ունենալ հետևյալ ձևերը.</p> <ul style="list-style-type: none"> <li>◆ մարմնավաճառության նպատակներով այլ անձանց շահագործում</li> <li>◆ սեռական շահագործման այլ ձևեր (օրինակ՝ պռոնկագրություն)</li> <li>◆ հարկադիր աշխատանքներ կամ ծառայություններ</li> <li>◆ ստրկություն կամ ստրկությանը հավասարագոր վիճակ (օրինակ՝ մուրացկանություն, որի ողջ եկամուտը շահագործողին է հասնում)</li> <li>◆ տաժանակիր աշխատանքներ</li> <li>◆ օրգանների կորզում</li> </ul>

1 Աղյուսակը լրամշակվել է Լ. Մելքոնյանի «Ինչպես կազմակերպել թրաֆիքինգի դեմ պայքարը համայնքներում» (Երևան, ՄՍԿ, 2006թ.) ձեռնարկի էջ 14-ում տեղ գտած աղյուսակի հիման վրա:

**Խմբային աշխատանք**

Կազմեք խմբեր ըստ այն հանգամանքի, թե սույն ձեռնարկի վերջում ներկայացված Գեղարվեստական գրականության հատվածներից որ ընթերցանության նյութերն եք կարդացել ու, քննարկելով, լրացրեք ստորև բերվող աղյուսակը:

Երկի կամ հատվածի անվանումը	Մարդկանց շահագործման գոհ(եր)ը	Նրա(նց) հանդեպ կիրառված գործողությունները	Շահագործման նպատակը	Շահագործողների օգտագործած միջոցները	Շահագործման հետևանքները
1.					
2.					

**ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

1. Եթե ընթերցանության նյութերում տեղ գտած իրադարձությունները կատարվեին ներկայում, արդյո՞ք ավելի պաշտպանված կլինեին գոհերը: Ինչո՞ւ:
2. Կա՞ր ընդհանրություն գոհերին մարդկանց շահագործման մեջ ներքաշելու ձևերում, թե ամեն մի դեպք յուրօրինակ էր:
3. Ի՞նչ հետևանքների բերեց քննարկվող յուրաքանչյուր դեպք:
4. Ի՞նչ կարող էին անել հերոսները թրաֆիքինգի գոհեր չդառնալու համար:

## ԴԱՍ 2. ՄԱՐԳԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ՝ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

### *Մտազրոհ*

Հիշելով գեղարվեստական գրականությունից ձեր ընթերցած նյութերը, ինչպես նաև նախորդ դասից սովորածը՝ փորձեք թվարկել պատճառներ, որոնք բերում են մարդկանց շահագործման՝ թրաֆիքինգի:

### *Դերային խաղ «Փարի՛ գ, Փարի՛ գ»*

Ընթերցեք հետևյալ իրավիճակը, և ըստ ուսուցչի հրահանգների պատրաստվեք դերային խաղի:

*Էդգարը երիտասարդ ծրագրավորող է, նրա կինը՝ Անուշը, դերասանուհի: Ունեն 12 տարեկան աղջիկ՝ Լիլիթը, և 9 տարեկան տղա՝ Արամը: Օրերից մի օր Էդգարը ոգևորված գալիս է տուն ու ասում, որ հանդիպել է մի հին ծանոթի՝ Հակոբին, որն առաջարկել է իրեն ընդունելով մեկնել Փարիզ, քանի որ իր մասնագիտությամբ Էդգարն այնպեղ շատ ավելի լավ կվսարակի և ընդունելով առողջ-փառող կսարեն:*

*Ընդունելի անդամները ոգևորվում են ու սկսում վաճառել ունեցվածքը ճանապարհի ծախսերը հոգալու համար: Հակոբը գալիս է նրանց տուն ու բացատրում, թե ոնց են իրականացնելու Փարիզում հասարակելու ծրագիրը: Էդգարն ինքնաթիռով մեկնելու է Ստամբուլ, ապա այնպեղից տրանսպորտի այլ միջոցներով հասնելու է Փարիզ: Անուշը թարերախմբի հետ մեկնելու է Աթենք, այնպեղ լքելու է խումբն ու գնացքով հասնելու է Փարիզ: Իսկ երեխաներին Հակոբն իր հետ տանելու է Պրահա, ապա այնպեղից հուսալի մարդկանց ուղեկցությամբ ճանապարհելու է Փարիզ, որպեղ երկու շաբաթվա ընթացքում ընդունելի կվերամիավորվի:*

*Հակոբն ասում է, որ այս ամենի հետևում փոխանախարար մարդ է կանգնած, ու ամեն ինչ սրացվելու է քարշր մակարդակով:*

Ձեր խմբի խնդիրն է 10 րոպեի ընթացքում ներկայացնել այս պատմության շարունակությունը թատերական ներկայացման տեսքով: Շարունակությունը ներկայացնելու համար դուք կարող եք դնել տարբեր «ակնոցներ»՝ լավատեսի, հոռետեսի կամ իրատեսի: Դուք կարող եք ունենալ լրացուցիչ հերոսներ, եթե դրա անհրաժեշտությունը զգում եք: Կարող եք ներկայացնել միջանկյալ տեսարաններ կամ վերջնա-

կան մի տեսարան, որտեղ հերոսները կպատմեն իրենց գլխով անցած- դարձածը:

Ուշադրություն դարձրեք, թե որ տեսանկյունից պետք է զարգացնեք դեպքերը. լավատեսակա՞ն, հոռետեսակա՞ն, թե՞ իրատեսական: Հիշե՛ք, որ ներկայացումն իր մեջ պետք է պարունակի թրաֆիքինգ երևույթի քննադատություն՝ անմիջական կամ միջնորդավորված ձևով:

Ներկայացնողները կգնահատվեն, իսկ գնահատողները կգնահատեն ըստ ստորև ներկայացվող սյունակաշարի:

Հաշվի առեք, որ ներկայացումները պետք է տևեն 3-5 րոպե:

*Գերային խաղի գնահատման սյունակաշար*

Որքանո՞վ էր ներկայացումը վերահանում թրաֆիքինգ երևույթի բնորոշ կողմերը	Լիովին	Մասամբ	Մեկ-երկու գծով	Փորձ կա, բայց արդյունավետ չէ	Վեր չի հանում թրաֆիքինգ երևույթի կողմերը
	5	4	3	2	1
Գերային խաղը դիտելով, կարելի՞ է եզրակացնել, որ մասնակիցները կարող են բացատրել թրաֆիքինգի էությունը	Միանգամայն	Այո, որոշ վերապահումներով	Որոշակի չափով	Գժվար է մնան եզրակացություն անել	Կարծես թե չեն պատկերացնում թրաֆիքինգի էությունը
	5	4	3	2	1
Արդյո՞ք խումբն աշխատում էր համագործակցված	Այո, բոլորն իրենց նպատակներում էին բերում աշխատանքին	Մեծամասնությունը մասնակցում էր	Խմբի կեսն էր մասնակցում	Մեծամասնությունն անտարբեր էր	Չկար խմբի անդամների համագործակցություն
	5	4	3	2	1
Կարողացե՞լ էին մտնել դերի մեջ	Լիովին	Մասամբ	Գժվարությամբ	Համարյա ոչ	Ոչ
	5	4	3	2	1
Տեղավորվո՞ւմ էին ժամանակի մեջ	Լիովին	Մասամբ	Գժվարությամբ	Համարյա ոչ	Ոչ
	5	4	3	2	1
Գերային խաղից կարելի՞ է ուսուցանող եզրակացությունների հանգել	Այո, միանգամայն	Գոնե մեկ եզրակացություն ենթադրվում է	Որոշ ճշգրտումներով՝ այո	Գժվարությամբ	Ոչ
	5	4	3	2	1

### ԴԱՍ 3. ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

*Ընթերցեք ստորև բերվող դասրոդությունները և արտահայտե՛ք ձեր դիրքորոշումը՝ համաձայն եմ/համաձայն չեմ փարբերակով:*

**1. Լավ կենսապայմաններ ունենալու համար պետք է գնալ արտասահման:**

**2. Թրաֆիքինգը կապ չունի մարդու իրավունքների հետ:**

Ստորև անկանոն ներկայացված են թրաֆիքինգի մի պատմության հատվածներ: Դասավորեք պատմության հատվածները ճիշտ հերթականությամբ, նշեք այն հատվածները, որոնցում կա մարդու իրավունքների խախտում և բացատրեք, թե մարդու որ իրավունքն է խախտված: Նաև նշեք, թե տվյալ դեպքը թրաֆիքինգի որ բաղադրիչներն է պարունակում:

<i>Ամեն օր նրանց երկու անգամ ճաշ էր տրվում:</i>
<i>Մայրը Ա.-ին ուղարկեց Դուբայ: Նա մտածում էր, որ երեխան արդեն այնքան մեծ է, որ կարող է իր մասին հոգ փսնել, աշխատել և ընդհանրապես գոյնար ուղարկել:</i>
<i>Լ.-ն ասաց, որ ինքը կվճարի ճանապարհածախար: Դուբայում Լ.-ն Ա.-ին փարավ գործարան և վաճառեց 500 ԱՄՆ դոլարով:</i>
<i>Ա.-ն 13 փարեկան էր: Նրա ընդհանրապես շատ աղքատ էր, և ծնողներն այլևս ի վիճակի չէին Ա.-ին ուղարկել դպրոց:</i>
<i>Լ.-ն, որն ընդհանրապես հարևանուհին էր, առաջարկում է Ա.-ին փսնել Դուբայ, որտեղ նա կարող է մեծ գումարներ վաստակել:</i>
<i>Գործարանում աշխատողների մեծ մասը 12-15 փարեկան էին: Նրանք աշխատում էին առավոտյան 6-ից մինչև երեկոյան 10-ը:</i>
<i>Կիրակի օրերին նրանք հսկիչների հետ գնում էին հիգիենիկ պարագաներ գնելու:</i>
<i>Մի աղջիկ կարողացավ փսնել և հայտնել ոստիկանություն:</i>
<i>Գործարանի սեփականատերերը խարությանը հսկում էին երեխաներին, որպեսզի նրանք աշխատեն: Եթե երեխաները խախտում էին կանոնները, նրանց ծեծում էին: Երեխաները չէին կարող խաղալ, ծիծաղել, գրուցել միմյանց հետ:</i>



Ընթերցե՛ք ստորև բերվող իրավիճակները և պատասխանեք հաջորդող հարցերին:

### ***Իրավիճակ 1.***

10 տարեկան երեխան ապրում է ծայրահեղ աղքատ ընտանիքում: Մի օր ծնողներն առաջարկում են երեխային բարեկամ ընտանիքի հետ մեկնել արտերկիր աշխատելու՝ ընտանիքի նյութական կարիքները հոգալու նպատակով: Երեխան մեծ սիրով համաձայնվում է և մեկնում: Արդյոք երեխան թրաֆիքինգի զոհ է: Ընտրեք ստորև բերվող տարբերակներից ճիշտը:

1. Այո: Նույնիսկ եթե երեխան համաձայն էր մեկնելու, միևնույն է, նա շատ փոքր էր նման որոշում կայացնելու հարցում:
2. Այո: Երեխան պարզապես զրկվում է կրթության իրավունքից:
3. Ոչ, քանի որ ընտանիքը տվեց իր համաձայնությունը:
4. Ոչ, քանի որ երեխան իր կամքով է մեկնել:
5. Չգիտեմ:

### ***Իրավիճակ 2.***

22-ամյա մի տղա ամուսնության առաջարկ է անում 19-ամյա մի աղջկա: Նա վճարում է մի տղամարդու և կնոջ՝ որպես իր ծնողներ հանդես գալու համար: Աղջիկն ու տղան ամուսնանում են և մեկնում արտերկիր: Մեկ շաբաթ անց տղան պարտադրում է աղջկան զբաղվել մարմնավաճառությամբ: Աղջիկը դառնում է մարմնավաճառ և սպասում այն օրվան, երբ կկարողանա դուրս գալ այդ կարգավիճակից: Ինչպե՞ս կբնութագրեք աղջկա վիճակը:

1. Ամուսնություն:
2. Խաբված և շահագործված, բայց թրաֆիքինգի չենթարկված:
3. Թրաֆիքինգի զոհ:
4. Չգիտեմ:

## ԴԱՍ 4. ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

*Ընթերցե՛ք ստորև բերվող դատողությունները և արտահայտե՛ք ձեր դիրքորոշումը՝ համաձայն եմ/համաձայն չեմ փարբերակով:*

**1. Թրաֆիքինգը և անօրինական միգրացիան նույն բանն են:**

**2. Թրաֆիքինգի գոհերն անխելք մարդիկ են:**

*Բաժանվե՛ք երեք խմբի: Յուրաքանչյուր խմբի կրթվի մեկ իրավիճակ: Ընթերցե՛ք և վերլուծե՛ք յուրաքանչյուր իրավիճակը, և ամբողջ դասարանին ներկայացրե՛ք թրաֆիքինգի փարբերը:*

*Ընթերցում և վերլուծում է առաջին խումբը:*

### **Իրավիճակ 1.**

Ա.-ն 21 տարեկան է: Նա ցանկանում է աշխատել որպես մոդել, բայց չունի աշխատանքային փորձ: Հունվարի 1-ին նա ստորագրեց պայմանագիր X ընկերության հետ, որի համաձայն նա պետք է աշխատեր արտասահմանում որպես մոդել: Մի շարք կետեր չներառվեցին աշխատանքային պայմանագրում, բայց դրանց շուրջ եղան բանավոր պայմանավորվածություններ Ա.-ի և ընկերության տնօրենի միջև: Դրանք էին՝

1. Նա պետք է օրական 30 րոպե լիներ բեմում, մնացած ժամանակը նա չպետք է աշխատեր, բայց պետք է լիներ ընկերության տրամադրության տակ:
2. Ընկերությունն օրական երեք անգամ պետք է սնունդ հատկացներ Ա.-ին:
3. Ընկերությունն Ա.-ին պետք է ապահովեր կացարանով:

Սահմանն անցնելուց հետո Ա.-ն գումար խնդրեց սնվելու համար, բայց ընկերության աշխատակիցն ասաց, որ նա դեռևս չի աշխատել, որպեսզի իրեն վճարեն: Երբ Ա.-ն հասավ նպատակակետ երկիր, պարզ դարձավ, որ նա պետք է բնակվի փոքրիկ կացարանում, ընկերության երկու այլ աշխատակիցների հետ: Առաջին աշխատանքային օրվա ներկայացումից հետո Ա.-ին արգելվեց հեռանալ աշխատավայրից, և նրան սնունդ չտրվեց: Հաջորդ օրը, երբ Ա.-ն գումար խնդրեց սնունդի համար, նրան ասվեց, որ նախորդ օրը լավ չի աշխատել, և չեն կարող իրեն գումար տալ: Ա.-ն ցանկություն հայտնեց հետ վերադառնալ: Երբ վերադար-

ծից հետո նա դիմեց ընկերության տնօրենին, ստացավ նախօրոք խստացված գումարի 1/3-ը:

*Ընթերցում և վերլուծում է երկրորդ խումբը:*

### **Իրավիճակ 2.**

Գ.-ն և Դ.-ն որոշում են մեկնել Իսպանիա գյուղատնտեսության ոլորտում աշխատելու նպատակով: Նրանց որոշման համար հիմք էր ծառայել տեղական կազմակերպություններից մեկի նրանց աշխատանքով ապահովելու մասին խոստումը: Նրանք վճարեցին 2000 ԱՄՆ դոլար այդ գործակալությանը և մեկնեցին Իսպանիա: Նրանց տարան մի բնակարան, որտեղ ոչ հոսանք կար, ոչ ջուր, ոչ էլ կահույք: Տղամներն ամեն առավոտ ժամը 6-ին գնում էին այգի միրգ հավաքելու և վերադառնում կեսգիշերին: Վաստակած գումարով կարողանում էին գնել միայն որոշ սննդատեսակներ և ջուր: Մի օր տղաները վերադարձան Հայաստան:

*Ընթերցում և վերլուծում է երրորդ խումբը:*

### **Իրավիճակ 3.**

Լ.-ն համալսարանն ավարտելուց հետո ցանկություն ուներ աշխատելու արտասահմանում: Աշխատանքային գործակալությունը նրան առաջարկեց երեխաներին խնամողի աշխատանք մի ընտանիքում, որտեղ կային մինչև 5 տարեկան երեք երեխաներ: Աշխատանքը Փարիզում էր, և Լ.-ին համոզեցին, որ ֆրանսերենի չիմացությունը խնդիր չէ, քանի որ ընտանիքի հետ ապրելով՝ շատ արագ կյուրացնի այդ լեզուն: Նա տուրիստական վիզա ստանալուց հետո մեկնեց Փարիզ: Օդանավակայանում նրան դիմավորեց այդ ընտանիքի ենթադրյալ հայրը և Լ.-ին ուղեկցեց տուն: Ճանապարհին նա հարցրեց, թե քանի ամսով է մուտքի վիզա ստացել: Տեղեկանալով, որ վիզան մեկ ամսվա համար է, ենթադրյալ հայրը վերցրեց Լ.-ի անձնագիրը վիզան վեց ամսով երկարացնելու համար:

Երբ նրանք ժամանեցին տուն, պարզվեց, որ այնտեղ երեխաներ չկան: «Մենք կատակել ենք: Այս տան երեխան ես եմ, և դուք պետք է ինձ խնամեք», - ասում է ենթադրյալ հայրը և հայտնում, որ Լ.-ն պետք է մարմնավաճառությամբ զբաղվի: Նա սպառնում է Լ.-ին չփորձել որևէ տեղ զանգել կամ որևէ մեկին դիմել, քանի որ ինքը սպանել է նման փորձեր ձեռնարկած այլ մարդկանց:

***Ընթերցե՛ք ստորև բերվող իրավիճակը և պատասխանե՛ք հաջորդող հարցերին:***

***Իրավիճակ 1.***

Արտերկրում աշխատող մի տղամարդ առաջարկում է 17 տարեկան դպրոցականին թողնել դպրոցը և իր հետ մեկնել աշխատելու: Գպրոցականն ընդունում է առաջարկը և աշխատանքի ընդունվում մի մասնավոր ընկերությունում: Անցան շաբաթներ, բայց երեխան ոչ մի գումար չստացավ իր աշխատանքի դիմաց: Երբ երեխան որոշեց այլևս չաշխատել, ընկերության տնօրենն ասաց. «Մենք զգալի գումար ենք վճարել քո ընկերոջը քեզ այստեղ բերելու համար: Մեզ վերադարձրու այդ գումարը և մենք կթողնենք, որ դու գնաս»: Անցավ մեկ տարի, և երեխան շարունակում էր աշխատել նույն պայմաններում:

*Արդյո՞ք երեխան թրաֆիքինգի զոհ է:*

***Իրավիճակ 2.***

18 տարեկան մի երիտասարդ ԱՄՔՈՐ-ի գործընկեր կազմակերպության կողմից ուղղորդվել էր ԱՄՔՈՐ-ի ապաստարան: Հարցազրույցից պարզվել էր, որ նա թրաֆիքինգից տուժած է: Նրա պատմությունը կարող է արտասովոր թվալ, սակայն ունի շատ մանություններ այլ տուժածների պատմությունների հետ: Նա երեք տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Երևան: Նրա հայրը մահացավ: Տղայի ավելի երիտասարդ քույրերին և եղբորն ուղարկեցին տարբեր մանկատներ: Որոշ ժամանակ նա սովորում էր հատուկ կրթական հաստատությունում, որտեղ, ըստ նրա, նա ապրում էր բավարար պայմաններում:

Երբ նա դարձավ 17 տարեկան, նրան տեղափոխեցին այլ մանկատուն, և նա այնտեղ մնաց մեկ տարի: 2006 թվականին նրա խորթ մայրը եկավ և ուժով տարավ նրան մանկատնից՝ պնդելով, որ կունենան իրենց տունը՝ լավ պայմաններով, և նա ոչնչի պակաս չի զգա: Իրականությունն այլ էր: Երբ նրանք հասան Երևան, պարզվեց, որ խոստացված «բնակարանը» մի խղճուկ սառը ներքնահարկ է՝ մի հիվանդանոցի ընդունարանի կողքին: Նրանք աթոռներ կամ մահճակալներ չունեին, սենյակում կար միայն սեղան: Նա քնում էր հատակին: Խորթ մայրն ապրում էր իր ռուս ընկերոջ հետ: Նրանք երկուսն էլ շատ էին խմում և ոչ մի տեղ չէին աշխատում: Շուտով նրանք ստիպեցին տղային մուրալ փողոցներում և նրանից վերցնում էին հավաքած ամբողջ գումարը: Անգամ «սահմանել

էին», թե օրական որքան գումար պետք է բերի. ոչ պակաս, քան 5000 դրամ: Այն օրերը, երբ նա չէր կարողանում հավաքել անհրաժեշտ գումարը, ամենաձանձր էին, քանի որ նրան դաժանորեն ծեծում էին:

Ծեծից հետո նա հաճախ փախչում էր «տնից», բայց շուտով հայտնաբերվում և վերադարձվում էր տուն: Վերջապես, երբ նա հրաժարվեց վաստակած գումարը տալ իր «ծնողներին», նրա վրա եռացրած ջուր լցրին: Նրա մարմնի վրա վառածի հետքեր ու կապտուկներ կային: Նա արդեն հոգնել էր ծեծից ու մուրացկանությունից: Նա իր ընկերոջից լսել էր Հայ օգնության միության մասին և դիմեց նրանց: Այս տեղից նրան ուղարկեցին ԱՄԶՈՐ և ներգրավեցին օգնության ծրագրում: Տղան ուզում էր սովորել դերձակի ու կոշկակարի արհեստները, նաև ցանկանում էր ֆլեյտա նվագել (ժամանակին նա մի փոքր սովորել էր նվագել):

*Օգնությունը տրամադրել է ԱՄԶՈՐ/ԺԱ ՀԿ-ի ծրագիրը*

*Թրաֆիքինգի ի՞նչ եղանակներ և ձևեր են օգտագործվում վերոնշյալ օրինակում:*

### **Լրացուցիչ ընթերցանության նյութ**

«Յոթ հոգով մի փոքր սենյակում էինք մնում, որտեղ նույնիսկ տարրական կոմունալ հարմարություններ չկային: Համարյա միշտ կիսասուված էինք. օր էր լինում՝ ցամաք հաց էինք ուտում, լինում էր՝ կաղամբի կոթեր, օր էլ է եղել՝ բան չենք կերել: Ութ ամիս այդպես արդեն աշխատել էինք, երբ իմացանք, որ Ա.-ն ոչ մի կոպեկ մեր տուն չի ուղարկել՝ չնայած որ եղբոր գերեզմանով էր երդվում, որ տնեցիք ամեն ամիս փողը ստանում են», - պատմում է Գ.յումրու բնակիչ, 42-ամյա Ռ. Կ.-ն:

Գեկտեմբերի 8-ին Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում սկսվեց Ա.Մ.-ի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը: Նա մեղադրվում է Ռ. և Է. Կ.-երին, Ա.Գ.-ին հավաքագրելու և Ռ-ուսաստանի Գ-աշնության Թաթարստանի Հանրապետության Ալմետևսկ քաղաքում ավելի քան մեկ տարի աշխատանքային շահագործման ենթարկելու մեջ:

Մինչև Թաթարստան մեկնելը Ռ.-ն աշխատում էր Ծաղկածորում՝ շինարարության վրա: Երբ ավարտվեցին աշխատանքները, վերադարձավ Գ.յումրի: 2003-ի դեկտեմբերին Գ.յումրիում հարազատներից մեկի թաղման արարողության ժամանակ հանդիպում է մորաքրոջ տղային՝ Ա.-ին, և պատմում, որ նյութական ծանր վիճակում է և աշխատանք է փնտրում: Ա.-ն նրան պատմում է, որ իր ընկերներից մեկը՝ Մ.-ն, Թաթարստանում շինարարության վրա աշխատող խումբ է հավաքում, և նրանք միասին

կարող են մեկնել: Ռ.-ն համաձայնվում է: Որոշ ժամանակ անց Ա.-ն գնում է Ռ.-ի տուն՝ գործի մանրամասները քննարկելու: Ռ.-ի ու նրա կնոջ՝ Հ.Կ.-ի հետ գրույցի ընթացքում Ա.-ն ասում է, որ ամսական վճարը վարպետի գործի համար կկազմի 12 հազար ռուսական ռուբլի՝ մոտ 400 դոլար, իսկ բանվորի համար՝ 11 հազար ռուբլի՝ 300 դոլար, որից կհանվի ապրուստի ամսական գումարը՝ 50 ԱՄՆ դոլար:

Լ.-ն որոշում է իր հետ վերցնել նաև 16-ը նոր լրացած որդուն՝ Է.-ին, և իր կնոջ եղբորը՝ Ա.-ին: «Քիչ փող չէր առաջարկում: Ու քանի որ մեծ ընտանիք ենք, հոգսերն էլ շատ են՝ մեծ տղաս հիվանդ էր, բանակի, համալսարան ընդունվելու հարց կար, դրա համար էլ մտածեցի՝ վատ չի լինի, որ փոքր տղաս էլ Ռ.-ի հետ գնա: Իսկ Ա.-ի առաջ պայման դրեցի, որ Է.-ին Ռ.-ից չբաժանի, պետք է միասին աշխատեն: Նա էլ համաձայնվեց», - պատմում է Հ.Կ.-ն:

Ա.-ն ասում է, թե ճանապարհածախսի գումար չունի, և նրանք պետք է գումար ճարեն մեկնելու համար: Հետո էլ վստահեցնում է, որ հասնելուց ամենաշատը 20 օր հետո այն կուղարկեն: Ուստի Ռ.-ն ու Ա.-ն տոկոսով 300 դոլար են վերցնում ու ապրիլի 25-ին մեկնում: Հասնելուն պես Ռ.-ն ու Ա.-ն իմանում են, որ աշխատելու են Ա.-ի ղեկավարությամբ: Ա.-ն Ռ. և Է. Կ.-երին ու Ա.-ին մի քանի այլ բանվորների հետ բնակեցնում է Ալմետևսկի մոտ գտնվող Տիխասնաբ գյուղում վարձակալած սենյակում, որտեղ, անկողիններից բացի, ոչինչ չի լինում:

«Առավոտ 7-ից, երբեմն էլ 6-ից գնում էինք աշխատելու: Չնայած նախապես պայմանավորվել էինք աշխատել մինչև իրիկվա 7-ը կամ ամենաուշը 8-ը, լինում էր՝ գիշերը 1-ին ու 2-ին էինք գալիս: Նորմալ հաց չէինք ուտում: Մի անգամ էլ հիվանդացա, ոչ դեղ առավ, ոչ էլ բժիշկ կանչեց: Որ մի բան էլ ուզում էինք, ասում էր՝ փող չունեն, լավ չեք աշխատում, փողը քիչ ա: Բայց երդում էր ուտում, որ աշխատածներս տուն ա ուղարկում», - պատմում է Ա. Գ.-ն:

Որոշ ժամանակ անց Ա.-ն գրանցման հարցերը լուծելու պատրվակով հավաքում է նրանց անձնագրերը, հետո էլ հայտարարում, թե գործ չկա ու դրա համար էլ պետք է ուրիշ քրիզադիրի մոտ ուղարկի աշխատելու: 2004-ի հունիսին Ա.-ն Ռ.-ին առանց Է.-ի ուղարկում է Նուրլատ գյուղ: Մոտ 7 ամիս աշխատելուց հետո Ռ.-ն վերադառնում է ու տեսնում, որ Ա.-ն դաժան ծեծի է ենթարկել Է.-ին:

«Երեխան ասել էր՝ փող տուր տուն զանգեմ, տեսնեմ՝ ինչ կա: Նա էլ ծեծել էր երեխուն: Հետո էլ մի փչացած հեռախոս էր նվիրել ու խոստացել, որ կլիցքավորի, բայց ոչինչ էլ չէր արել: Ընդհանրապես շատ էր լի-

նում, որ խմած գալիս էր ու ծեծկռտուք սարքում: Իսկ բողոքել չէինք կարող, քանի որ ոստիկանների հետ լավ հարաբերությունների մեջ էր», - դատարանում ասաց Ռ.Կ.-ն:

Մի քանի անգամ էլ Ա.Գ.-ն է ծեծվել, երբ տուն վերադառնալու համար Ա.-ից անձնագիրն է պահանջել: Այսպես ամիսներ շարունակ Ա.-ն Կ.-երի ու Ա.Գ.-ի՝ տարբեր խմբերում աշխատելուց եկամուտ էր ստանում, իսկ նրանց հայտարարում, թե վատ են աշխատել, դրա համար էլ գործատուները չեն վճարել:

Այդ ընթացքում Գյումրիում Հ.Կ.-ն մի քանի անգամ այցելել է Ա.-ի բնակարան՝ նրա ընտանիքից ինչ-որ լուր իմանալու:

«Շատ վատ էին ինձ ընդունում, կոպտում էին ու ասում, որ ոչ մի տեղեկություն չունեն: Մի օր էլ նրանց մոտից հենց տուն վերադարձա, Ա.-ն զանգեց ու սկսեց սպառնալ ու պահանջել, որ իր ընտանիքին չանհանգրստացնեմ: Հետո էլ Ռ.-ի հետ խոսեցի, ասացի, որ հայրը վատ է, մեծ տղային էլ հոսպիտալ են պառնկեցրել, տոկոսներն էլ մի կողմից. գումար է հարկավոր: Չարմացավ, կարծում էր փող ենք ստանում: Հետո էլ կաշկանդված ասաց, թե ամեն ինչ լավ կլինի, որ չբողոքեմ: Մի անգամ էլ Ա.-ն զանգեց ու սպառնաց, թե՝ եթե նորից ընտանիքին անհանգստացնեմ կամ բողոք գրեմ, Է.-իս գլուխը փաթեթավորած կուղարկի», - պատմում է Հ.Կ.-ն:

Մակայն Հ.Կ.-ն 2004-ի նոյեմբերից սկսում է տարբեր ատյաններ բողոքներ գրել: Ռ. ու Է. Կ.-երը և Ա.Գ.-ն հետախուզման մեջ են հայտնվում: Հետո բողոքները հասնում են Մոսկվա, որտեղից էլ հարցում է կատարվում Թաթարստան: 2005-ի մայիսին Թաթարստանի միգրացիայի վարչությունը ձերբակալում է Ռ.Կ.-ին և ուղարկում Կազան: Ռ.-ն Կազանի բանտում 2 ամիս է անցկացնում, որի ընթացքում ձերբակալվում են որդին՝ Է.-ն ու Ա.Գ.-ն: Հուլիսին Ռ. և Է. Կ.-երն ու Ա.Գ.-ն վերադառնում են Հայաստան:

Ա.-ն դատավարության ընթացքում հրաժարվեց պատասխանել հարցերին և հայտարարեց, որ պնդում է նախաքննական ցուցմունքները: Նա նախաքննական ցուցմունքում պատմել է, որ Ռ.Կ.-ն խաբել է իրեն, թե լավ վարպետ է, և որ նրա կատարած ցանկացած գործ բողոքի տեղիք է տվել: Է.-ն ու Ա.Գ.-ն էլ լավ չեն աշխատել, դրա համար էլ ինքը ոչ մի գումար չի ստացել: Ինչ վերաբերում է սննդին ու ծեծին՝ սուտ է: Բացի այդ, ինքը որոշակի գումար է նրանց վճարել, սակայն ասպացուցել չի կարող:

Գատարանը Ա.-ին դատապարտեց 5 տարի ազատազրկման և պարտավորեցրեց Ռ. և Է. Կ.-երին ու Ա.Գ.-ին վճարել 11 հազար 400 ԱՄՆ դոլար:

## ԴԱՍ 5. ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՌԻՍԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ

### *Առաջադրանք*

Խորհեք հետևյալ հարցի շուրջ.

«Ինչո՞ւ են երիտասարդները համարվում մարդկանց առևտրի առանձնահատուկ ռիսկային խումբ»:

Արտահայտե՛ք ձեր կարծիքը, ունկնդրե՛ք ձեր ընկերներին:

### *Աշխատանք խմբերով*

Բաժանվեք խմբերի այնպես, որ յուրաքանչյուրում լինի 5-6 հոգի: Խմբով ընթերցեք դասանյութի՝ «Երիտասարդները որպես մարդկանց առևտրի ռիսկի խումբ» թեմայից «Հասարակությամբ պայմանավորված պատճառներ» նյութը:

**Երիտասարդները որպես մարդկանց առևտրի ռիսկի խումբ:** Մարդկանց առևտրի գոհեր հիմնականում դառնում են այն մարդիկ կամ խմբերը, որոնց կենսամակարդակը բավականին ցածր է լինում մինչև նրանց մարդկանց առևտրի գոհ դառնալը: Նմանատիպ մարդիկ պատկանում են ռիսկի խմբին: Գեներային անհավասարությունը, շարունակվող ավանդական արական սեռի դերի գերիշխումը նույնպես նպաստում է մարդկանց առևտրի զարգացմանը: Բացի աղքատությունը և պատկանելիությունը իգական սեռին՝ հաջորդ կարևոր ռիսկի գործոն է համարվում երիտասարդությունը:

**Հասարակությամբ պայմանավորված պատճառներ:** Տարբեր հասարակություններում երիտասարդները մարդկանց առևտրից պաշտպանվում են տարբեր ձևերով: Ռիսկի գործոնները նույնպես տարբեր հասարակություններում տարբեր են: Կարևոր է հասկանալ, որ մարդկանց առևտրի զարգացումը չի որոշվում ստրկության դեմ ուղղված որևիցե գործող օրենքով կամ էլ նրա բացակայությամբ: Այս խնդրի զարգացման աստիճանը հիմնականում որոշվում է պետության ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակով և համապատասխան քաղաքականության առկայությամբ:

Ստորև ներկայացվում են որոշ հասարակական գործոններ, որոնցով պայմանավորված է երիտասարդների շահագործման ռիսկի ավելացումը:



- ◆ *Բարձրագույն կրթության համար պետք է բարձր գին վճարել:* Մի կողմից՝ բարձրագույն կրթությունը հանդիսանում է նախադրյալ, որի շնորհիվ հեշտ է գտնել աշխատանք ըստ մասնագիտություն, մյուս կողմից՝ բարձրագույն կրթության պետպատվերը պակասում է վճարովի տեղերի համեմատ: Մեծամասամբ ֆինանսական վիճակը թույլ չի տալիս, որպեսզի երկուստեք և պաշտպանես գոյությունը, և վճարես ուսմանդ համար:
- ◆ *Գործազրկությունը երիտասարդների շրջանում:* Հայաստանում գործազուրկների բավականաչափ տոկոս են կազմում 18-25 տարեկան երիտասարդները, որոնք չեն կարողանում աշխատանք գտնել՝ չնայած իրենց մեծ ցանկությանն ու աշխատասիրությանը: Պատճառներից մեկը գործատուի կողմից պահանջվող նախնական աշխատանքային փորձի բացակայությունն է:
- ◆ *Պաշտոնների սեռական տարանջատումը և խտրականությունը աշխատանքի շուկայում:* Ընդհանուր առմամբ հետազոտությունները ցույց են տվել, որ աշխատող կանանց թիվն անհամեմատ ցածր է աշխատող տղամարդկանց թվից: Դա բացատրվում է նրանով, որ շատ գործատուներ նախընտրում են աշխատանքի վերցնել տղամարդկանց, այլ ոչ թե կանանց, քանի որ, նրանց կարծիքով, հղի կանայք և մայրերը չեն կարող անհրաժեշտ չափով նվիրվել աշխատանքին: Ելնելով նրանց գեներային պատկանելիության ավանդական մտածելակերպից, ենթադրվում է, որ եթե երեխան հիվանդանում է, ապա նրա հետ տանը մնում է մայրը և ոչ թե հայրը:
- ◆ *Հասարակության մեջ երիտասարդների և անչափահասների անբարոյականացում:* Արևմտյան հարուստ երկրներում հնարավոր է սա ավելի լուրջ խնդիր է, քան այլ երկրներում: Անչափահասները, երիտասարդ կանայք՝ որպես սեքսուալ օբյեկտներ, ցուցադրվում են գովազդներում, ֆիլմերում և երաժշտական տեսառկայակներում, իսկ դա էլ իր հերթին նպաստում է երեխաների և բավականին երիտասարդ մարմնավաճառների պահանջարկի աճին և սեքս-բիզնեսի զարգացմանը:
- ◆ *Կախվածություն թմրանյութերից, ալկոհոլից, մոլեխաղերից:* Երիտասարդ, թմրամոլները, ալկոհոլից տառապողները կամ խաղամոլները հեշտությամբ են դառնում մարդկանց առևտրի զոհեր՝ անընդհատ արագ գումար վաստակելու հնարավորության ակնկալիքով և անմիջապես ծուղակն են ընկնում, քանի որ նրանց վրա հեշտ է ազդել:

- ◆ *Որոշ խմբերի սոցիալական մեկուսացումը:* Ինչպես անօթևան երեխաները, այնպես էլ այն երեխաները, որոնք հեռացել են մանկատներից և փորձում են ինքնուրույն կյանք սկսել, պատկանում են ռիսկի խմբին, քանի որ նրանք չունեն անհրաժեշտ սոցիալական կապեր և աջակցություն: Կարելի է շատ հեշտությամբ շահել նման երեխաների վստահությունը և չարաշահել այն, եթե նրանք չունեն մշտական բնակավայր և գուրկ են ընտանիքի կամ մեծերի օգնությունից:
- ◆ *Լրացուցիչ դժվարություններ, որոնց հետք բախվում են հեռավոր մարզերում կամ գյուղերում բնակվող երիտասարդները:* Մարզերում կամ գյուղերում ապրող երիտասարդների մեծ մասը չունի շահավետ կապեր բարձր վարձատրվող աշխատանք գտնելու համար:
- ◆ *Ոչ լիարժեք կանխարգելող աշխատանքներ՝ ուղղված մարդկանց առևտրի դեմ, որոնք անցկացվում են ուսումնական հաստատություններում կամ զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ:* Երիտասարդները հաճախ միամիտ են և շատ լավատեսորեն տրամադրված: Երիտասարդները չափից դուրս վստահ են իրենց ուժերի վրա, հավատում են, որ կարող են կառավարել իրենց անգամ նոր և անծանոթ իրավիճակում: Պատահում է, որ երիտասարդները բավականաչափ իրազեկված չեն աշխատանքի հետ կապված այն վտանգների մասին, որոնք պատահում են օտար երկրում՝ առանց օրինական աշխատանքի թույլտվության կամ առանց աշխատանքային պայմանագրի:

**Նյութին ծանոթանալուց հետո** յուրաքանչյուր խումբ կստանա որոշակի քանակությամբ թղթեր, որոնց վրա խմբային քննարկումներից հետո պետք է թվարկել այն հանգամանքները, որոնց պատճառով երիտասարդները դառնում են մարդկանց առևտրի զոհեր: Յուրաքանչյուր հանգամանք անհրաժեշտ է գրել առանձին թղթի վրա: Խմբի յուրաքանչյուր անդամ կստանա թերթիկ, որի վրա գրառված է վերոնշյալ հանգամանքներից մեկը, ապա կփորձի լուծում առաջարկել տվյալ հանգամանքը հաղթահարելու համար՝ հենց նույն թղթի վրա:

Այժմ փոխանակեք թղթերը: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է կարդա, թե ինչ է գրել նախորդ ընկերը, և նա էլ ինչ-որ բան ավելացնի: Թղթերը փոխանցվելու են ձեռքից ձեռք այնքան, մինչև խմբի բոլոր անդամները կարդան և ավելացնեն իրենց կարծիքները: Այնուհետև խմբով քննարկեք ինչպես հանգամանքները, այնպես էլ նրանց հնարավոր լուծումները, որից հետո յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի դասառանին իր առաջադրած հանգամանքը՝ իր լուծումներով:

**Համոզմունքների վերլուծում**

Ինքնուրույն վերլուծեք խնդիրը և հետևություն արեք՝ հանդիսանում է արդյոք երիտասարդությունը մարդկանց վաճառքի ռիսկի խումբ, թե՞ ոչ:

**Աշխատանք 2 խմբերով**

Բաժանվեք 2 խմբի: Գուք կատանաք թերթիկներ, որտեղ գրված են համոզմունքներ թրաֆիքինգի մասին, ուսումնասիրե՛ք աղյուսակը, քննարկե՛ք առաջարկվող հարցերը, լրացրե՛ք սյունակները՝ բերելով կողմ կամ դեմ փաստարկներ՝ ելնելով ձեր խմբի դիրքորոշումից:

1. Թրաֆիքինգը չի վերաբերվում նորմալ մարդկանց: -----
2. Թրաֆիքինգի գոհերը ծագումով գյուղական վայրերից են կամ էլ փախստականներ: -----
3. Թրաֆիքինգի գոհերն իրենք են մեղավոր կատարվածի համար, քանի որ շատ միամիտ են եղել: -----
4. Ե՛վ տղամարդկանց, և՛ կանանց համար միևնույն հնարավորություններն են առկա աշխատանքի շուկայում: -----
5. Ծանոթների կողմից կատարված աշխատանքային առաջարկություններին կարելի է հավատալ: -----
6. Բարձրագույն կրթությամբ մարդիկ չեն դառնում թրաֆիքինգի գոհ: -----
7. Օտար լեզվի տիրապետումն այնքան էլ կարևոր չէ, բավական է իմանալ պարզագույն արտահայտություններ, որոնք օգտագործվում են առօրյա կյանքում: -----
8. Պատճառներից մեկը, որի հիման վրա մարդիկ մեկնում են արտերկիր, գանգվածային լրատվամիջոցներից ստացած սխալ պատկերացումներն են: -----
9. «Գործարար մարդիկ» ամենուրեք են, այնպես որ քեզ կարող են խաբել նույնիսկ հայրենիքում: -----

## **ԴԱՍ 6. «ՎԻԿՏԻՍՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՎԻԿՏԻՄ ՎԱՐՔ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### ***Աշխատանք խմբերով***

Բաժանվեք խմբերի (4 կամ 5): Խմբով ընթերցե՛ք և քննարկե՛ք դասանյութի «Վիկտիմություն» և «վիկտիմ վարք» հասկացությունների ենթաբաժինը:

### ***«Վիկտիմություն» և «վիկտիմ վարք» հասկացությունները:***

«Վիկտիմություն» հասկացությունը նշանակում է այնպիսի վարք, որի դեպքում համեմատաբար հեշտ են դառնում հանցագործության գոհ կամ հանդես են բերում անկարողություն խուսափելու այնպիսի վտանգից, որից օբյեկտիվորեն կարելի էր խուսափել: Վիկտիմությունը մարդու կողմից ձեռքբերված ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական այնպիսի հատկանիշներն են, որոնց արդյունքում մարդը կարող է հանցագործության գոհ դառնալ:

Վիկտիմություն բառը ծագել է լատիներեն victima բառից, որը նշանակում է գոհ:

**Վիկտիմ վարքը դա մարդու այն վարքագիծն է, որը դրդապատճառ է հանդիսանում իր նկատմամբ հանցագործություն կատարելու, այսինքն այն վարքագիծը, որի ընթացքում անձն իրեն վտանգի է ենթարկում (հաճախ ոչ գիտակցաբար):** Օրինակ՝ կարմիր լույսի տակ կամ չթույլատրված վայրերում փողոցը հատող հետիոտնը վիկտիմ վարք է հանդես բերում, մեծացնելով իր վրաների գոհ դառնալու հավանականությունը:

Անհատական վիկտիմություն ասելով հասկանում ենք անձի ընդունակությունը ձևավորել կամ ակտիվորեն ազդել այնպիսի նպաստավոր պայմանների ստեղծմանը, որոնք բերում են հանցագործության: Օրինակ՝ երեկոյան փողոցով քայլելիս վիկտիմ վարք հանդես բերող մարդը ոչ թե խուսափում է ակնհայտ հարբած (օրորվելով քայլող ու քթի տակ հայիոյական խոսքեր ասող) մարդուց, այլ սկսում է «հասկացնել» նրան, որ փողոցում չի կարելի նման խոսքեր ասել: Որպես կանոն, հարբած մարդուն նման «բարոյախոսությունը» դուր չի գալիս, և նա կարող է դիմել անգամ դանակի օգնությամբ:

Առանձնացվում են վիկտիմության հետևյալ տարատեսակները.

ա) *տիպիկ վիկտրինություն*՝ որպես մարդկանց հարաբերական «հակավածություն» հանցագործության տեսակներից մեկին՝ բռնաբարված, խաբված, կողոպտված լինելու խաբեբաների կողմից,

բ) *մասսայական վիկտրինություն*՝ որպես գոյություն ունեցող իրական հնարավորություն բնակչության որոշակի զանգվածի համար իրենց սուբյեկտիվ հատկանիշներին համապատասխան ֆիզիկական, հոգեբանական և նյութական վնաս կրել հանցագործությունների հետևանքով: Վիկտրինությունը կարելի է գնահատել նաև այլ չափանիշներով՝ օրինակ, տուժողի մասնագիտական պատկանելիությամբ. գանձապահների, ինկասատորների, ոստիկանության աշխատողների վիկտրինություն: Նման վիկտրինությունն անվանում են *խաբսյին*: Վիկտրինությունը դեռ չի նշանակում, որ տուժածի վարքագիծն անբարոյական է կամ անօրինական, այլ դա կարելի է բնութագրել որպես անձին բնորոշ հատկանիշներ, որոնք գրեթե միշտ բացասական են: Օրինակ՝ մարդը կարող է հանցագործության գոհ դառնալ իր չափից դուրս վստահության հետևանքով՝ կախված տարիքի (փոքրահասակներ), մասնագիտության (ոստիկան, պահակ և այլն) հետ, որը դեռևս չի խոսում տուժածի ոչ պատշաճ վարքագծի կամ բացասական կողմերի մասին:

*Մարդու վարքագիծը բնությունից օժտված կարող է լինել վիկտրին, այսինքն՝ ռիսկային, անզգույշ, թեթևամիտ, չմտածված, պրովոկացիոն կամ իր համար շարժվումներ հարկանիշներով:*

Ըստ հանգամանքների առանձնացնում են վիկտիմ վարքի երկու տեսակ՝

1. ճարահատյալ վիկտիմ վարք. օր.՝ մարդու մոտ սրտի նուպա է և այդ պահին նրան ավելի հեշտ է կողոպտել: Կամ՝ մարդը նյութական շատ ծանր պայմաններում է և այդ պահին ավելի մեծ հավանակությամբ կարող է համաձայնել գայթակղիչ առաջարկներին ու դառնալ թրաֆիքինգի գոհ,

2. վիկտիմ վարքի շարժառիթ. օր.՝ մարդը չարաշահել է ալկոհոլը և ծայրաստիճան հարբած վիճակում նրան հեշտ է կողոպտել: Կամ՝ մարդը վիրավորված է հարազատներից ու թեև գիտակցում է, որ իր հետ կարող են վատ վարվել, բայց կարծես հարազատներին «պատժելու կամ ինչ-որ բան հասկացնելու» համար համաձայնում է շահագործվել:

**Շատ հանցագործություններ, այդ թվում՝ թրաֆիքինգը, որպես կանոն, կատարվում են տուժածի վիկտիմ վարքի հետևանքով. հոգեբանական և ֆիզիկական վիճակի ոչ ադեկվատ գործողություններից ելնելով, իր և այլ անձանց նկատմամբ թեթևամիտ և անզգույշ վերաբերմունքի**

(պատվի և արժանապատվության, ինչպես նաև ունեցվածքի նկատմամբ), իրավապահ մարմինների հետ համագործակցելու ցանկություն չունենալու, անօրինական գործարքների մեջ մտնելու, անմտածված վերաբերմունք ցուցաբերելու պատճառով:

Այսինքն, շատ հանցագործություններ կարող էին և չկատարվել, եթե զոհը ցուցաբերեր զգուշություն և պատրաստ լիներ հանձն առնել գործողություններ վտանգը կամ հանցագործությունը կանխարգելելու համար:

**Ընթերցելու ընթացքում նշումներ կատարեք՝ օգտագործելով հետևյալ նշանները.**

- V հաստատում է իմ իմացածը (գիտեմ)
- + նոր տեղեկատվություն է (չգիտեմ)
- իմացածին հակասում է
- ? անհասկանալի է
- ! հետաքրքիր է, կարելի է քննարկել

Անհատական աշխատանքն ավարտելուց հետո խմբով քննարկեք ձեր գրառումները և նշեք աղյուսակի համապատասխան սյունակում՝ դասակարգելով ձեր գիտելիքները:

V	+	-	?	!

**Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր կազմած աղյուսակը:**

Թրաֆիքինգի պոտենցիալ զոհերին հավաքագրելիս վիկտիմ վարք հանդես բերելու հիմնական ձևերն ու միջոցները հետևյալն են.

- ◆ Ծանոթներին ու պատահական մարդկանց առանց բավարար հիմքերի հավատալը:
- ◆ Արտերկրում աշխատանքի տեղավորելու հայտարարություններին առանց բավարար հիմքերի հավատալը:
- ◆ Ամուսնական հայտարարություններին հավատալն առանց փոքր-ինչ կասկածի:

- ◆ Ինտերնետում տեղավորված հայտարարություններին առանց բավարար հիմքերի հավատալը:

***Աշխատանք խմբերով***

Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի վերոհիշյալ թեմաներից մեկը, որի շուրջ ձեզ հանձնարարվում է հորինել և ներկայացնել մի պատմություն կամ իրավիճակ: Մտածեք նաև, թե ինչ կարգախոսով կամփոփեք ձեր կողմից հորինված պատմությունն այդ իրավիճակում չհայտնվելու համար:

**ԳԼՍ 7. ՄԱՐԳԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՏԻՔԻՆԳԻ) ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ**

***Աշխատանք խմբերով***

Բաժանվե՛ք խմբերի (5 կամ 6): Խմբով ընթերցե՛ք և քննարկե՛ք դասանյութի «Մարդկանց շահագործման դեպքերի նկարագրություններ» ենթաբաժինը: Նախ անհատապես, ապա խմբային քննարկման արդյունքում որոշե՛ք, թե ինչ է հարկավոր իմանալ, նախապես ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել նման անցանկալի իրավիճակում չհայտնվելու, դրանից խուսափելու համար:

**Մարդկանց շահագործման դեպքերի նկարագրություններ**

***Ընթերցում և քննարկում է առաջին խումբը:***

Հեռավոր լեռնային գյուղում բնակվող մի տղամարդ, որն աշխատում է արտասահմանում, իր 16-ամյա համագյուղացուն առաջարկում է թողնել դպրոցն ու իր հետ մեկնել արտագնա աշխատանքի: Տղան համաձայնում և արտասահմանում աշխատանքի է անցնում մի մասնավոր գործարանում: Մի քանի շաբաթ անցնելուց հետո տղան հասկանում է, որ իրեն չեն պատրաստվում վարձատրել: Երբ տղան ցանկանում է թողնել աշխատանքը և հեռանալ, հրացանով զինված պահակը նրան արգելում է՝ ասելով, որ նրա համար գործարանատերը մեծ գումար է վճարել, և նա կարող է հեռանալ գումարը վերադարձնելուց հետո միայն: Մեկ տարի է անցել, բայց տղան դեռևս աշխատում է այդ պայմաններում...

### ***Ընթերցում և քննարկում է երկրորդ խումբը:***

Բարձր առաջադիմություն ունեցող մի ուսանողուհի երազում էր ուսումը շարունակել արտասահմանյան հեղինակավոր ուսումնական հաստատություններից մեկում: Աղջկա ծնողները չունեին բավարար միջոցներ իրենց դստեր կրթությունն արտասահմանում ապահովելու համար: Աղջկա ծանոթներից մեկը, որն աշխատում էր արտասահմանում և շատ հարուստ մարդ էր, առաջարկում է նրան իր հետ մեկնել արտասահման: Աղջիկն ընդունում է առաջարկը, իսկ այդ անձնավորությունը նրան արտասահմանում ստիպում է զբաղվել մարմնավաճառությամբ...

### ***Ընթերցում և քննարկում է երրորդ խումբը:***

Աղջիկը մատուցողուհի էր աշխատում սրճարաններից մեկում: Երբ սրճարանը փակվում է, աղջկան փողոցում հանդիպում է սրճարանի մշտական հաճախորդներից մեկը և առաջարկում է գնալ Դուբայ. այնտեղ շատ աշխատանք կա սրճարաններում, ռեստորաններում և բավականին լավ վարձատրությամբ: Աղջիկը համաձայնվում է: Այդ կնոջ տանը նա հանդիպում է մեկ այլ կնոջ: Վերջինս բացատրում է, որ ավելի հեշտ է կանանց խմբով տանել: Նա վճարում է աղջկա տոմսի գումարը և 200 դոլար էլ տալիս է, որպեսզի աղջիկը թողնի ընտանիքի անդամներին: Դուբայի օդանավակայանից կանանց տանում են փոքրիկ հյուրանոց և հրահանգում պատրաստ լինել հաճախորդներ ընդունելու: Աղջիկը, լսելով «հաճախորդ» բառը, շատ է զարմանում. նրան ասել էին, որ պետք է մատուցողուհի աշխատի: Հաջորդ օրը «կազմակերպիչ» կինը գալիս է մի արաբի ուղեկցությամբ: Պարզվում է, որ կանանց վաճառել են այդ արաբին, ու եթե կանայք չանեն այն, ինչ նա ասեր, նա կարող էր նրանց հետ վարվել ինչպես կամենար: Դա նրա երկիրն էր, և բոլորը կհավատային նախ և առաջ նրան, իսկ ոստիկանությունն ու էմիգրացիոն պաշտոնյաները բողոքներ չէին ընդունի: Այդ օրվանից սկսվեց աղջկա թշվառ կյանքը ...

### ***Ընթերցում և քննարկում է չորրորդ խումբը:***

Ամուսնու մահից հետո կինը մնում է մենակ չորս երեխաների հետ: Նա չէր կարողանում աշխատանք գտնել Հայաստանում: Հարևանուհին, որը նույնպես աշխատանք էր փնտրում, տեղեկացնում է, որ իր ծանոթներից շատերն աշխատանք են գտել Թուրքիայում՝ ավտոբուսային գործակալների միջոցով: Նրանք միասին հասնում են Թուրքիա,



մտնում գործակալություն, որտեղ նրանց արդեն սպասում էր մի մարդ: Վերջինս նրանց գործ է առաջարկում իր գործարանի ճաշարանում՝ շաբաթական 200 դոլար վարձավճարով՝ օրական 10 ժամ աշխատանքի դիմաց: Երբ շաբաթն անցնում է, կանայք խնդրում են իրենց վարձատրել, բայց գործատերն ասում է, որ նրանք պետք է ավելի շատ աշխատեն, և պետք է վերանայի նախնական պայմանավորվածությունը: Մեկ շաբաթ ևս կանայք աշխատում են առանց վճարի...: Երկրորդ ամսվա վերջում, բազմաթիվ խնդրանքներից հետո, այդ մարդը վճարում է 100 դոլար: Ավելի ուշ, երբ կինը նորից է խոսակցություն բացում վարձատրության մասին (Երևանից նրան զանգել և տեղեկացրել էին, որ իր տղան հիվանդ է, և բուժման համար գումար է պետք), գործատերը սպառնում է էմիգրացիոն ոստիկանությանը հայտնել կնոջ ժամկետանց վիզայի մասին...

### ***Ընթերցում և քննարկում է հինգերորդ խումբը:***

Երիտասարդ ընկերները երկար ժամանակ աշխատանք էին փնտրում: Վերջապես նրանցից մեկը թերթում Իսպանիայում աշխատելու բավականին գրավիչ առաջարկի վերաբերյալ հայտարարություն է կարդում:

Հայտարարությունը թերթում գետեղած գործակալության միջոցով նրանք հասնում են Իսպանիա: Երիտասարդներին անմիջապես տանում են ֆերմա՝ նարինջ հավաքելու: Առաջին իսկ օրը նրանց հետ պայմանագիր են կնքում: Այն գրված է լինում օտար լեզվով, երիտասարդները ոչինչ չեն հասկանում և, միայն կռահելով աշխատավարձի չափը՝ 250 եվրո, ստորագրում են: Հաջորդ օրվանից սկսվում է նրանց տաժանակիր աշխատանքը: Տղաներն աշխատում և ապրում էին աննկարագրելի ծանր պայմաններում: Նրանք օրական աշխատում էին 12-15 ժամ և աշխատավարձ կարող էին ստանալ, եթե կատարում էին օրվա նորման՝ 27 արկղ նարինջ: Նրանք ապրում էին կիսաքանդ, առանց պատուհանների խոնավ սենյակում, որտեղ չկար պահարան, աթոռ, սանհանգույց: Ընդհանուր լուգարանից օգտվելու համար հարկ էր ժամերով հերթ կանգնել: Գործակալությունում նրանց խոստացել էին, որ երիտասարդներն արագ կհարստանան, բայց երիտասարդների մտքով չէր էլ անցնում, որ այդ պայմաններում աշխատելով նրանք արագ ուժասպառ կլինեն և դժվար թե կարողանան գոնե տուն վերադարձի համար գումար վաստակել...

**Ընթերցում և քննարկում է վեցերորդ խումբը:**

Քաղաքացի Կ.-ն գտնվում էր X երկրում ապօրինի (նրա մուտքի բույլտվության ժամկետը լրացել էր), սակայն չէր ցանկանում վերադառնալ ՀՀ, քանի որ հիվանդ կնոջ վիրահատության համար ցանկանում էր գումար վաստակել: Նա դիմում է իր ծանոթներին, խնդրելով իր հետ տվյալ երկիր եկած իր անչափահաս տղային իրենց հետ տանել ՀՀ, որպեսզի ինքը հնարավորություն ունենա աշխատանք գտնելու: Ծանոթները, չարաշահելով Կ.-ի խոցելի վիճակը, նրա անչափահաս տղային հանձնեցին «բարեգութ» մի ընտանիքի համարյա որպես ստրուկ աշխատացնելու համար:

**Խմբերով աշխատանքը շարունակվում է**

Քննարկման արդյունքները գրե՛ք հետևյալ ձևանմուշում (ձևանմուշը գծե՛ք թղթի վրա կամ ձեր տետրերում, կարող եք առաջարկել նաև այլ տարբերակներ):

<p>Ի՞նչ պետք է իմանալ կամ նախապես ի՞նչ քայլեր են անհրաժեշտ ձեռնարկել <b><i>նման անցանկալի իրավիճակում չհայտնվելու, դրանից խուսափելու համար.</i></b></p> <p>1. ----- ----- -----</p> <p>2. ----- ----- -----</p>
---

**Աշխատանք ողջ դասարանով**

Խմբային աշխատանքից հետո դասարանին ներկայացրե՛ք ուսումնասիրած ***կոնկրետ դեպքի վերաբերյալ*** ձեր տարբերակը: Ուշադիր լսե՛ք միմյանց, հարցեր տվե՛ք ու առաջարկություններ արե՛ք: Քննարկմանը զուգահեռ, ուսուցչի օգնությամբ, թրաֆիքինգի կանխարգելման վերաբերյալ բոլոր հնչեցված տարբերակները գրանցե՛ք գրատախտակին:

### **Անհատական աշխատանք**

Ընթերցե՛ք և ուսումնասիրե՛ք «Ինչպե՞ս խուսափել մարդկանց շահագործումից. գործնական խորհուրդներ» դասանյութը: Տեսրում նշումներ արե՛ք. քննարկված կոնկրետ դեպքերի համար լրացուցիչ ի՞նչ խորհուրդների հանդիպեցի՞ք, ի՞նչ նոր խորհուրդներ ընթերցեցի՞ք, ո՞ր խորհուրդը ձեզ ամենից շատ դուր եկավ:

### **Ինչպե՞ս խուսափել մարդկանց շահագործումից. գործնական խորհուրդներ**

- ◆ Խուսափեք պատահական կամ ծանոթ մարդկանց՝ արտասահմանում աշխատելու, սովորելու, ամուսնության գայթակղիչ առաջարկներից: Ոչ մի դեպքում մի՛ վստահեք նրանց ձեր փաստաթղթերը: Արագ, հեշտ և մեծ գումար վաստակելը, որպես կանոն, իրականությանը չի համապատասխանում: Ավելի ռեալ մտածե՛ք:
- ◆ Անմիջապես ընդառաջ մի՛ գնացեք արտասահմանում աշխատանքի տեղավորման, ուսուցման կազմակերպման, ամուսնության վերաբերյալ քաղաքի (գյուղի) ամենատարբեր վայրերում փակցված, թերթերում, համացանցում տեղադրված *հայրասրարությունների*: Դրանք ճշգրտման և հստակեցման կարիք ունեն:
- ◆ Մանրամասն հետաքրքրվեք հրավիրող արտասահմանյան ֆիրմաների և տեղում աշխատանքն իրականացնող միջնորդ գործակալությունների (տուրիստական, ամուսնական, աշխատանքային, ուսումնական) օրինական գործունեության մասին:
- ◆ Համացանցում գտե՛ք հրավիրող ֆիրմայի տնային հասցեն, խորհրդակցեք մարդկանց շահագործման դեմ պայքարի հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ<sup>2</sup>:
- ◆ Արտասահմանում ոչ մեկից կասկածելի նվերներ մի՛ վերցրեք: Կարիք չկա որևէ մեկի նկատմամբ պարտավորվածություն ունենալ:

<sup>2</sup> Տե՛ս հավելվածում:

### Եթե դուք պատրաստվում եք մեկնել արտասահման.

- ◆ Ոչ ոքի մի՛ վստահեք ձեր անձնագիրը: Ձեր անձը հաստատող փաստաթղթերը միշտ պետք է գտնվեն միայն ձեզ մոտ:
- ◆ Ձեր հարազատներին և ընկերներին մանրամասն տեղեկություններ թողեք արտասահմանում ձեր կանգ առած վայրի մասին (հասցե, հեռախոսահամարներ), մանրամասն տեղեկություններ գործատուի մասին, ձեր արտասահմանյան ընկերների հասցեները:
- ◆ Հարազատների հետ պայմանավորվեք, թե ձեր մասին կոնկրետ երբ և ինչպես եք տեղեկություններ հայտնելու: Մշտապես կապ պահպանեք հարազատների հետ:
- ◆ Թողեք տանը ձեր անձնագրի և պայմանագրի կրկնօրինակները, ձեր վերջին լուսանկարը: Անձնագրի լուսապատճենը տարեք ձեզ հետ, պահեք անձնագրից առանձին, որպեսզի անձնագիրը կորցրնելու դեպքում հեշտ լինի այն վերականգնելը:
- ◆ Ձեզ մոտ ունեցեք արտասահմանում հայկական դեսպանատների և հյուպատոսությունների հասցեներն ու հեռախոսահամարները<sup>3</sup>: Եթե դուք դժվար իրավիճակում եք հայտնվել կամ ձեզ ինչ-որ մեկը սպառնում է, դիմեք Հայաստանի ներկայացուցիչներին, ինչպես նաև տեղի ոստիկանական ծառայություններին:
- ◆ Արտասահմանյան երկրներում ակտիվորեն աշխատում են հասարակական կազմակերպություններ և ծառայություններ, որոնք ծանր իրավիճակում հայտնված մարդկանց օգնության են հասնում: Նախապես ճշտեք նրանց հասցեները:
- ◆ Օտարերկրյա պետության տարածքում ձեր գտնվելու ժամկետը նշված է ձեր վիզայում: Վիզային ռեժիմի խախտումն անհնար կդարձնի արտասահման մեկնելու ձեր հաջորդ փորձը:
- ◆ Մի՛ մոռացեք, որ օտար լեզվի թեկուզ տարրական բառերի իմացությունը զգալիորեն կթեթևացնի արտասահմանում ձեր գտնվելը և ծանր պահին կփրկի ձեզ:

<sup>3</sup> Տես հավելվածում:

**Եթե դուք պատրաստվում եք պայմանագիր կնքել արտասահմանում աշխատելու կամ սովորելու նպատակով.**

- ◆ Եթե դուք պատրաստվում եք աշխատել կամ սովորել արտերկրում, պայմանագիրը կնքե՞ք Հայաստանում, այլ ոչ թե արտասահմանյան երկիր գնալուց հետո:
- ◆ Հոգացեք այն մասին, որ պայմանագիրը կազմված լինի ձեր մայրենի և կամ էլ ձեզ հասկանալի լեզվով, որպեսզի դուք հասկանաք աշխատանքի բոլոր մանրամասներն ու պայմանները:
- ◆ Անմիջապես մի ստորագրեք պայմանագիրը: Այն վերցրեք ձեզ հետ, հանգիստ պայմաններում վերընթերցեք, ցույց տվեք մասնագետներին:
- ◆ Պահանջե՞ք, որպեսզի ձեր ապագա աշխատանքի (ուսման) պայմանները, տեղը, ժամանակը, աշխատավարձի չափը հստակ ձևակերպված լինեն:
- ◆ Եթե պայմանագրի պահանջները ձեզ չեն բավարարում, մի՛ ստորագրեք:
- ◆ Ուշադիր եղեք, որ պայմանագիրը ստորագրված լինի ֆիրմայի տնօրենի, պրեզիդենտի կողմից: Իսկ եթե այն ստորագրված է պաշտոնակատարի՝ փոխտնօրենի, փոխպրեզիդենտի կամ մեկ այլ անձի կողմից, պահանջե՞ք, որպեսզի ձեզ տրամադրեն պայմանագիր կնքելու իրավասությունները հաստատող փաստաթղթեր՝ տնօրենի կամ պրեզիդենտի հրաման, վստահագիր (նոտարի հաստատմամբ, կնիքի առկայությամբ):
- ◆ Ստորագրված պայմանագիրը պատճենահանե՞ք (ցանկալի է բոլոր փաստաթղթերը) և թողեք հարազատների, մտերիմների մոտ:

***Աշխատանք ողջ դասարանով***

Ձեր ուսումնասիրությունների արդյունքները, կարծիքները ներկայացրեք ուսուցչին ու դասընկերներին, լսեք նրանց կարծիքները:

## ԴԱՍ 8. ՄԱՐԳԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ՉՈՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

### *Առաջադրանք*

Խորհե՛ք հետևյալ դատողության շուրջ:

*«Մարդն ինքն է որոշում և ընկրում գումար վաստակելու (կրթություն ստանալու) ճանապարհը, հեղուաբար հեղուկանքների համար միայն ինքն է պատասխանատու»:*

Արտահայտե՛ք ձեր կարծիքը, ունկնդրե՛ք ձեր ընկերներին:

### *Աշխատանք խմբերով*

Բաժանվե՛ք 4 խմբի: Խմբով ընթերցե՛ք դասանյութի «Թրաֆիքինգի հետևանքները» ենթաբաժինը: Քննարկե՛ք, թե ինչպիսի դժվարությունների մասին է խոսքը գնում կոնկրետ նյութում, և անհրաժեշտության դեպքում տետրում նշումներ արե՛ք:

### *Ընթերցում և քննարկում է առաջին խումբը:*

**Թրաֆիքինգի հետևանքները:** Որպեսզի հասկանանք, թե ինչպես է հարկավոր օգնել թրաֆիքինգի զոհերին, որպեսզի անհրաժեշտ օգնությունն արդյունավետ լինի, հարկավոր է նախ պարզել, թե ինչ հետևանքներ է թողում թրաֆիքինգը զոհերի վրա, թե հատկապես ինչ են ապրել ու զգացել մարդկանց շահագործման զոհերը, ինչպիսին են նրանց կարիքները:

Թրաֆիքինգի հետևանքները մարդկանց առևտրի զոհերի համար **միշտ էլ բացասական են:** Անգամ, եթե զոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: *Մինչև քննականն կյանքի անցնելը թրաֆիքինգի զոհերը պետք է վերականգնվեն նվաստացումից, անկարբեր վերաբերմունքից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից:*

Տուն վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը հաճախ բախվում են *սոցիալ-տնտեսական, առողջական, հոգեբանական, կյանքի անվտանգության և իրավական բնույթի բարդ ու անլուծելի թվացող խնդիրների* հետ:

Նրանք ունենում են տարաբնույթ և բարդ սոցիալ-տնտեսական

խնդիրներ: Շատերը աշխատելու, սովորելու և այլ առաջարկներով արտասահման գնալուց առաջ կան դուրս են գալիս իրենց բնակության վայրի գրանցումից, կան արտասահմանում կորցնում են (հավաքագրողները հետ չեն տալիս) փաստաթղթերը: Ոմանք էլ վաճառում են իրենց բնակարանները, որպեսզի ինքնաթիռի տոմսի, արտասահմանում տեղավորվելու և որոշ ժամանակ ապրելու, շահավետ գործարքներ կնքելու, համատեղ բիզնես ստեղծելու գայթակղիչ առաջարկների համար գումար ունենան: Վերադառնալով հայրենիք՝ նրանք հաճախ համալրում են գործազուրկների շարքերը: Չունենալով որոշակի մասնագիտություն և կրթություն՝ թրաֆիքինգի զոհերը բախվում են աշխատանք որոնելու անվերջ խնդրին: Նրանք սովորաբար խոշոր պարտքեր են ունենում: Չունենալով աշխատանք և աջակցություն, նրանց պարտքերը գնալով մեծանում են: Շրջապատը նման մարդկանց, որպես կանոն, անվստահությամբ է վերաբերվում ...

### ***Ընթերցում և քննարկում է երկրորդ խումբը:***

***Թրաֆիքինգի հեղևանքները:*** Որպեսզի հասկանանք, թե ինչպես է հարկավոր օգնել թրաֆիքինգի զոհերին, որպեսզի անհրաժեշտ օգնությունն արդյունավետ լինի, հարկավոր է նախ պարզել, թե ինչ հետևանքներ է թողում թրաֆիքինգը զոհերի վրա, թե հատկապես ինչ են ապրել ու զգացել մարդկանց շահագործման զոհերը, ինչպիսին են նրանց կարիքները:

Թրաֆիքինգի հետևանքները մարդկանց առևտրի զոհերի համար ***միշտ էլ բացասական են:*** Անգամ, եթե զոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: *Մինչև բնականոն կյանքի անցնելը թրաֆիքինգի զոհերը պետք է վերականգնվեն նվաստացումից, անիրարբեր վերաբերմունքից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից:*

Տուն վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը հաճախ բախվում են *սոցիալ-տնտեսական, առողջական, հոգեբանական, կյանքի անվտանգության և իրավական բնույթի բարդ ու անլուծելի թվացող խնդիրների* հետ:

Թրաֆիքինգի զոհերը հաճախ վախենում ու տագնապում են իրենց և իրենց հարազատների կյանքի ու անվտանգության համար: Զիչ չեն դեպքերը, երբ հավաքագրողները, հանցավոր խմբերը սպառնում են զոհի հետ հաշվեհարդար տեսնել՝ սպանել նրան, նրա հարազատներին, առևանգել երեխաներին, սպառնում են տուժողին կամ նրա մեր-

ձավորներին արատավորող տեղեկություններ տարածել, նրանց գույքը ոչնչացնել կամ վնասել: Օրինակ՝ պատմել հարազատներին, շրջապատին, թե իրականում ինչով են զբաղվել թրաֆիքինգի գոհ մարմնավաճառ կանայք, եթե վերջիններս դիմեն իրավապահ մարմիններին: Հանդիպում են նաև դեպքեր, երբ թրաֆիքինգի գոհերը վրեժ լուծելու կամ հանցագործներին ինքնուրույն պատժելու նպատակով իրենք են հենց հանցագործ դառնում: Այս առումով նրանք սեփական և հարազատների կյանքի պաշտպանության և իրավական խորհրդատվական օգնության և տեղեկատվության կարիք ունեն (հատկապես իրենց իրավունքների վերաբերյալ, ընդ որում՝ այնպիսի լեզվով, որը հասկանալի է նրանց):

### ***Ընկերցում և քննարկում է երրորդ խումբը:***

***Թրաֆիքինգի հեղանակները:*** Որպեսզի հասկանանք, թե ինչպես է հարկավոր օգնել թրաֆիքինգի գոհերին, որպեսզի անհրաժեշտ օգնությունն արդյունավետ լինի, հարկավոր է նախ պարզել, թե ինչ հետևանքներ է թողում թրաֆիքինգը գոհերի վրա, թե հատկապես ինչ են ապրել ու զգացել մարդկանց շահագործման գոհերը, ինչպիսին են նրանց կարիքները:

Թրաֆիքինգի հետևանքները մարդկանց առևտրի գոհերի համար ***միշտ էլ բացասական են:*** Անգամ, եթե գոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: Մինչև բնականոն կյանքի անցնելը թրաֆիքինգի գոհերը պետք է վերականգնվեն նվաստացումից, անտարբեր վերաբերմունքից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից:

Տուն վերադառնալուց հետո թրաֆիքինգի գոհերը հաճախ բախվում են *սոցիալ-տնտեսական, առողջական, հոգեբանական, կյանքի անվտանգության և իրավական բնույթի բարդ ու անլուծելի թվացող խնդիրների* հետ:

Թրաֆիքինգի գոհերը հաճախ ունենում են առողջության հետ կապված լուրջ խնդիրներ: Աշխատելով և ապրելով խիտ բնակեցված շինություններում և հակահիգիենիկ պայմաններում՝ նրանք հեշտությամբ վարակվում են ինֆեկցիոն հիվանդություններով: Մշտական կիսաքաղց վիճակը հանգեցնում է մարսողության խնդիրների, ստամոքսի խոցերի, քափվում են ատամները: Ծանր ու երկարատև աշխատանքն առաջացնում է սիրտ-անոթային համակարգի, ողնաշարի հիվանդություններ: Հաճախ, ենթարկվելով բռնության ու ծեծի՝ ունենում են ներքին օրգան-



ների վնասվածքներ: Այս տեսակետից հատկապես տուժում են մարմնավաճառները, որոնց «ապրանքային» տեսքը չվնասելու համար հարվածում են մարմնի հենց այն մասերին, որտեղ գտնվում են ներքին օրգանները: Հաճախ սեռական բռնության զոհերը տառապում են սեռական ճանապարհով փոխանցվող անբուժելի հիվանդություններով (ՄԻԱՎ/ՉԻԱՀ):

### ***Ընթերցում և քննարկում է չորրորդ խումբը:***

**Թրաֆիքինգի հետևանքները:** Որպեսզի հասկանանք, թե ինչպես է հարկավոր օգնել թրաֆիքինգի զոհերին, որպեսզի անհրաժեշտ օգնությունն արդյունավետ լինի, հարկավոր է նախ պարզել, թե ինչ հետևանքներ է թողում թրաֆիքինգը զոհերի վրա, թե հատկապես ինչ են ապրել ու զգացել մարդկանց շահագործման զոհերը, ինչպիսին են նրանց կարիքները:

Թրաֆիքինգի հետևանքները մարդկանց առևտրի զոհերի համար **միշտ էլ բացասական են:** Անգամ, եթե զոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: *Մինչև բնականոն կյանքի անցնելը թրաֆիքինգի զոհերը պետք է վերականգնվեն նվաստացումից, անկարբեր վերաբերմունքից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից:*

Տուն վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը հաճախ բախվում են *սոցիալ-տնտեսական, առողջական, հոգեբանական, կյանքի անվտանգության և իրավական բնույթի բարդ ու անլուծելի թվացող խնդիրների* հետ:

Բավականին լուրջ են թրաֆիքինգի զոհերի հոգեբանական խնդիրները: Հաճախ նկատվում են հասարակության մեջ նրանց մեկուսացվածության, շրջապատից փախչելու դեպքեր, նրանք չեն ցանկանում խոսել իրենց հետ պատահածի մասին կամ էլ ստում են ու ձևանում, կարծես թե ոչինչ չի եղել: Թրաֆիքինգի շատ զոհեր ապրում են մշտական վախի ու սարսափի մեջ, որ ինչ-որ մեկն իրենց նկատմամբ բռնություն կցուցաբերի, նրանք չեն կարողանում թուլանալ և հանգստանալ, անվտանգությամբ են վերաբերվում մյուս մարդկանց: Քիչ չեն դեպքերը, երբ նրանք ընկնում են դեպրեսիայի մեջ, նրանց հանգիստ չի տալիս կյանքին վերջ տալու միտքը: Թրաֆիքինգի զոհերի մեջ հաճախ են հանդիպում ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ կատարած անձինք:

### ***Ընթերցում են բոլորը***

**Պաշտպանություն և աջակցություն թրաֆիքինգի զոհերին:** Առավել բարդ են այն դեպքերը, երբ մարդկանց առևտրի զոհը զգում է ոչ միայն, օրինակ, սոցիալ-տնտեսական դժվարություններ, այլև բացասական հետևանքներ, որոնք անդրադառնում են նաև նրա ֆիզիկական և հոգեկան առողջության վրա:

Հենց սա նկատի ունենալով՝ թրաֆիքինգի ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգն օգնության կազմակերպման արդյունավետությունը մեծապես պայմանավորում է *վերը նշված ոլորտների մասնագետների, տարբեր շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների համատեղ աշխատանքով և համագործակցությամբ:*

Ինչպես վերը նշվեց, թրաֆիքինգից տուժած մարդիկ, վերադառնալով տուն, բախվում են բազմաթիվ խնդիրների, ունենում են շատ դժվարություններ: Ավելին, համապատասխան աջակցության և հնարավորությունների բացակայությունը բերում է նրան, որ նրանցից ոմանք նորից են ենթարկվում բռնության և շահագործման, կրկին ընկնում են թրաֆիքինգի շրջապտույտի մեջ: Եվ շրջանը կրկնվում է նորից ու նորից:

Մրանով պայմանավորված էլ առաջնահերթ խնդիր է դառնում թրաֆիքինգի զոհերի վերականգնողական և վերասոցիալականացմանն ուղղված ծառայությունների ու ծրագրերի ստեղծումն ու նրանց գործունեության զարգացումը, որոնք կգործեն կամավորության և գաղտնիության սկզբունքներով:

Որպես ուղենիշ ունենալով կարևոր այն սկզբունքը, որ թրաֆիքինգից տուժած *անձինք կարիք ունեն ըմբռնման և կարեկցանքի և ոչ մի դեպքում չպետք է դատարարվեն կամ հետապնդվեն*, ծրագրերը և ծառայությունները պետք է առաջնորդվեն ***տրամաբանորեն ուղղորդվող և իրար հաջորդող գործողությունների հեղեղյալ շղթայով՝***

- ◆ թրաֆիքինգի զոհի հայրենիք վերադարձի կազմակերպում, դիմավորում օդանավակայանում, անհրաժեշտության դեպքում՝ տուժածի ուղեկցում ողջ ուղևորության ընթացքում,
- ◆ անձի պաշտպանության ապահովում,
- ◆ սոցիալական, հոգեբանական, բժշկական օգնության կազմակերպում,
- ◆ իրավական օգնություն,
- ◆ փաստաթղթերի վերականգնում,

- ◆ օգնություն կրթական հաստատությունում (դպրոց, բուհ) վերականգնվելու և ուսումը շարունակելու համար,
- ◆ մասնագիտական հմտությունների ուսուցում կամ նոր մասնագիտություն ձեռք բերելու օգնություն,
- ◆ օգնություն գոհին՝ վերադառնալու աշխատաշուկա,
- ◆ այլ օգնություն՝ պայմանավորված անձի անհատական պահաջմունքներով:

**Աշխատանք խմբերով**

Խմբով ուսումնասիրե՛ք աղյուսակը, քննարկե՛ք առաջարկվող հարցերը: (Օգտագործե՛ք այս ոլորտի ձեր գիտելիքները, օգտվե՛ք ձեռնարկից, հավելվածից): Մեծ թղթի վրա գծեք, լրացրե՛ք աղյուսակը, ստեղծե՛ք թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման պատասխան:

**Աղյուսակ 1. Ուսումնասիրում և լրացնում է առաջին խումբը**

Խնդիր, որ ունենում է թրաֆիքինգի գոհը	Գժվարություններ	Օգնության և աջակցության պատասխանատուներ (անձինք, ոլորտներ, կազմակերպություններ)	Առաջարկություններ, նկատառումներ
Հոգեբանական	----- ----- -----	----- ----- -----	----- ----- -----

**Աղյուսակ 2. Ուսումնասիրում և լրացնում է երկրորդ խումբը**

Խնդիր, որ ունենում է թրաֆիքինգի գոհը	Գժվարություններ	Օգնության և աջակցության պատասխանատուներ (անձինք, ոլորտներ, կազմակերպություններ)	Առաջարկություններ, նկատառումներ
Առողջական	----- ----- -----	----- ----- -----	----- ----- -----

**Աղյուսակ 3. Ուսումնասիրում և լրացնում է երրորդ խումբը**

Խնդիր, որ ունենում է թրաֆիքինգի գոհը	Դժվարություններ	Օգնության և աջակցության պատասխանատուներ (անձինք, ոլորտներ, կազմակերպություններ)	Առաջարկություններ, նկատառումներ
Սոցիալ-տնտեսական	----- ----- -----	----- ----- -----	----- ----- -----

**Աղյուսակ 4. Ուսումնասիրում և լրացնում է չորրորդ խումբը**

Խնդիր, որ ունենում է թրաֆիքինգի գոհը	Դժվարություններ	Օգնության և աջակցության պատասխանատուներ (անձինք, ոլորտներ, կազմակերպություններ)	Առաջարկություններ, նկատառումներ
Իրավական, կյանքի և անվտանգության	----- ----- -----	----- ----- -----	----- ----- -----

***Աշխատանք ողջ դասարանով***

Ներկայացրե՛ք ձեր պատասխանները, պատասխանե՛ք հարցերին, դիտե՛ք և ունկնդրե՛ք մյուս խմբերի աշխատանքները, հարցեր տվե՛ք, կարծիքներ արտահայտե՛ք (ձեր նկատառումներն ու առաջարկությունները կարող եք գրել հենց պատասխանների վրա):

**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Արաբական Միացյալ Էմիրություններ**

Embassies District, 24 Al Karamah Str., Zone N2, P.O. BOX 6358,  
Abu Dhabi, UAE

Հեռախոս՝ (971-2) 4444196, ֆաքս՝ (971-2) 4444197

Էլ. փոստ՝ [armemiratesembassy@mfa.am](mailto:armemiratesembassy@mfa.am)

**Գերմանիայի Գաշնային Հանրապետություն**

4, Nussbaumallee, 14050, Berlin, Germany

Հեռախոս՝ (49-30) 405091-0/13/14/15/20, ֆաքս՝ (49-30) 405091-25

Հյուպատոսական բաժին. հեռ.՝ (49-30) 405091-16

Էլ. փոստ՝ [armgermanyembassy@mfa.am](mailto:armgermanyembassy@mfa.am)

**Իտալիայի Հանրապետություն**

174, Via dei Colli della Farnesina, 00194 Rome, Italy

Հեռախոս՝ (39-06) 3296638, ֆաքս՝ (39-06) 3297763

Էլ. փոստ՝ [embarmit@tin.it](mailto:embarmit@tin.it)

**Կանադա**

7, Delaware Avenue, Ottawa, ON, K2P OZ2, Canada

Հեռախոս՝ (1-613) 2343710, ֆաքս՝ (1-613) 2343444

Էլ. փոստ՝ [armcanadaembassy@mfa.am](mailto:armcanadaembassy@mfa.am)

Հյուպատոսական բաժին. Էլ.փոստ՝ [armconsottawa@mfa.am](mailto:armconsottawa@mfa.am)

**Հունաստանի Հանրապետություն**

95, Konstantinou Paleologou Ave., Khalandri 15232, Athens, Greece

Հեռախոս՝ (30210) 6831130, ֆաքս՝ (30210) 6831183

Էլ. փոստ՝ [armemb@otenet.gr](mailto:armemb@otenet.gr), [armstaff@otenet.gr](mailto:armstaff@otenet.gr)

Հյուպատոսական բաժին. հեռ.՝ (30210) 6831145

Ֆաքս՝ (30210) 6831807, Էլ.փոստ՝ [armcons@otenet.gr](mailto:armcons@otenet.gr)

**Կիպրոսի Հանրապետություն**

Նստավայրը՝ Աթենք

**Խորվաթիայի Հանրապետություն**

Նստավայրը՝ Աթենք

**Սլովենիայի Հանրապետություն**

Նստավայրը՝ Աթենք

**Նիդեռլանդների Թագավորություն**

Նստավայրը՝ Բրյուսել

**Հունգարիայի Հանրապետություն**

Նստավայրը՝ Վիեննա

**Սլովակիայի Հանրապետություն**

Նստավայրը՝ Վիեննա

**Չեխիայի Հանրապետություն**

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայրը՝ Վիեննա

60/28, Narodni, Prague 1, Czech Republic

Հեռախոս՝ (420) 221105388, 221105367

Էլ. փոստ՝ a.voskarian@upcmail.cz, a.voskarian@mfa.am

**Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն**

9-2-62, Ta Yuan Diplomatic Compound, Beijing 100600, PRC

Հեռախոս՝ (86-10) 65325677, ֆաքս՝ (86-10) 65325654

Էլ. փոստ՝ armchinaembassy@mfa.am

**Ռուսաստանի Գաշնություն**

2, Armianskiy Pereulok, 101000 Moscow, Russia

Հեռախոս՝ (7-495) 6241269, ֆաքս՝ (7-495) 6244535

Էլ. փոստ՝ incom@armem.ru, www.armem.ru

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ**

**ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (IOM)**

Գրասենյակ՝ Պետրոս Ադամյան փող., 14  
Աշխատանքային օրերը և ժամերը. երկուշաբթի - ուրբաթ 9.00-17.30  
Հեռախոս՝ 58-56-92, 54-33-75, 58-37-86  
Ֆաքս՝ 54-33-65  
Էլ. փոստ՝ iom@arminco.com

**ՄԵՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (UN)**

Գրասենյակ՝ Պետրոս Ադամյան փող., 14  
Աշխատանքային օրերը և ժամերը. երկուշաբթի – ուրբաթ 9.00 - 18.00  
Հեռախոս՝ 56-60-73, ֆաքս՝ 54-38-11  
Էլ.փոստ՝ registry.am@undp.org

**ՄԵՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ (UNHCR)**

Գրասենյակ՝ Պետրոս Ադամյան փող., 14  
Աշխատանքային օրերը և ժամերը. երկուշաբթի - ուրբաթ 9.00 - 17.30  
Հեռախոս՝ 56-47-71, 54-84-92  
Ֆաքս՝ 56-78-17, էլ. փոստ՝ armye@unhcr.org

**ՄԵՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ (UNICEF)**

Գրասենյակ՝ Պետրոս Ադամյան փող., 14  
Աշխատանքային օրերը և ժամերը. երկուշաբթի-ուրբաթ 9.00-18.00  
Հեռախոս՝ 58-01-74, 58-05-16, 52-35-46, 56-64-97, 54-38-09  
Ֆաքս՝ 54-38-10  
Էլ.փոստ՝ Yerevan@unicef.org

**ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԵԳԵՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ (IFRC)**

Գրասենյակ՝ Պարոնյան փող., 21  
Աշխատանքային օրերը և ժամերը. երկուշաբթի – ուրբաթ 9.00 - 17.30  
Հեռախոս՝ 53-94-43, ֆաքս՝ 53-92-17  
Էլ. փոստ՝ susanna.harutyunyan@ifrc.org

**ԿԱՐԱՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ  
ՊԱՏՎԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ICRC)**

Գրասենյակ՝ Նաիրի Ջարյան փող., 73/1

Աշխատանքային օրերը և ժամերը. երկուշաբթի - ուրբաթ 9.00 - 18.00

Հեռախոս՝ 29-74-15, 29-74-16, 29-74-17, 29-74-18,

29-76-35, 29-76-36, 29-76-37, 29-76-38

Ֆաքս՝ 29-74-20

Էլ. փոստ՝ [erevan.ere@icrc.org](mailto:erevan.ere@icrc.org)

**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԳԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՏՈՒԿ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ (SRSGCE)**

Գրասենյակ՝ Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա

Բիզնես կենտրոն, 6-րդ հարկ

Աշխատանքային օրերը և ժամերը. երկուշաբթի – ուրբաթ 9.00 - 18.00

Հեռախոս՝ 54-63-22, 54-63-26, 54-63-28, 54-63-29

Ֆաքս՝ 54-63-19

Էլ. փոստ՝ [coe.yerevan@coe.int](mailto:coe.yerevan@coe.int)

[www.coe.am](http://www.coe.am)

**“PEOPLE IN NEED” ՉԵԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 41 փ., 3/1 տ.

Աշխատանքային օրերը և ժամերը. երկուշաբթի-ուրբաթ 10:00-19:00

Հեռախոս՝ (010)259-269

Կայք՝ [www.stopchildtrafficking.am](http://www.stopchildtrafficking.am)



## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

**գեղարվեստական գրականության այն գործերից, որտեղ անդրադարձ  
կա մարդկանց շահագործման՝ թրաֆիքինգի թեմային**

*ՎԼԱԴԻՍԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

### ԱՐԵՎԱԳԱՐՁ (հատվածներ վեպից)

[Վեպի գլխավոր հերոսը Կարո Կարայանն է՝ 15-16 տարեկան պատանի, որի հարաբերությունները հոր, ինչպես նաև դպրոցի ուսուցիչների հետ այնքան էլ հարթ չեն: Կարոն զբոսայգում ծանոթացել է Հունան անունով երիտասարդի հետ, որի ով լինելն առանձնապես չգիտի:]

Կարոն անչափ ուրախացավ, երբ Հունանը հրավիրեց ավտոմեքենայով զբոսանքի: Ամմիջապես համաձայնեց:

— Դու շատ լավ ես վարում: Սովորելը դժվա՞ր է:

— Հասարակ բան է:— Պատասխանեց Հունանը:— Քաղաքից դուրս գանք, փորձիր:

Նրանք քաղաքից դուրս եկան: Հունանը դեկը գիջեց Կարոյին ու համբերությամբ բացատրում էր մեքենա վարելու գաղտնիքները: Ամեն բան հեշտ էր թվում, բայց ստացվում էր այնպես, որ Կարոն արգելակի ոտնակի փոխարեն գազի ոտնակն էր սեղմում: Երբ ուզում էր փոխել արագությունը, հայացքը ճանապարհից կտրում էր, նայում փոխանցման լծակին: Ստեղծվում էր վտանգավոր պահ: Այդ ամենը Հունանը տանում էր սառնասրտորեն:

Բավական զբոսնելուց հետո Հունանն առաջարկեց մոտակա ճամփամերձ խորտկարանում ճաշել: Կարոն համոզված էր, որ այդ ամենից հետո ինքը պարտավորված է հյուրասիրել: Բայց սովորաբար գրպանում մեկերկու կարկանդակի արժեքից ավելի չէր լինում:

— Գուցե ուրի՞շ անգամ, — հարցրեց նա:

— Ես փող ունեմ, — նրա մտքերը կռահելով, հանգստացրեց Հունանը:

Քիչ անց նրանք ճամփամերձ խորտկարանում էին: Բուֆետապանը՝ մի հաստիկ երիտասարդ, մեծ ջերմությամբ դիմավորեց Հունանին:

— Ինչպե՞ս է մեր մեծ ախպերը, — ըստ երևույթին ինչ-որ մեկին նկատի ունենալով, հարցրեց նա: Կարոյին թվաց, թե Հունանը հայացքով նրան

ասատեց: Բուֆետապանը թեթևակի նայեց Կարոյի կողմն ու լրջացավ: Խոհարարը Հունանի պատվերն ընդունեց առանձնահատուկ պատրաստականությամբ: Չնայած խորտկարանում ինքնասպասարկում էր, աշխատակիցներից մեկը շտապեց ծառայություն մատուցել տղաներին: Բուֆետապանը մի շիշ կոնյակ ուղարկեց, ընդգծելով, որ իր կողմից հյուրասիրում է: *Այդ ամենից Կարոն օտարություն էր զգում: Նույնիսկ երկյուղում էր, որ կոնյակ է խմելու:* Միշտ էլ ինչ-որ առիթներով կամ գայթակղությունից խմիչք փորձելիս, արտախառնուք էր զգացել ու զարմանում էր, թե մեծերն ինչպես են բաժակ բաժակի ետևից դատարկում այդ դառը, թունոտ հեղուկը: Երկյուղից ուղղակի մրսածություն էր գալիս վրան: Հունանն զգում էր: Նույնիսկ ասաց.

— Կարո, եթե վախենում ես, թե կհարբես, մի խմիր: Ես էլ քիչ եմ խմում:

Այդ խոսքերը Հունանի հեղինակությունն ավելի բարձրացրին Կարոյի աչքում:

Խորովածը մատուցեցին: Երկուսն էլ քաղցած էին ու ախորժակով կերան: Կարոն ստեպ-ստեպ նայում էր շուրջը ստուգելու համար, թե ծանոթներ չե՞ն հայտնվում: Նա չէր ցանկանում, որ ծնողներն իմանան, թե ինչ-որ տղայի հետ (թեև նա լավ տղա է) խորտկարան է մտել: Պարզապես չէր սիրում նրանց հարց ու փորձը. «Ո՞ւմ հետ», «Ինչո՞ւ», «Իսկ նա ո՞վ է»: *Գլուխը լցնում էին այնքան շար խորհուրդներով, որ դրանց տակ կարելի է մի ամբողջ շաբաթ խոնվաացնել:* Հունանը մի բաժակ կոնյակ խմեց: Կարոն նույնպես փորձեց խմել, սակայն զզվանք արտահայտեց ու փղձկաց:

— Մի խմիր, — խորհուրդ տվեց Հունանը:

Այդ օրը Հունանը պատմեց, թե ինչպես տրոլեյբուսում դանակահարել է մեկին, որն իրեն անվանել է «լիպոր»: Ապա սկսեց «փիլիսոփայել»: Նրա կարծիքով՝ հասարակությունը բաժանված է երկու կատեգորիայի՝ ուժեղների ու թուլերի: Ուժեղները նրանք են, ովքեր կարողանում են վերցնել պատրաստին: Թուլերը շատ են, միասնական են ու հալածում են ուժեղներին: Սակայն նրանք առանձին-առանձին վախկոտներ են:

Խորտկարանից դուրս եկան ուշ: Կարոյին թվում էր, թե երազում է: Հունանի մասին ուժեղ մարդու կարծիք էր ստեղծվում իր մեջ: Դանակահարել է, իհարկե վատ է արել: Բայց այն մարդը, որը Հունանին անվանել է «լիպոր», գուցե կուլտուրայի տան դիրեկտորի մնան մեկն է: Մի՞թե ինքը՝ Կարոն, չէր դանակահարի նրան, թեև այդ մասին չի մտածել: Նրան թվացել է, թե մնան պատիժներ տալիս են միայն կինոներում: Դե, կինոները հորինված բաներ են: Դերասաններ են խաղում: Նրանք իսկական չեն դանակահարում և իսկական չեն մեռնում:

*Նրա գլխում ինչ-որ նոր հասկացությունների շփոթ էր առաջանում:*

Մեքենան անցնում էր գերեզմանոցի մոտով: Կարոն հիշեց, որ Լիլիթին խոստացել էր մոր գերեզմանոցի համար քիթեղյա պսակ գնել, տխրեց:

— Ես կուզեմայի քեզ նման լինել, — ասաց Հունանին: — Այ, դու աշխատում ես (Կարոն համոզված էր, որ Հունանն աշխատում է), վաստակում ես, կարող ես խորտկարան հաճախել:

— Իսկ դու ուզո՞ւմ ես աշխատել, — հարցրեց Հունանը:

— Ուզում եմ, բայց հայրս թույլ չի տալիս:

— Նա կարող է չիմանալ, որ դու աշխատում ես:

Կարոն զարմացավ:

— Դա ինչպե՞ս կարելի է:

— Կարելի է: Տանից դուրս կգաս երեկոյան, ճիշտ արևամուտին:

— Բայց դա ի՞նչ աշխատանք է, — զգալով սրտի խփոցը, հարցրեց Կարոն:

— Բեռնակրության նման բան է: Ես էլ նույն գործն էի անում: Կան մարդիկ, չեն համաձայնում, քթերը բարձր են պահում, իբր ամոթ է: Ես չեմ ամաչում: Ոչ ոքի չեմ ասում՝ ինչ գործ եմ անում:

Այս խոսքերը Կարոյին հանգստացրին: Նրանք պայմանավորվեցին հաջորդ օրը հանդիպել ճիշտ մայրամուտին, շուկայի մոտ:



Երևանի շուկաներում բազմաթիվ կոլտնտեսությունների խանութներ էին բացել: Դրանք կառուցված էին այնպես, որ միաժամանակ դարպասում էին բացօթյա ընդարձակ շուկայատեղին: Այստեղ վաճառվում էին կոլտնտեսային բազմազան ապրանքներ, հատկապես մրգեր, բանջարեղեն, գինի: Երեկոյան խանութները շուկայի կողմից փակվում էին, փողոցի կողմից՝ բացվում: Առևտուրը շարունակվում էր մինչև ուշ գիշեր:

Կենտրոնական շուկայի խանութներից մեկի մուտքի առջև Կարոն ետ ու առաջ էր քայլում, երբ եկավ Հունանը: Նա մեքենայից իջավ, մոտեցավ, բարևեցին սովորական ջերմությամբ:

— Այս խանութը լավ մայիր, որ չշփոթես, — ասաց Հունանը: Կարոն նայեց նրա հայացքի ուղղությամբ: Ապա նրանք անցան դիմացի մայթը: — Դու լավ տղա ես, — նոր միայն խոսակցությունը շարունակեց Հունանը: — Բեզ համար երաշխավորել եմ: Այնպես արա, որ ինձ վրա չխոսեն:

— Ովքե՞ր:

— Թեկուզ այս խանութպանը:

Կարոն նայեց խանութի կողմը: Բաց դռնից երևում էր կարճահասակ, կլորիկ ու դյուրաշարժ խանութպանը: Նա բանջարեղեն էր տալիս մի տիկ-

նոջ ու ստեպ-ստեպ նայում տղաների կողմը: Նա աճապարանքով ուզում էր ավարտել առևտուրը:

— Մեքենայի հետնամասում հինգ տակառիկ գինի կա: Տար հանձնիր խանութպանին, սպասիր, մինչև կդատարկի: Դատարկ տակառները բեր, տեղավորիր նույն տեղում:

— Իսկ դա ի՞նչ գինի է: — Կասկածամտորեն հարցրեց Կարոն:

— Կոլտնտեսության գինին է, — հանգիստ պատասխանեց Հունանը: — Միանգամից չենք բերում, որ չփչանա: Եթե ծանոթներ պատահեն, մեքենային մի մոտենա: Դե, ուզում եմ ասել, գուցե կամաչես...

Իսկապես, մեքենայի հետնամասում տեղավորված էր քսան լիտրանոց հինգ տակառիկ: Կարոն դժվարությամբ դրանք իջեցրեց, փոխադրեց խանութ: Գիրուկ, սակայն ճարպիկ խանութպանն անմիջապես տակառիկները խլում էր նրանից ու դատարկում կես տոննա տարողության հաստափոր տակառի մեջ:

Կարոն սպասեց մինչև տակառիկների պարունակությունը դատարկվեց, ապա փոխադրեց, ինչպես հրահանգված էր, տեղավորեց մեքենայի հետնամասում, այս բոլորից հետո միայն մոտեցավ Հունանին:

— Գնա խանութից հաշիվդ ստացիր, — ասաց Հունանը, որը մինչ այդ դիմացի մայթից ուշադիր հետևում էր Կարոյի գործողություններին:

Կարոն քրտնած էր ու շփոթված: Առաջին անգամ նա աշխատում էր, որի դիմաց փող էր ստանալու: Վերադարձավ խանութպանի մոտ: Սա մի հիսունանոց [մոտավորապես՝ ներկայիս հիսուն հազար դրամ] պարզեց:

— Վերցրու: Մի բաժակ էլ գինի կխմե՞ս:

— Պետք չէ:

Կարոն տուն վերադարձավ հակասական զգացումներով: Թղթադրամն ասես այրում էր ձեռքը: Երևի այն բանի համար, որ ստացել է գործակատարից: Իսկ գործակատարը նրան դուր չեկավ: «Մի բաժակ էլ գինի կխմե՞ս»: Իր հայրը միայն կասեր՝ «մի խմիր»: Իհարկե, ոչ մեկին չի կարելի ասել, թե որտեղից է դրամ վաստակել: Մակայն միաժամանակ նրան խանդադատանք էր պատճառում այն գիտակցությունը, որ սեփական աշխատանքով ձեռք է բերել մի գումար, որով կարելի է մեկ-երկու օր ապրել: Էլի մի շաբաթ և կարող է թիթեղյա պսակ գնել:



Մի անգամ գործից հետո Հունանը նրան հրավիրեց կրկեսային ներկայացում դիտելու: Դա այն օրն էր, որ Կարոն գրպանում ուներ մի ամբողջ թիթեղյա պսակի գին և իրեն ուրախ էր զգում: Հաջորդ օրը կիրակի էր, կարող էր խոստումը կատարել: Անմիջապես համաձայնեց: Ներկայացումից

հետո մտան խորտկարան: Մի քանի բաժակ խմելուց հետո Հունանը բերանից թռցրեց, որ մի լավ գործ են ձեռնարկել, ընկերոջ կարիք ունեն: Այլևս նա ասածին ոչինչ չավելացրեց:

Կարոն քիչ-քիչ ընտելանում էր սպիրտին: Նա մի բաժակ կոնյակ դատարկեց Հունանի կենացը: Ապա առիթ ծագեց, խմեց էլի մի բաժակ: Հունանը զգաց, որ նա հարբում է: Կարոյին մեքենայով տարավ տուն:

Կարոն գլխասպտույտ էր զգում: Որոշեց աննկատելի ներս մտնել: Մուտքի մոտ հանեց կոշիկները: Այդ զգուշությունը չխանգարեց, որ մայրը նկատի նրան. տիկին Վարդուհին ընդառաջ եկավ գիշերանոցով: Աչքերը խոնավ էին: Կարոն ենթադրեց, որ մայրը հիվանդացել է:

— Ճաշ տաքացնե՞մ:

— Չէ,— պատասխանեց Կարոն ու փորձեց անցնել ննջարան, կապվ սեղանին ու քիչ մնաց վայր ընկներ:

— Կարո, դու հարբած ես,— սարսափով բացականչեց մայրը: — Որտե՞ղ ես հարբել, ասա, ո՞ւմ հետ ես հարբել:

Կնոջ ձայնի վրա հայրը՝ Սրապիոն Միսակիչը, դուրս եկավ գիշերային կոստյումով: Չմնող հայացքն ուղղեց տղային ու իր հերթին հարցրեց.

— Որտե՞ղ ես հարբել:

— Չեմ հարբել,— անփութորեն պատասխանեց Կարոն և ուզեց հեռանալ հորից, սակայն Սրապիոն Միսակիչը բռնեց նրա ձեռքից, տարավ հյուրասենյակ: Ապտակեց: Առաջին դեպքն էր, որ հայրը ձեռք էր բարձրացնում որդու վրա: Սրապիոն Միսակիչը դրանով չբավարարվեց: Մի անգամ էլ ապտակեց:

Այդ պահին կատարվեց ավելի վատթարը: Հայրը փորձեց նրա շորերը հանել, որ պառկի: Գրպանից փողերը թափվեցին հատակին: Փորձեց ճարպկորեն խել, սակայն հարբածությունը խանգարեց: Հայրը վերցրեց:

— Որտեղի՞ց:

Լռություն:

— Կին, ուրախացիր, տղադ գողություն է արել:

Տիկին Վարդուհին ձեռքը խփեց ծնկանն ու աղիողորմ լաց եղավ: Կարոն չէր պատկերացնում, որ կարող է ծնողներին այդչափ ցավ պատճառել: Սակայն նա որոշեց ոչ մի դեպքում Հունանի անունը չտալ: Հոր համառ հարցապնդումներին նա պատասխանում էր.

— Ես գող չեմ:



Երեխաների մեջ ապրում է հեռուների անասելի կարոտ: Նոր վայրեր տեսնելու ցանկությունը բխում է նրանց էությունից: Երեխան դրան ձգտում

է զգացումների ու նյարդերի զուգակցումով: Նրանց պատկերացումներում հեռուն հեքիաթայինն է, անշոշափելին, հետևաբար՝ ցանկալի: Նրանք ընդունակ են ժամերով երազել, թափառել իրենց հորինած աշխարհներով ու վայելել նրանց արևային սքանչելիքները:

Կարոն բացառություն չէր: Բայց միշտ էլ համոզված էր, որ առանց ծնողների ինքը չի կարող ապրել ոչ մի օր:

*Բռնության ու վիրավորանքի պայմաններում պատանու այս քնակյան ու անզուսպ ցանկությունները կարող են աղետալի վերջաբան ունենալ:*

Օրվա վիրավորանքը Կարոյի մեջ արթնացրեց տնից փախչելու անհաղթահարելի մղում: Վերջին օրերի աշխատանքը, Հունանի հետ հանդիպումները նրան վստահեցրին, որ կարող է ինքնուրույն ապրել: Եթե մանրիկ դժվարություններ ծագեն, կհաղթահարի:

Գիշերը կես էր դառնում: Ծնողները քնած էին:

Կարոն տնից դուրս եկավ այլևս չվերադառնալու վճռականությամբ: Գեմքին այրվում էր ապտակը, ու դեռ զգում էր հոր ձեռքի ծանրությունը:

Մթության մեջ սեփական ուրվականը քարշ տվեց դեպի զբոսայգի և ինչպես սպասում էր, հեռվից լսեց հոր ձայնը.

— Կարո՛...

Չարձագանքեց:

Հայրը, որ միշտ հարևաններին երևացել էր ինտելիգենտական վարվեցողությամբ, զուսպ ու լռակյաց, հարևանների բաց լուսամուտների առջևով վազում էր ու գոռում.

— Կարո՛...

Կարոն չէր պատասխանում: Նա համոզված էր, որ ծնողները զոջում են ապրելու: Ինչ կա որ, պետք է նրանց մի այդպիսի դաս տալ, որպեսզի միանգամից գող չկոչեն իրենց որդիներին և ապտակով չխոսեն, երբ խելոք մարդիկ այդ նպատակի համար բավական պարկեշտ բառեր են հնարել:

Նա երբեք զբոսայգին այդչափ ամայի չէր տեսել: Ծառուղիներն ունեն իրենց երկրորդ՝ խորհրդավոր ու լուռ կյանքը: Այդ ամայության մեջ կա խոնավություն ու ցուրտ: Կարոն բավական դեգերեց, մինչև դադարեց վերջին կանչը, իրեն զգաց մեն-մենակ ու հանկարծ շրջապատի ողջ ամայությունը թափանցեց նրա էությունը, մինչև ոսկորները:

*Հիմա Հունանը քնած է: Եթե քնած էլ չլինի, որդե՞ղ կգտնես նրան: Նա հասցե չի թողել, ոչ էլ ասել է՝ Կարո, տանից փախչելու դեպքում համեցեք ինձ հյուր:*

Նա նստեց ցայտադբյուրից ոչ հեռու դրված նստարանին: Իր վաղվա օրը պատկերացրեց բավական թշվառ, որ հայրիկին նորից ստիպի լաց լի-

նել: Նույնիսկ իրեն մեռած պատկերացրեց: Հայրը լալիս էր, սակայն ողբում էին նաև մայրն ու Լիլիթը: Հունանն իր «Պորբեդա»-ով թիթեղյա պսակ է քերում:

Ի վերջո այս մտածումները նրան վախ պատճառեցին: Մանավանդ հիշեց, որ զբոսայգին գերեզմանոցից բաժանում են լճակը, դիմացի պուրակը և դրանից այն կողմ ընկած մի քանի տուն:

— Ախպեր ջան, ինչո՞ւ ես լալիս...

Յայտադրյուրի մոտ աճեց մի կին, տղամարդու տաք վերարկու ուսած, ձեռքին դատարկ շիշ: Մտորումների մեջ չէր նկատել կնոջ մոտենալը:

— Իսկ դու ո՞վ ես, — հարցրեց Կարոն:

— Ես պահակ եմ:

— Դո՞ւ: — Նա զարմացավ, որ մի գեղեցիկ, ջահել կին կարող է պահակ լինել:

— Ամուսնու եմ փոխարինում:

— Տուն գնա, — ասաց Կարոյին: — Լուսադեմին ցրտում է, կմրսես:

— Տուն չունեմ, — պատասխանեց Կարոն:

— Ուրեմն, գնա բարեկամիդ տուն:

— Բարեկամ էլ չունեմ:

.....

— Վերջապես, արթնացա՞ր: — Խոնարի ժպիտով շշուջաց պահակն ու տղայի մազերը շոյեց: Կարոն սկզբում ենթարկվեց այդ քնքշությանը, ապա ամոթի զգացումից շտապեց վեր կենալ:

— Ներողություն... Ես... շնորհակալ եմ... Յտեսություն...

Փողոցում սառնությունը շոյեց դեմքը: Կարոն միանգամից վերհիշեց ամբողջ կատարվածը: Եթե այս ամենն իմանա Լիլիթը...



Կարայան ամուսիններն անսահման ուրախություն ապրեցին, երբ դուռը բացվեց ու երևաց իրենց միակ որդին: *Նա գլխիկոր, խոնարի առաջացավ:* Թե հայրը, թե մայրը հագնված էին: Նրանց աչքերում դրոշմված էր անքնություն ու վիշտ: Սրապիտն Միսակիչը նոր միայն վերադարձել էր ապարդյուն որոնումներից: Եթե Կարոն դարձյալ մեկ ժամ ուշանար, հայրը վճռել էր դիմել միլիցիայի օգնությանը, քանի դեռ որդին «ուղղություն չի վերցրել դեպի հեռավոր քաղաքներ»:

— Վայ, Կարո՛ս, — բացականչեց մայրն ու վազեց դեպի որդին: Սրապիտն Միսակիչն ավելի զուսպ ընդունեց նրա վերադարձը:

— Տղաս, դու պետք է ներողություն խնդրես, որ մեծ անհանգստություն պատճառեցիր մորդ:

— Ներողություն, մայրիկ, — ցածրաձայն ասաց Կարոն:

Մայրը գրկեց նրան ու ծածկեց համբույրներով: Սրապիոն Միսակիչը նույնպես համբուրեց:

— Իսկ հիմա, զավակս, դու պետք է ասես, թե որտեղ էիր հարբել, ում հետ: Որտեղի՞ց քեզ փող: Եթե չես ուզում, որ ծնողներդ հոգսից ծերանան, պետք է ասես:

— Հայրիկ, ետ վերադարձրու փողերը: — Նախ իր պահանջը ներկայացրեց Կարոն: — Ես դա վաստակել եմ շուկայում:

— Շուկայո՞ւմ, — միաժամանակ տազնապեցին ծնողները: — Ինչե՛ր ես խոսում:

— Ես բեռնակրություն եմ արել: Ինձ այդ փողերը պետք էին: Լիլիթին խոստացել եմ մորաքույր Սոնայի գերեզմանի համար թիթեղյա պսակ գնել:

— Աստված իմ, տղաս ինձանից փող խնդրեց, ես նախատեցի...

Սրապիոն Միսակիչը դրամը վերադարձրեց:

— Լավ է, որ խոստումդ կատարելու համար բեռնակրություն ես արել: Կարծում եմ, բեռնակիրների հետ էլ խմել ես: Միայն տես, որ մինչև վերջ բեռնակիր չմնաս:



Հաջորդ օրը նա Լիլիթին առաջարկեց գնալ գերեզմանատուն: Լիլիթն ուրախությամբ համաձայնեց: Կարոն հայտնեց, որ նախ պետք է մտնեն ծաղկի խանութ:

— Դու ուզում ես պսա՞կ գնել, — աղջկական անմիջականությամբ հարցրեց Լիլիթը: Կարոն ինքնագոհ ժպիտով պատասխանեց.

— Իհարկե:

— Կարելի՞ է իմանալ ինչ գումարով:

— Մի մասը հայրիկը տվեց, մի մասը՝ մայրիկը, — ստեց Կարոն:

Նրանք մտան գերեզմանատուն: Երկար ժամանակ նստած էին Սոնայի շիրմաքմբի կողքին: Պսակի հետ ասես կենդանություն էին բերել Սոնային:

Արևը թեքվում էր: Երկուսն էլ զգում էին, որ քաղցած են: Տուն գնալու ժամանակն էր:

— Գնանք, — առաջարկեց Կարոն:

— Գնանք, — համաձայնեց Լիլիթը:

Գերեզմանոցից դուրս գալուց հետո մոտեցան փողոցի ծորակին: Լվացվեցին: Լիլիթի մեջ ցանկություն առաջացավ մատով սեղմել ցայտադրյուրը ու ջուրը ցողել Կարոյի վրա: Կարոն բարկացավ, վազեց, բռնեց նրան:



Հանկարծ զգաց, որ Լիլիթն իր գրկում է: Նա բոլորովին էլ նման չէ այն փոքրիկ, հետաքրքրասեր աղջկան: Նույնիսկ նրան, որ ժամ առաջ իր հետ գերեզմանոցում էր: Մի պահ նրանք այդպես մնացին: Ապա Լիլիթը սթափվեց ու նրան մի կողմ հրեց:

— Թո՛ղ...

Երկուսն էլ լրջացան: Լիլիթը քայլեց դեպի տուն: Կարոն հետևեց: Չէին խոսում: Ապրում էին զգացածի երանությունը: Ջգում էին, որ եթե խոսեն, դա ինչ-որ նոր խոսք է լինելու: Այլևս չեն կարող թաքցնել, որ սիրում են իրար: Չեն էլ համարձակվում բարձրաձայն ասել այդ մասին:

.....

*Կարոն ուղղակի սաչեց, երբ անկասակով իջնելիս պատահմամբ հասցքն ընկավ մի ծառի, որի կողքին կանգնած էր Հունանը և այնպիսի դիրքում էր, որ թվաց, թե ջանում է թաքնվել անցորդներից: Նա պատրաստվում էր հանդիպման առիթով մի ուրախ բացականշություն անել, Հունանը կանխեց.*

— Մեքենան անտառի պռնկին է, գնա հետնամասում մատիր: — Այս խոսքերն ասելիս նայեց շուրջը: Նույնիսկ թվաց, թե ստուգում է՝ արդյոք իրենց տեսնողներ չկան:

Ոչ ոք չկար:

Կարոն զնաց դեպի մեքենան, որն ուղղակի խցկված էր անտառում ու ծառերով քողարկված: Նորություն էր, որ մեքենայի կողքերի ու հետևի ապակիները վարագուրված էին: Հետնամասում մատած մարդուն դրսից հնարավոր չէր տեսնել ու ճանաչել:

Հունանն արագ մոտեցավ, մտեց դեկի մոտ:

— Ի՞նչ է պատահել, — երբ դուրս եկան փողոց, հետաքրքրվեց Կարոն, չթաքցնելով անհանգստությունը:

— Տեղ հասնենք, կասեն:

Մեքենան կանգ առավ Երևանի նորակառույց փողոցներից մեկում: Չնայած բազմահարկ շենքերին, փողոցում քիչ չէին մաս երկհարկանի առանձնատները: Մի այդպիսի երկհարկ առանձնատան մոտ մեքենան դանդաղեցրեց ընթացքը, շրջանցեց տունը և կանգ առավ գարածի առջև:

— Դու մի իջնիր...

Հունանն արագ իջավ մեքենայից, գարածի դուռը բացեց, մեքենան ներս տարավ: Այստեղ միայն Կարոն դուրս եկավ մեքենայից: Հունանը ներսից կողպում էր գարածի դուռը:

Նա բանալին դրեց գրպանը, մեքենայի տակով դժվարությամբ իջավ

«բոքս» ու Կարոյից պահանջեց հետևել իրեն: Բոքսի հատակից բացվում էր հաստ թիթեղից պատրաստված փոքրիկ դուռ, որը տանում էր անհայտ ուղղությամբ: Կարոն ոչ մի վատ բան չգուշակելով, հետևեց Հունանին: Նեղիկ միջանցքը նրանց դուրս բերեց մի լայն սրահ, բետոնե պատերով ու հողե հարթ հատակով: Սրահում չկար ոչ մի անցք, որը հաղորդեր ցերեկային լույսին: Դա ստորգետնյա զինապահեստ էր, պատրաստված Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Հետագայում քաղաքաշինությունն իր մեջ առավ այդ տարածքը: Ձինվորականները լքեցին շինությունը: Քաղաքացիական կազմակերպություններն օգտագործման համար պիտանի չգտան: Քանդել հնարավոր չէր: Առմիշտ անուշադրության մատնվեց: Ահավասիկ, հայտնվել էին նոր տերեր: Սրահում շարված էին տասի չափ մեծ տակառներ և արկղեր՝ լի դատարկ շշերով:

Կարոն ժամանակ չունեի տեսածի համար իրեն հաշիվ տալ ու ենթադրություններ անել: Նա ուզում էր ըմբռնել, թե ինչու հանկարծ հայտնվեցին այնտեղ: Ինչո՞ւ Հունանը ներսից կողպեց գարածի և ստորգետնյա սրահի դռները:

Նրան պատել էին վախն ու զարմանքը: Հարցերի պատասխանը նա ուզում էր իմանալ այն մարդուց, որն այնքան հանկարծակի իրեն հասցրեց այստեղ և, ինչպես նկատեց, ամեն կերպ խուսափում էր իր հայացքից:

Հունանը մի ամբողջ շրջան գործեց լայնահուն սրահում, իբր գնում էր տակառները, դանդաղաքայլ վերադարձավ, հենվեց տակառին, հայացքն ուղղեց դեպի Կարոն, ըստ երևութին ինչ-որ բան ասելու համար, սակայն այդ ինչ-որ բառերը նրա շուրթերից ոչ մի կերպ չէին պոկվում:

— Նստի՛ր, — ցածրաձայն առաջարկեց, ցույց տալով մի դատարկ արկղ, որն ընկած էր Կարոյից ոչ շատ հեռու: Կարոն հրաժարվեց նստել: — Չարմանո՞ւմ ես, որ այդպիսի բաներ ես տեսնում:

Կարոն գլխի շարժումով դրական պատասխան տվեց:

— Դե լավ, ձևականություն չանենք, — մի քայլ առաջ գալով, շարունակեց Հունանը: — Միլիցիան քեզ փնտրում էր:

— Միլիցիա՞ն... Ի՞նձ... Ինչո՞ւ էր փնտրում:

Հունանը բավական ժամանակ լռություն պահպանեց, ապա ցածրաձայն հայտնեց.

— Խանութպանին բռնել են:

— Ի՞նչ խանութպան: — Կարոյի սիրտն այնպես ուժգին էր բաբախում, որ թվում էր, հիմա շնչահեղձ է լինելու:

— Շուկայի:

— Ես ... ես ի՞նչ կապ ունեմ նրա հետ:

— Գի՞նիմ, որը դու փոխադրում էիր, գողացված էր: Գի՞նու գործարանից էին բերում:

Մրահում ինչ-որ հիմար երաժշտություն ծագեց, որը հիշեցնում էր ջրվեժի խշշոց: Հետո երաժշտությունը մարեց, մնաց խշշոցը:

— Բայց ես ... ես չեմ գողացել:

Հունանն ուսերը շարժեց, որը նշանակում էր չգիտեմ, գողացել ես, չես գողացել, բայց բանն այդպես է:



*Երկաթե դուռը բացվեց: Ծանր քայլերով ներս մտավ միջսահասակ, լայնաթիկունք, հասար շրթունքներով ու մեծազլուխ ճաղատ մի մարդ: Անտաշ դեմքը զարդարում էր գնդակուտակ մի քիթ: Նա ուշադիր նայեց Կարոյին: Մի աչքը բարձրացավ, մեկն իջավ ու ասես կաղաց, դեմքին տալով դաժան արտահայտություն:*

Հունանը ոտքի կանգնեց, արտահայտելով իր պատկառանքը դեպի եկվորը:

— Ուրեմն եկաք, — Հունանի ծառայական պատրաստակամությանը կարևորություն չտալով ու ջանալով բարեհամբույր արտաքին ընդունել, — ասաց ճաղատը:

— Եկանք, — հագիվ պատասխանեց Հունանը:

— Հիմա մի կերպ պետք է միլիցիային մոլորեցնել, — շարունակեց ճաղատը, ցուցաբերելով խիստ գործարար մարդու հատկություններ: Նա ձեռքը բարեկամաբար դրեց Կարոյի ուսին: Ձեռքը նրան սեղմեց դեպի հատակը ու ստիպեց նստել արկղին:— Ուրեմն, դու չկաս, գոյություն չունես: Իհարկե, ժամանակավոր...

Կարոն նրա ասածներից ոչինչ չհասկացավ: Մտապատկերների մեջ ճաղատը բազմանում էր:

«Դու չկաս, ժամանակավոր, իհարկե, ժամանակավոր...»:

— Հունան, թուղթ ու գրիչ բեր:

Հունանը շտապ հանեց ծոցատետրը, մի թուղթ պոկեց, հանեց գրիչը, երկուսը միասին պարզեց Կարոյին: Այդ ժամանակ ճաղատը մի նոր արկղ բերեց, դրեց Կարոյի առջև, կարծես ընդգծելով, թե ահա ինքը պատրաստ է ծառայել և դա մեծ պատիվ է նրան: Ապա նայեց թղթին ու բարկացավ Հունանի վրա:

— Գնա տետրակի թուղթ բեր:

Հունանը գնաց ու մի քիչ ուշացումով տետրակի թուղթ բերեց: Այդ ընթացքում ճաղատը գողունի գննում էր Կարոյին, որից նա վախ էր զգում:

— Գրիչը վերցրու:

Կարոն անշարժ մնաց:

— Գրիչը վերցրու:

Բառերը դիպան պատին ու արձագանքեցին, ինչպես փայտիկը կբախվեր թմբուկին: Կարոն ակամա ենթարկվեց: Ճաղատի դեմքը գոհունակությամբ արտահայտեց: Ավելի մոտեցավ Կարոյին:

— Գրիր՝ *հայրիկ և մայրիկ ջան, էլ չես ուզում ապրել այս դարդ ու ցավով լիքը աշխարհում ...*

Առաստաղն ասես իջավ, պատերը սեղմվեցին, որ ճզմեն ամեն կենդանի շունչ: «Կարո՛... Կարո՛»: Այնքան կենդանի լսեց մոր ձայնը: Կոկորդում ինչ-որ այտուց գոյացավ: Եթե փորձի խոսել, բառեր չափտի դուրս գան: Ապա հոր ձայնը հասավ իրեն. «Կարո ...»: Հենց այդպես ձայնում էր նա, երբ ինքը փախչում էր անտառակով: Պատերը ետ քաշվեցին, առաստաղը բարձրացավ: Հունանի խորհրդավոր հայացքն զգաց իր վրա ու ճաղատի սպասողական նայվածքը տեսավ: Այտուցն ասես հալվեց, ու նա խոսել կարողացավ:

— Ես այդպիսի բան չեմ գրի: Թողեք տուն գնամ:

Նա ոտքի կանգնեց: Ճաղատի մատներն ափի մեջ առան նրա ուսուկրը, սեղմեցին: Կարոն ճչաց, թրմփաց արկղին: Ճաղատի ձախ աչքը փոքրացավ, կիսափակ կախվեց, վերին շրթունքը բարձրացավ ու դեմքը ժպտուն արհամարհանք արտահայտեց:

— Սկսիր, հայրիկ և մայրիկ ջան:

Լռությամբ:

— Գրի՛ր, — ցածրաձայն սաստեց Հունանը: Դա նշանակում էր՝ քեզ ուրիշ ելք չի մնում: Կարոն սկսեց լաց լինել: Գրիչը դանդաղ շարժվեց թղթի վրա:

*«Հայրիկ և մայրիկ ջան...»:*

— Ապրես, — խրախուսեց ճաղատը: — Ես ինքնասպանություն եմ գործում: Դե... գրիր: Այս ամենը ժամանակավոր է, հասկանո՞ւմ ես: Միլիցիային մոլորեցնելու համար է պետք:

*«Ես ինքնա... սպա...»:*

— Հը...

*«... նություն եմ գործում»:*

Կարոյի արցունքներն ընկնում էին թղթին, ու տառերը տարածվում էին, բառերը դառնում հազիվ ընթեռնելի: Սակայն ճաղատը դրան կարևորություն չէր տալիս, գտնելով, որ դա նույնիսկ լավ է:

— Ամիս-ամսաթիվը չմոռանաս: Ուրեմն՝ կդնես վաղվա, ավելի ճիշտ մյուս օրվա ամսաթիվը:

Երբ այդ ամենը գրված էր, ճաղատը թուղթը խլեց նրա ձեռքից, ծալեց, դրեց գրպանը ու շրջվեց դեպի Հունանը.

— Դե, գործ արեք:



Կարոյի անհայտանալը հորն ուղղակի ցնցեց: Երեք օր շարունակ որդուն որոնում էր ծանոթ-բարեկամների տներում, հյուրանոցներում, հիվանդանոցներում: Դիմեց միլիցիային: Սակայն չորրորդ օրը ստացվեց մի չարաբաստիկ նամակ.

«Սիրելի հայրիկ և մայրիկ ջան, ես ինքնասպանություն եմ գործում: Էլ չեմ ուզում ապրել այս դարդ ու ցավով լիքը աշխարհում: Ձեր անբախտ Կարո»:

«Կարոն ինքնասպանություն է գործել»:

Լուրը բերնեբերան անցնելով՝ ցնցեց ամբողջ թաղը: Կարայանների տունը լցվեց լաց ու կոծով: Մարդահասակ հայելին ծածկվեց սպիտակ սավանով: Հարևանները դադարեցին ընդունիչներ միացնել: Բարեկամներն ու ծանոթները խուճ-խուճ պայտեցին դժբախտ ծնողներին: Եկան նաև միլիցիայի աշխատակիցները: Նամակն անմիջապես վերցրին լաբորատոր քննության: Տեսրի թուղթը Երևանի տեսրակի գործարանի արտադրություն էր: Բայց ինչո՞ւ էր նամակն ուղարկել Սոչիից: Հարցաքննեցին շատերին, այդ թվում Բումբուշին, Լիլիթին: Բումբուշը երդվում էր աշխարհի բոլոր սրբություններով, որ Կարոն ինքնասպանություն չի գործել:

— Նա այդ բանը չէր անի, հաստատ ասում եմ՝ չէր անի: Ախր ոչ մեկը չգիտի, ես գիտեմ: Նա նոր-նոր սիրահարվել էր...

— Ձեր կարծիքով, նա ո՞ւմ էր սիրում, — հետաքրքրվեց քննիչը:

Քաջ գիտակցելով, որ այժմ Կարոյի միակ փրկությունը պետք է որոնել միլիցիայի աշխարհության մեջ, Բումբուշը այդ գաղտնիքը ևս չթաքցրեց:

— Մեր մեջ մնա, իհարկե, կարծում եմ, իմ աղջկան՝ Լիլիթին էր սիրում: Լիլիթը նույնպես պնդեց, որ նա ինքնասպանություն չէր գործի:

Նույնպիսի կարծիքներ ստացվեցին դայրոցից:

Սրապիոն Միսակիչը թողեց աշխատանքը: Նա մեկնեց Սոչի, ապա այնտեղից բազմաթիվ այլ քաղաքներ: Եղավ հյուրանոցներում, հարցումներ արեց հիվանդանոցներում ու միլիցիայի բաժանմունքներում: Նա վերադարձավ երեք շաբաթ անց, հյուծված ու դառնացած:

Միլիցիայի քննիչը նորից հայտնվեց Կարայանների տանը:

— Սրապիոն Միսակիչ, մենք համոզված ենք, որ ձեր տղան ինքնասպանություն չի գործել, — ասաց նա: — Դիակի որոնումը ոչ մի արդյունք չտվեց: Եթե նա ինչ-որ ուղղությամբ չի փախել, գտնվում է այստեղ՝

Երևանում: Խորհուրդս է՝ դադարեցնեք լաց ու կոծը: Հավատացեք, մենք նրան կգտնենք: Առայժմ մենք այդ հարցում լավատես ենք:

Իրենց որդուն վերստին գտնելու հույսն այնքան իրական հայտնվեց Կարայան ամուսիններին: Երկար ընդմիջումից հետո Սրապիոն Միսակիչը գնաց աշխատանքի:



Ընդհատակյա գործարանն օդի էր պատրաստում: Ճաղատը, որին կոչում էին Սանդրո, ինչ-ինչ ճանապարհներով Ադրբեջանից բերում էր սպիրտ: Լցնում էին տակառները, ապա թորած ջրում լուծում, լցնում շշերը, կնքում և պիտակները կայցնելուց հետո մնում էր շարել արկղերի մեջ ու բաժանել խորտկարաններին: Այդ գործն արդեն կատարում էր Հունանը: Բուֆետապանների պահանջով պիտակների վրա ավելացրին նաև ռեստորանային կնիք, որը թույլ կտար օդին վաճառել ռեստորանային գներով:

— Հունան, քեռի Խաչիկը այս գործից տեղեկություն ունի՞, — մի անգամ հարցրեց Կարոն:

— Ինչո՞ւ ես հարցնում:

— Հենց այնպես:

— Հա: Բայց կարծում է, օդին տանն ենք սարքում:

— Գիտե՞, որ ես այստեղ եմ:

— Չէ: Ես նրան նույնիսկ չեմ ասել, որ ծանոթ ենք: Իսկ դու որևէ բան պատմե՞լ ես:

— Չէ:

— Լավ է:

Կարոն չկարողացավ ըմբռնել, թե ի՞նչն է լավ: Լռեց, գոհ մնաց, որ Հունանն անկեղծ պատասխաններ տվեց իր համար շատ կարևոր այդ հարցերին:

Հունանը ուղղակի հափշտակված էր օդի պատրաստելու գործով: Սանդրոն խոստացել էր նրա համար ավտոմեքենա գնել: Սեփական մեքենա ունենալու հեռանկարը կուրացրել էր նրան. նա պատրաստակամությամբ շարտվում էր այնտեղ, ուր հրամայում էր Սանդրոն:

Նամակը Սանդրոյին հանձնելուց հետո Կարոն իրեն զգում էր կորած մարդ: Թեև Հունանը երկար ժամանակ սփոփում էր, հանգստացնում, ջանալով համոզել, որ գործարանում կմնա մինչև գործի քննության ավարտը: Հետո նրա համար ամեն բան նոր ձևով կդասավորվի: Եթե կամենա, կդառնա գործընկեր, չի կամենա, իրենք վստահ են Կարոյի գաղտնապահությամբ: Կասեն՝ գնա: Սակայն Կարոն նրան քիչ էր լսում: Նախկին բարեկամը կորցրել էր վստահությունը, մանավանդ խիստ նկատելի էր, թե ինչպիսի

հնազանդությանը է ծառայում Սանդրոյին: Վերջին խոսքը նրանն է: Իսկ մի այդպիսի մարդուց հազիվ թե կարելի լինի լավ բան հուսալ:

Հունանը նույնպես դուրս եկավ գետնատնից ու դուռը կողպեց: Նա վերադարձավ ուշ երեկոյան (Կարոն ժամանակի զգացողությունը դեռ չէր կորցրել): Տղային ցույց տվեց դատարկ շշերով լեցուն արկղերը, ապա մի դույլ, որի մեջ լցված էին խցաններ, պիտակներ, ու կարճ կարգադրեց.

— Շշերը լույսի տակ ստուգիր, կասկածելիները մի կողմ դիր վանալու համար: Հետո խցանիր ու պիտակները կպցրու: Այ, այսպես, — նա վերցրեց մի շիշ, ստուգեց, լցրեց օղիով, խցանեց, պիտակը փակցրեց վրան: Այդ ընթացքում Կարոն լուռ էր: Միայն այն ժամանակ, երբ Հունանն ուզում էր հեռանալ, հարցրեց.

— Ես որտե՞ղ եմ քնելու:

— Որտեղ ուզում ես: Տակառի ետևը վերմակ ու ներքնակ կա:

— Հաց, ջուր...

— Կբերեմ:

— Եթե լույսը հանգցնե՞մ...

— Ինչ-որ տեղ, կարծեմ, մոմ կա, փնտրիր:

Այս հանձնարարականներից հետո Հունանը նրան կրկին սփոփիչ խոսքեր ասաց, հեռացավ ու իր ետևից կողպեց ծանր դուռը:

Կարոն որոշեց ճշտել, թե արդյոք իր դժոխքը մի այլ գաղտնի ելք չունի՞ր, որով հնարավոր լինի լույս աշխարհի տղալ: Նախ զննեց տակառների տակ: Դրանք դրված էին գետնին զցված փայտյա ոտքերի վրա: Դրանց տակով որևէ ելք լինել չէր կարող: Ռետինն մի երկար խողովակ ընկած էր տակառների ետևը: Դրանով սայիրտը գարածից ուղղում էին դեպի ստորգետնյա սրահի տակառները: Պատերն ամենուր նույն ամրապինդ բետոնից էին, տեղ-տեղ խոնավությունից բորբոսնած:

*«Է՛հ, — հուսախաբ հառաչեց նա, — իմ ոտքով ծուղակն ընկա»:*

Մրահում օդը պակաս էր, իսկ խոնավությունը թափանցում էր մինչև ոսկորները: Տակառի ետևից դուրս բերեց անկողինը, փռեց հատակին ու պառկեց: Մտքով իսկ չանցավ լույսը հանգցնել: Գետնատունը ոչ միայն խորհրդավոր էր, այլև սարսափելի: Կարոն դա մմանեցրեց շատ մեծ գերեզմանի: Հանգցրու լամպը, կտիրի մեծ խավարը: Նա սարսափեց այն մտքից, որ գուցե իրենից առաջ ինչ-որ մեկն այստեղ աշխատել է: Հետո Սանդրոն նրան խեղդել է իր մատներով: Այս միտքը նրան այնքան հավանական թվաց, որ նույնիսկ պատկերացրեց այդ «ինչ-որ մեկին՝ իր սման պատանի և Հունանից խաբված: Գուցե նրան թաղել են հենց այստեղ, գետնատանը, ինչ-որ տեղ: Ինչպես կարելի է հանգիստ քնել մեռած մարդու հարևանությամբ»:

Նա ստուգեց գետնատան բոլոր անկյունները և համոզվեց, որ ամբողջ հատակը հաստ բետոնից է: Հազիվ թե Սանդրոն կամ Հունանը իրենց նեղություն պատճառեին ու քանդեին ինչ-որ մեկին թաղելու համար, երբ նրան կարելի էր գցել մեքենայի պահեստարանն ու տանել շարտել մի հենավոր ձոր:

Ամբողջ գիշերը նրան տանջում էին անքնությունը, քաղցն ու մտորումները: Նա պատկերացնում էր, թե հիմա ինչպես են ողբում հայրն ու մայրը, Լիլիթը, Բուժբուշը, քեռի Արշակը...

Այ թե նա իմանա՞ր...

Սպիրտի հոտը հարբեցնում էր ու գլխապտույտ պատճառում:

Մինչև լույս նա տանջվեց: Մինչև լույս աչք չփակեց:

Առավոտյան Հունանը նրա համար ուտելիք բերեց: Կարոն նախաճաշեց ախորժակով: Հարկավոր էր վերականգնել կորցրած ուժերը:

— Ինչպե՞ս անցկացրիր գիշերը, — բարեկամաբար հետաքրքրվեց Հունանը: Այդ պահին Կարոն մի մեծ պատառ երշիկ էր ծամում: Քիմքին նեղություն չպատճառելու համար գլխով արեց, որը նշանակում էր՝ լավ եմ քնել: Նա որոշեց թաքցնել իր տառապանքները և ձևանալ, թե իբր հիմնովին հավատում է իր «բարերարներին»: Իսկ ուտելուց հետո հարցրեց.

— Քանի՞ օր եմ մնալու այս դժոխքում:

— Երևի մի ամիս, — պատասխանեց Հունանը: — Ով գիտի, գուցե մի քիչ ավելի: Նայած գինու գործը որքան կձգձգվի:



*Մի՞թե հնարավոր է նկարագրել այն փառապանքները, որ Կարոն սպրեց գեղնաբանը մի ամբողջ ամիս: Նա կորցրել էր ժամանակի զգացողությունը: Անցնող օրերի մասին իմանում էր Հունանի գնալ-գալով: Օրերը նրան բերում էին ավելի ու ավելի շատ աշխատանք: Հունանից ու Սանդրոնից բացի, ուրիշ ոչ մեկը մուտք չունեի գետնատուն:*

Մի անգամ Կարոյի հարցումին, թե գործի քննությունը չավարտվե՞ց, Սանդրոն պատասխանեց.

— Տասը ամիս էլ դիմացիր, տասը ամիս, հասկացա՞ր:

— Գործը վերջացնենք, «Պոբեդան» քոնն է: Նատիր ու տուն գնա:

Կարոն փորձեց յուրովի վերծանել այդ բառերը. «Քո այստեղ մնալը բոլորովին էլ կապ չունի խանութպանի գործի քննության հետ: Մեզ բանվոր է պետք: Էլի տասը ամիս աշխատիր, տեսնենք: Կամ «Պոբեդայով» տուն կգնաս, օր ու մեջ կգանք ոտքերդ կրնկներք, որ գաղտնիքը չբացես: Կամ կասենք՝ «Տասը ամիս էլ մնա, «Վոլգա» մեքենա կունենաս»: Բայց մի՞թե նրանք այս գործն սկսել են, որ մի սարիթաղցի Կարո «Վոլգա» ունենա»:



Այդ օրվանից Կարոն դարձավ ավելի զգույշ ու որոշեց ինչ գնով էլ լինի փախչել դժոխքից:

*Նա նկատել էր, որ գեղընապարտն մտնելուց առաջ թե Հունասնը, թե Սանդրոն դեռ մուտքից չայն են փախիս «Կարո»:* Պատասխան սրանալուց հետո միայն ներս են մտնում: Երկար ժամանակ փորձում էր ըմբռնել այդ կանչի իմաստը: Ի վերջո գուշակեց, որ զգուշանում են իրենից: Մի անգամ որոշեց չպատասխանել: Եկվորը Սանդրոն էր: Ներս մտավ զգուշավոր քայլերով, դանակը ձեռքին: Կարոն պիտակներ էր փակցնում: Սանդրոն դանակը թաքցրեց ու բարկությունը հարցրեց.

— Ինչո՞ւ չես պատասխանում:

— Չեմ լսել, — կարճ պատասխանեց Կարոն ու շարունակեց գործը:

Ներս մտնելուց հետո նրանք կողպում էին դուռը, իսկ գործ անելիս թույլ չէին տալիս, որ Կարոն իրենց թիկունքում հայտնվեր կամ վտանգավոր չափով մոտենար:

*Մի անգամ պիտակ փակցնելիս նրա գլխում միտք ծագեց, պիտակի ետևը գրել իր մասին: Գուցե մեկն ու մեկը կարդա: Չէ՞ որ, ինչպես գուշակեց, նրանք օղին վաճառում են ճամփամերձ խորտկարաններին: Այս միտքն այնքան ոգևորեց, որ համոզվեց, թե դա իր փրկության միակ ելքն է: Ինքնահոս գրիչը, որ միշտ պահում էր գրպանում, լրջորեն պետք եկավ: Թեև թանաքը չորացել էր, նա մի փոքր ջուր ավելացրեց ու հազիվ տեսնելի տառերով պիտակի հակառակ կողմում գրեց. «Ես՝ Կարո Կարապանս, ինքնասպանություն չեմ գործել: Ինչ բանտարկել են Սանդրոն ու Հունասնը: Գեղընապարտն մուտքը՝ զարածից: Խնդրում եմ, հայրենք միլիցիային»:*

Պիտակը փակցրեց, շիշը պահեց լուսի դիմաց: Շիշ թափանցիկ պարունակության միջով գրածը կարդացվում էր: Ապա դարձյալ չորս պիտակի վրա գրեց նույն խոսքերը, փակցրեց, շշերը տեղավորեց տարբեր արկղերում:



Ճամփամերձ խորտկարանի կարմրաթշիկ բուֆետապանը բոլորովին էլ բարեգործական նպատակներով չէ, որ ժպտում է:

Երբ Հունանը բուֆետապանին հանձնեց արկղերը, նա ոչ ժպտաց, ոչ մտայլվեց: Հաշվեց գումարը, վճարեց ու անցավ գործի: Հունանը դատարկ շշով լի արկղերը դասավորեց մեքենայի պահեստարանում:

— Մեկ էլ արի, — ասաց բուֆետապանը:

— Լավ:

Նոր բերված արկղերն ընդունելիս բուֆետապանը մեկիկ-մեկիկ բարձրացնում էր շշերը, լուսի դիմաց, հակառակ կողմից զննում պիտակները:

— Ես շտապում եմ, դու ի՞նչ խաղ ես անում,— բարկացավ Հունանը:

— Է՛,— հառաչեց բուֆետապանը,— արադն էժանացավ: «Ես՝ Կարո Կարայանս, ինքնասպանություն չեմ գործել... Գետնատան մուտքը՝ գա-րաժից»:

Հունանը բուֆետապանին քաշեց մի կողմ:

— Ի՞նչ ես խոսում, ի՞նչ Կարո Կարայան:

— Իրարով մի անցիր,— հանգստացրեց բուֆետապանը ու գրպանից հանելով պիտակը, հանձնեց նրան:— Բարեբախտաբար, հաճախորդս հարբած էր: Չէր կարողացել կարդալ: Միայն բողբոջեց, թե խարդախված օղի եմ վաճառում: Մի քիչ տուրուդմփոց սարքեց, գնաց:

Նա ցույց տվեց պիտակը: Հունանը կարդաց ու կտոր-կտոր արեց: Բուֆետապանը ժպտաց:— Դեռ չորսն էլ կա:

— Տուր:

— Փող արժե:

— Ինչքա՞ն:

— Տասը հազար:

— Կտամ,— մեքենայորեն համաձայնեց Հունանը,— տուր թղթերը:

— Չէ, այդպես շատ էժան կլինի: Չէ՞ որ այդ Կարո Կարայան կոչեցյալը մարդ է: Ապահովագրական ընկերությունը նույնիսկ ավելին կվճարեր, եթե... եթե ասենք պատից ընկներ ու ոտքը կոտրեր:

— Մտքինդ ասա:

— Օղին մի քիչ էլ էժանացնենք:

— Դրան էլ համաձայն եմ, միայն պայմանավորվելու եմ Սանդրոյի հետ: Գիշերը կարո՞ղ ես գալ քաղաք:

— Չէ, խոհարարը հարսանիք է գնացել, մնալու եմ խորտկարանում:

— Այդ դեպքում ես կգամ, փողը կբերեմ: Տուր պիտակները:

— Փողը բեր, ստացիր:

Հունանը նստեց մեքենա ու վերադարձավ Երևան: Սանդրոն վտանգավոր նորությունը լսեց բարկություն պատճառելու աստիճան հանգիստ: Կարճ կարգադրեց Հունանին.

— Գնանք:

Արդեն ուշ գիշեր էր: Նրանք նստեցին մեքենա: Վարում էր Սանդրոն: Ամբողջ ճանապարհին նրանք չխոսեցին ոչ մի բառ: Երբ մոտեցել էին խորտկարանին, մեքենան կանգնեց:

— Իջի՛ր, մեքենայի համարներին ցեխ քսիր:

Հունանն իջավ, ճամփեգրի բաց ջրատարի մոտից ցեխ բերեց, կարգադրությունը կատարեց:

Տեղ հասան: Մեքենան կանգնեցրին խորտկարանից բավական հե-

նու, մի այնպիսի տեղ, որ անցորդների ուշադրությունը չգրավի: Խորակարանը փակ էր: Նրանք արագ մոտեցան ետնամուտքին: Սանդրոն դուռը ծեծեց:

— Ո՞վ է, — ներսից ծույլ-ծույլ հարցրեց բուֆետասպանը:

— Ես եմ, — պատասխանեց Սանդրոն:

— Հետո ո՞վ կա:

— Հունանը:

— Չի՞ լինի վաղը խոսենք:

— Այ տղա, Երևանից եկել, հասել ենք այստեղ, գոնե բարի երեկո ասենք իրար: Մի երկու արկղ էլ օղի եմ բերել: Հո ետ չե՞մք տանելու:

Բուֆետասպանն ուշացումով դուռը բաց արեց: Կիսամութի մեջ նախ աչքի ընկան նրա խատուտիկ բեղերը: Նա ուզեց դուրս գալ, սակայն Սանդրոն համարյա գրոհով ներս մտավ: Հունանը հետևեց նրան:

— Դուռը ներսից կողպիր, — պահանջեց Սանդրոն:

Բուֆետասպանը դժկամությամբ կատարեց նրա պահանջը, ապա վառեց էլեկտրական լամպը: Փոքրիկ սենյակը պայծառորեն լուսավորվեց: Սենյակում դրված էր մի մահճակալ:

Տրորված անկողնուց կարելի էր գուշակել, որ բուֆետասպանն այնտեղից է վեր կացել:

— Խմելու բան բերե՞մ:

— Խոսենք, հետո: Հունանն ինձ ամեն բան պատմեց: Պայմանին համաձայն եմ: Առ փողը: Օղու գինը կիսով իջեցնում եմ: — Նա գրպանից հանեց մի խուրճ թղթադրամ ու պարզեց բուֆետասպանին: Փողը տեսնելով, սա այնպիսի հրճվանք ասրեց, ասես լուսացավ ու իրիկնացավ: Առանց հաշվելու, անշտապ ու բավականությամբ դրեց գրպանը:

— Պիտակները տուր, — շտապեցրեց Սանդրոն:

Բուֆետասպանը նույնքան անշտապ շարժումներով ձեռքը տարավ մյուս գրպանը, մի քայլ ետ գնաց, հանեց ատրճանակը, նստեց մահճակալին, ապա դուրս բերեց պիտակները, տվեց Սանդրոնին:

— Մրանք են: Հենց առաջին շշից նկատել եմ: Դրանից հետո բոլոր շշերը մեկ առ մեկ ստուգել եմ: Ուրիշ հարց ու փորձ չասնեք: Գնացեք:

— Խոհարարը ոչինչ չգիտի՞:

— Խոհարարը դեռ առավոտյան գնացել էր: Այսօր մենակ եմ աշխատել:

— Շատ ասրե՛ս, — գովաբանեց Սանդրոն, ոտքի ելավ, պիտակները խցկեց գրպանը և ուղղակի գրպանից դիմահար կրակեց բուֆետասպանի վրա: Ապա վայրկյան չկորցնելով, գրկեց, սկսեց խեղդել:

— Լույսը հանգցրո՛ւ:

*Հունանը հագիվ ըմբռնեց նրա հրամանը: Լույսը հանգցրեց: Նրան ծանր սարսուռ պատեց: Իրենից մի քանի քայլ հեռու բուֆետապահնը տա-  
ժանելի ցնցվում էր:*

Իր եղերական գործը վերջացնելուց հետո Սանդրոն բուֆետապահի գրպանից հանեց թղթադրամները, ապա թաշկինակով սրբեց բոլոր այն իրերը, որոնց ենթադրաբար ձեռք էին տվել:

— Գնանք:

Երևան վերադառնալուն պես նա Հունանին կարգադրեց.

— Փոխիր հագուստդ, լրիվ՝ գուլպաներ, կոշիկներ, բոլորը... Հետո ավ-  
տոդդերը հանիր:

Հնոտիներն ու հին դռները իջեցրին գետնատուն:



Սանդրոյի աչքերը լցված էին արյունով: Դեմքը կատաղություն էր ար-  
տահայտում: Նա գրպանից հանեց պիտակներն ու պահեց Կարոյի քթի  
տակ:

— Ե՞րբ ես գրել:

Սարսափը պատեց Կարոյին: Սի քայլ ետ գնաց: Ճաղատն առաջ  
եկավ:

Կարոն դարձյալ մի քայլ ետ գնաց:

— Բռնիր սրան:

Կարոն սարսափահար փախավ, բարձրացավ տակառին: Հունանն  
սկսեց հետապնդել նրան: Կարոն ցատկում էր տակառից տակառ: Մա-  
կայն փորձանքը նրանից անպակաս էր: Ոտքը սայթաքեց, կորցրեց հավա-  
սարակչությունն ու գլորվեց երկու տակառի արանքը: Սանդրոյի լայն թա-  
թը ճանկեց նրան: Մոսկալի ճիչը ցնցեց գետնատունը: Կարոն այնքան  
հյուծված էր, որ միայն թույլ դիմադրություն էր ցույց տալիս:

Դաժան ծեծին հաջորդեց հարցաքննությունը:

— Ասա, միայն սրա՞նք են, թե՞ ուրիշ ժամանակ էլ ես գրել:|

Կարոն, հարցին պատասխանելու փոխարեն, սարսափից գոռգոռում էր  
ու աղերսում, որ չսպանեն:

— Հունան, ծեծի՛ր:

— Կմեռնի:

— Բա ի՞նչ պիտի անի, ծեծի՛ր:

*Կարոն չէր սպասում, որ Հունանը այդչափ դաժանություն կցուցաբերի:  
Նա ծեծեց Սանդրոյից ոչ պակաս անգթությամբ: Ձգալով, որ այլևս փրկու-  
թյուն չկա, որոշեց սուտմեռուկի տալ: Չնայած անտանելի ցավերին, սար-*

ասփն այնքան էր ուժեղ, որ կարողացավ ուշագնաց ձևանալ: Այլևս որքան էլ շուտ ու մուտ տվին, ջուր ցողեցին դեմքին, չխոսեց:

— Լավ, լուսանա լեզուն կբացվի, — ասաց Սանդրոն ու փնչացնելով դուրս գնաց: Հունանը հետևեց նրան:



Կարոն չէր պատկերացնում, թե կարող է քնել և դեռ երազ տեսնել: Նրանց հեռանալուց հետո խմեց ջրամանի ողջ պարունակությունն ու պառկեց: Նա այլևս ոչ մի բանի մասին չէր կարողանում մտածել: Գիշերը զարմանալի երազ տեսավ: Նրան այցելեց Լիլիթը:

— Կարո, — ասաց նա, — դու կփախչես շաբաթ օրը:

— Ինչպե՞ս փախչեմ, — հարցրեց Կարոն, — ճար չունեմ:

— Շաբաթ օրը, — կրկնեց Լիլիթը, և այս անգամ նրա ձայնը հիշեցնում էր մոր ձայնը:

Հաջորդ օրը Հունանը բերեց ավելի շատ ուտելիք, քան երբևէ բերում էր: Ոչ մի հարց չտվեց, ոչ մի բառ չխոսեց: Սակայն զգացվում էր, որ ավելի զգույշ է և ավելի ուշադիր դեպի Կարոն, քան նախորդ օրերին: Նա հասկանում էր, որ երեկվա ծեծով իր և Կարոյի միջև վերջնականապես անդունդ առաջացավ, ու քաջ գիտակցում էր, որ մեկը գոհ է, մյուսը՝ գոհող: Կարոն ատում է իրեն և անպայման կձգտի վրեժխնդիր լինել: Եվ դա համարում էր տրամաբանական: Բուժետապանի սպանությունը ցնցել էր նրա հոգեկանը: Նա նախապատրաստված չէր սպանության, գունատ էր և հնարավոր չէր ըմբռնել, թե ինչ է մտածում: Երեկոյան նա Սանդրոյին համոզում էր Կարոյին չսպանել, այլապես ստիպված կլինեն նոր օգնական փնտրել: Իսկ դա նոր գլխացավանք է: Սանդրոն չէր պատասխանել: Նրա լռությունը Հունանը գնահատել էր որպես համաձայնություն: Նա դուրս էր գալիս սրահից, Կարոն հարցրեց.

— Այսօր ի՞նչ օր է:

— Երեքշաբթի, — պատասխանեց Հունանն ու ցածրաձայն ավելացրեց: — Խորհուրդ եմ տալիս՝ լավ աշխատես: Դեռ է քո փրկությունը:

Հունանի գնալուց հետո Կարոն երկար մտածում էր, թե ինչո՞ւ Լիլիթը երազում խորհուրդ տվեց փախչել շաբաթ օրը: Ի վերջո գլխի ընկավ, որ Սանդրոն սպիրտ բերելու է մեկնում շաբաթ օրը և վերադառնում է կիրակի երեկոյան: Այդ օրն առավոտյան Հունանը գալիս է, նայում կատարված աշխատանքը, իսկ երեկոյան արկղերով օդին փոխադրում է վաճառակետեր: Նա չափազանց զգույշ է: Սկզբում արկղերը փոխադրում է ելքի մոտ, ապա Կարոյից պահանջում է հեռանալ, նոր միայն դուռը բացում է, արկղերը մեկ-մեկ դուրս է բերում «բոքս»: Յուրաքանչյուր արկղը

դուրս բերելիս նա ստուգում է, թե Կարոն որտեղ է կանգնած: Այդ ամբողջ գործողությունը կատարվում է այնպիսի զգաստությամբ, որ փախուստի մասին խոսք անգամ չի կարող լինել:

Կարոն լավ գիտեր, որ Հունանը գրպանում պահում է սուր, նեղ ու երկար շեղբով դանակ, որը կարող է գործի դնել կայծակի արագությամբ: Դեռ ծանոթության առաջին օրերին նկատեց, որ դանակի հետ խաղը նա վերածել է զբաղմունքի: Վերջապես, եկավ շաբաթ օրը: Առավոտյան Հունանը սովորականի նման ստուգեց արկղերը, փոխադրեց ելքի նեղ միջանցքը ու հեռացավ: Վերադարձավ ուշ: Կարոն հետևում էր, թե նա ինչպես մեկիկ-մեկիկ արկղերը քարշ է տալիս դեպի ելքը: Դուռը բաց էր մնում միայն այն պահին, երբ Հունանն արկղերը դուրս էր հանում:

Օրն անցավ ու ոչինչ չբերեց նրան: Բայց այլևս չէր կորցնում շաբաթ օրը փախչելու հույսը: Նա զգում էր, որ օր օրի հյուծվում է: Փախուստը պետք է արագացնել, այլապես կարող է ուժասպառ լինել և այլևս՝ մնաս բարով, մայրիկ: Մինչև շաբաթ օրը նա նորից համբերությամբ ուսումնասիրում էր Հունանի ելումուտը: Հանկարծ գլխի ընկավ, որ մինչև շաբաթ օրը մի մեծ տակառ դատարկվում է և հենց այդ տակառն էլ նախապատրաստում են նոր բերված սպիրտի համար: Պետք էր օգտվել դատարկ տակառի ծառայությունից: Նրա գլխում հանդուգն միտք հղացավ:



Հունանը սովորականի նման ստուգեց աշխատանքը, սակայն արկղերը չփոխադրեց ելքի մոտ: Շտապում էր ինչ-որ տեղ: Գործը հանձնարարեց Կարոյին: Երեկոյան վերադարձավ, կարևորություն չտվեց, որ տակառը փոխել է իր նախկին տեղը և ետ է քաշվել դեպի սրահի կենտրոնը: Նրա տակ ավելացել էր մի տախտակ: Ենթադրեց, որ Կարոն տակառը նախապատրաստել է պարունակությունը լրիվ դատարկելու համար, բայց բարկացավ, որ արկղերը տեղափոխելու իր կարգադրությունը չի կատարված: Նա փնթփնթաց, նեղացած ձևացավ ու անձամբ տեղափոխեց: Երբ կռացավ, որ բարձրացնի վերջին արկղը, այդ պահին դատարկ տակառը տեղաշարժվեց ու տախտակի վրայով գլորվեց դեպի Հունանը, արկղի հետ միասին տապալեց նրան: Ժամանակ չկորցնելով, Կարոն հարձակվեց և օդու լիքը շշով հարվածեց նրա գլխին: Այդ գործողությունը կատարվեց այնքան անսպասելի ու արագ, որ Հունանը չհասցրեց որևէ բան ըմբռնել ու դիմել ինքնապաշտպանության: Կարոն շտապ խուզարկեց, նրա գրպանից հանեց դանակը, բանալիները, վագեց դեպի ելքը: Զգուշության համար ելքի մոտ շարված արկղերը շուռ տվեց դեպի ներս: Այլևս շշերի ջարդոնների վրայով դժվար էր նրան մոտենալ: Դուռը բաց

արեց, «բոքս» դուրս գալուց հետո կրկին կողպեց: Այժմ մնում էր բացել գարաժի դուռը: Դա արդեն այնքան էլ դժվար չէր:

Ուշ երեկո է: Քաղաքում վառվում էին լույսերը: Մարդիկ անցողաբար էին անում սովորականի նման: Փողոցներում՝ մեքենաներ, մեքենաներ: «Ինչքա՛ն մարդիկ կան»: Մինչդեռ բանտարկության օրվանից Կարոն կարծում էր՝ աշխարհն ամայացավ: Նա կուզենար կանգնեցնել պատահած մեքենան, խնդրել, որ իրեն տուն հասցնի, սակայն խարդավանք էր զգում բոլոր-բոլոր մեքենաներից: Հարկավոր էր զնալ դեպի ցանկալի ապահովություն: Նկատելով խաչմերուկում երթևեկությունը կարգավորող միլիցիոներին, վազեց նրա մոտ:

— Քեռի, ինձ տար քաղաք:

— Քե՞զ, — զարմացավ միլիցիոները ու նույն պահին զգալով նրանից փչող սպիրտի հոտը, գոռաց. հարբա՞ծ ես, շան որդի:

Կարոն այլևս նրան բացատրություն չտալով, իրեն զցեց մոտեցող տրամվայ:



Դուռը ծեծեցին: Լիլիթը բաց արեց: Խեղճ աղջիկը քիչ մնաց ուշագնաց լինել, երբ երես առ երես հանդիպեց Կարոյին: Նա թույլ ճիչ արձակեց, այն է, ընկնում էր, հասցրեց հենվել դռանը:

— Կարո՛...

Կարոն չէր կարող պատկերացնել, թե ինչպես է հալումաշ եղել: Իսկ և իսկ այն աշխարհից ժամանած: Դեմքը սպիտակել էր անճանաչելիության չափ:

— Լիլիթ, ի՞նչ պատահեց քեզ: Տեսնո՞ւմ ես, կենդանի եմ, ինքնասպանություն չեմ գործել:

— Ինչքան նիհարել ես... Ներս արի:

Տուն մտան:

Կարոն ուժասպառ ընկավ բազմոցին:

— Դու հարբած ես, շորերիցդ սպիրտի հոտ է փչում:

— Հարբած չեմ: Դու ինձ փրկեցիր, Լիլիթ: Ինձ երազում ասացիր՝ «Կարո, դու կփախչես շաբաթ օրը»: Այսօր շաբաթ՞ է:

— Չէ, ուրբաթ է:

— Ուրբաթ՞

— Քեզ ի՞նչ է պատահել, որտեղի՞ց ես փախել: Միրտս պայթում է, դե խոսիր:

— Կպատմեմ: Մերոնց դեռ ոչինչ չասեք: Մայրս ինձ այս վիճակում տեսնի, կմեռնի: Ինձ ստիպեցին գրել ... ուզում էին սպանել ...

Ապա նա սկսեց զառանցել: Լիլիթը նրան օգնեց պառկել, գլխատակին բարձ դրեց: Կարոն քնեց, սակայն ստեպ-ստեպ վեր էր թռչում, անկապ խոսքեր էր ասում կամ ժպտում Լիլիթին:



[Կատարված դեպքերից հետո անցնում է որոշ ժամանակ...]

«Դ-գող-փչողների» արհեստը եկամտաբեր է համարվում, որովհետև ավտոմեքենաների շատանալու հետ ավելացել են նաև տաք գլուխները:

Կարոն ուրախությամբ գնաց մորեղբոր մոտ աշխատելու: Սա պատրաստականությամբ ընդունեց:

— Ապրես, որ եկար: Այսօրվանից կձևակերպեմ, կաշխատես:

Կարոն շուտ հափշտակվեց աշխատանքով: Նրան առանձնապես դուր էր գալիս, որ մեքենաների տերերը բանալին հանձնելով ասում էին՝ «մեքենան տար լվա»: Դա նշանակում էր, Կարոն մեքենան կարող է վարել մինչև լվացակետ: Թեև դա քիչ տարածություն է, բայց նրան մեծ հաճույք էր պատճառում, որ նստում է դեկի մոտ և մեքենան տեղաշարժում: Շուտով նա այնքան հմտացավ մեքենա վարելու մեջ, որ երբեմն առիթը որսալով, մեքենայով գալիս էր տուն: Իսկ մի անգամ Լիլիթին մեքենայով շուկա տարավ: Դա նրա կյանքի ամենաուրախ օրերից մեկն էր: Մանավանդ Լիլիթն ասաց.

— Եթե մենք բարեհաջող տեղ հասնենք, ուղղակի կասեմ, որ այս մի գործը քեզ հաջողվում է:

Իսկ Կարոն ոգևորված սկսեց գլուխ գովել, որ արհեստանոցում աչքի է ընկել: Արդեն կարգին «դզում-փչում» է:

Սակայն Կարոյին վիճակված չէր ապրել հարթ ու հանգիստ կյանքով: Փորձությունը նորից հետապնդեց նրան:

Կեսօր էր: Արևն ուժգին այրում էր: Կարոն ռետիկն խողովակը հագցրել ջրծորակին, պաղ ջուր էր ցայտում այ ու ձախ: Շոգ օրերին դա տղաների գվարճալի զբաղմունքներից մեկն էր: Կարոն քրքջալով հետամտում էր ընկերներին, հանկարծ հայացքն ընկավ լվացակետ եկող մի ավտոմեքենայի: *Կանաչավուն «Վոլգա», իսկ դեկի մոտ՝ Մանդրոն:* Կարոն թաքնվեց: Մեքենան մոտեցավ լվացակետին: Մանդրոն մեքենայից իջավ ու բանալին հանձնելով տղաներից մեկին, ասաց.

— Մի ժամից կգամ:

Նա գնաց մոտակա ճաշարանը:

*Կարոյի մեջ բորբոքվեց վրեժխնդրության թույնը:* Նա ուզեց դուրս ցատկել թաքստոցից, տապալել նրան ու ծեծել: Սակայն հիշեց Մանդրոյի



կոշտ մատների հպումն իր ուսուկրին, նրա ծանր ապտակները, սաստվեց: Մի ներքին ձայն նրան հուշեց՝ «հեռու մնա, տղաս»: Դ-ա Բուժբուշի ձայնն էր, որ հաճախ էր իշխում նրան: *Հանկարծ տղայի մեջ միտք հղացավ ջարդել մեքենան: Կամ գուցե բեկզին լցնել վրան ու այրել:* Սակայն, որքան էլ ցանկությունը մեծ լիներ, նա հասկանում էր, որ այդ օրը ոչինչ չի կարելի անել, այլապես պատասխանատվությունը կկրի մորեղբայրը:



Ավտոմեքենան գողանալու և այրելու միտքը Կարոյին հանգիստ չէր տալիս: Անկողին մտնելիս, թե գործի մեջ, ուտելիս, թե քայլելիս մտածում էր միայն մի բան. ինչպես գողանալ մեքենան: Այդ միտքը նրան այնպես էր հափշտակել, որ նույնիսկ քանի-քանի անգամ պատկերացրեց, որ մեքենան փախցրել է, այրել: Վրեժով ծանրացած նրա սրտին դա բավականություն էր պատճառում: Եվ ահա առիթն ինքն իրեն եկավ:

Նախաճաշարանի մոտ կրկին երևաց կանաչավուն «Վոլգան»: Մանդրոն իջավ, դուռը շրխկոցով փակեց, թեթևակի նայեց շուրջը, մեքենայի առաջին դողին ոտքով հարվածեց, երևի ստուգելու համար, թե օդը չի՞ մվազել, ապա շրջվեց ու ծանրաքայլ մտավ նախաճաշարան:

«Երևի սրանց էլ օդի են վաճառում», — մտածեց Կարոն:

Լուսամուտից պարզ երևում էր բուֆետի աշխատողը: Մանդրոն մոտեցավ նրան: Չեռքով բարևեց: Բուֆետապանը շտապ երկու բաժակ դրեց վաճառասեղանին: Մանդրոն մեջքով շրջվեց դեպի լուսամուտը ու հենվեց վաճառասեղանին: Ըստ երևույթին, նրանց միջև լուրջ խոսակցություն ծագեց: Կարոն բռնկվեց պահն օգտագործելու հախուռն ցանկությամբ: Նա գրպանում շատ բանալիներ ուներ, որոնք ամրացրել էր օդակի վրա: Դրանք գործի մեջ հաճախ պետք էին գալիս: Ընտրեց «Վոլգայի» բանալիներ, բավական մեծ պտույտ կատարելով, աննկատելի մոտեցավ նախաճաշարանին, թաքնվեց պատի ետևում, ծիկրակեց: Նախաճաշարանի մոտ ոչ մի կասկածելի անցուդարձ: Որոշեց, թե որ կողմով է փախչելու: Որոշեց հետընթացքով բավական հեռանալ, ապա շրջադարձ կատարել ու մտնել մայրուղի: Հեռվից ավտոմեքենա երևաց: Նա որոշեց մոտորի աղմուկը քողարկել եկող մեքենայի աղմուկով: Արագ դուրս եկավ թաքստոցից, նստեց մեքենան: Թեև ձեռքերը դողում էին, սակայն հեշտությամբ բանալին գործի դրեց: Մոտորն աշխատեց ճիշտ այն պահին, երբ փողոցով անցնող բեռնատարը հավասարվել էր իրեն: Հետընթացքով հեռացավ նախաճաշարանից և ինչպես ծրագրել էր, շրջադարձ կատարեց, դուրս եկավ կենտրոնական փողոց, խառնվեց ընդհանուր երթևեկությանը:

Չնայած մեքենան տեղաշարժելու նրա հմտությանը, խիտ երթևեկու-

թյանը Կարոն անտվոր էր: Գումարելով նաև շտապողականությունն ու ներքին տագնապը, անցուդարձող մեքենաների համար նա դառնում էր վտանգավոր: Մի տեղ քիչ մնաց բախվեր տրամվային: Մեկ ուրիշ տեղ վազանց կատարելիս հազիվ կարողացավ խուսափել վթարից: Իսկ խաչմերուկում, չկարողանալով մեքենան ժամանակին արգելակել, կարմիր լույսի տակով անցավ, սարսափի մատնելով հետիոտների: Այլևս չնկատեց, թե ինչպես ավտոտեսուչները մտոցիկլետներով հետապնդում են իրեն: Սակայն ոչ մի կերպ նրանց չէր հաջողվում հասնել արաթռիչ «Վոլգային»: Նա դուրս եկավ քաղաքից և ուղղություն վերցրեց դեպի Աշտարակ: Դեռ ճանապարհին որոշեց մեքենան կանգնեցնել որևէ փոսում, բեմզինը դատարկել, այրել ու փախչել: Այդ նպատակով մայրուղուց դուրս եկավ:

Մեքենան ուստոստում էր ու ցատկոտում անհարթ տարածության մեջ: Սակայն Կարոն ոչ մի կարևորություն չէր տալիս դրան: Նա որոնում էր մի հարմար տեղ, որ ծածկվի տեսողությունից: Հանկարծ դիմացը հայտնվեց մի լայնահուն խորություն, որի մեջ հազիվ երևում էր էքսկավատորի աշտարակը: Նա մատնվեց տագնապի: Ճիշտ ժամանակին մեքենան արգելակելու փոխարեն, նա բաց արեց դուռն ու մի կերպ իրեն դուրս շարտեց: Դա կատարվեց ուղղակի վերջին պահին: Մեքենան անհազին բարձրությունից ընկավ խոր փոսը...

[Վնասվածքներ ստանալով՝ Կարոն հայտնվեց հիվանդանոցում, իսկ մեքենա գողանալու համար դատապարտվեց ազատազրկման անչափահաս հանցագործների ուղղիչ աշխատանքային ճամբարում...]

Եթե ձեզ հետաքրքրում է վեպի հերոսների ճակատագիրը, կարող եք վեպը կարդալ ամբողջությամբ:]

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

## Ա Ն Ա Հ Ի Տ (հատվածներ հեքիաթից)

[Դուք, իհարկե, հիշում եք «Անահիտ» հեքիաթի հերոսներ Վաչագան արքայազնին, նրա խորհրդատու Վաղինակին և Անահիտին, որի հետ Վաչագանի ամուսնանալու պատմությունն արվում է հեքիաթի առաջին մասում...]

*... Վաղինակը գնաց, էլ եր չեկավ: Շարք հարց ու խնդիր եղան, ման եկան, որոնեցին, քայց Վաղինակը կորավ ու կորավ:*

*Վաղինակին որոնելու գնացող մարդիկ լուր քերին թագավորին, թե անհայր եղած մարդիկ շար կան, և ոչ ոքի հայրնի չէ, թե ինչպես են անհեղանում այդ մարդիկը և ո՛ր են կորչում:*

Թագավորը կարծեց, թե երևի ավագակ գերեվաճառներ կան, նրանք են գալիս գողանում և տանում Կովկասյան լեռներում բնակվող բարբարոս ազգերի մեջ վաճառում: Ճարպիկ լրտեսներ ուղարկեց այն երկրները, նրանք գնացին, գյուղե գյուղ, քաղաքե քաղաք ման եկան, քայց ոչ մի հետք չգտնելով՝ ետ դարձան հուսահատ:

Վաղինակի այդպես անհետ կորչիլը մեծ ցավ պատճառեց թագավորին: Նա ցավում էր ոչ միայն նրա համար, որ նրան որդու պես էր սիրում, այլև նրա համար, որ իր երկրի մեջ մի այդպիսի անսովոր բան էր պատահում, և ինքը չէր կարողանում հետքը գտնել:

Այս դեպքից հետո շատ չանցած՝ թագավորն ու թագուհին վախճանվեցան, խորին ծերության հասած: Բոլոր երկիրը սուգ պահեց նրանց համար մինչև քառասուն օր: Քառասուն օրից հետո հավաքվեցին բոլոր քաղաքացիք և Վաչագանին իր հոր տեղը նստեցրին:

Վաչագանը՝ իր նախնյաց գահը բարձրանալով՝ ուզեց իր երկիրը այնպես բարեկարգել, որ էլ ոչ մի հողի ոչ մի բանից դժգոհ չլինի, ամենքն էլ ուրախ լինին, ամենքն էլ բախտավոր: Իր ամենամոտիկ խորհրդակիցը Անահիտն էր: Առաջ նրա հետ էր խորհրդակցում միշտ և հետո ժողովրդից խելացի մարդկանց հրավիրում խորհրդի և նրանց հայտնում իր միտքը: Բայց Անահիտը այսքանը բավական չհամարեց և մեկ օր նրա հետ սկսեց այսպես խոսիլ.

— Տեր իմ թագավոր, ես տեսնում եմ, որ դու քո երկրիդ մասին մանրամասն ու ստույգ տեղեկություններ չունիս: Քո հրավիրած մարդիկը ամեն բան ուղիղը չեն ասում: Նրանք քեզ միամտացնելու և ուրախացնե-

լու համար ասում են՝ ամեն բան լավ է և կարգին, ամենքն էլ գոհ են իրենց վիճակից: Ո՞վ գիտե, ինչեր են լինում այս բոլորիս քո երկրիդ մեջ, որոնց մասին այդ մարդիկը ոչ մի տեղեկություն չեն տալիս քեզ: Դու ժամանակ առ ժամանակ պետք է զանազան հագուստով ու կերպարանքով ման գաս երկրիդ մեջ, երբեմն աղքատի ձևով մուրացկանություն պետք է անես, երբեմն մշակի հագուստով պիտի երթաս նրանց հետ մշակություն անես, երբեմն վաճառականություն, մի խոսքով, ամեն վիճակի մեջ էլ պետք է մտնես, որ ամեն վիճակի էլ մոտիկ ծանոթանաս... և ըստ այնմ քո անելիքդ անես:

— Դու շատ ճշմարիտ ես ասում, Անահիտ, — ասաց թագավորը: — Հանգուցյալ հայրս այդ սովորությունն ուներ, ինչ որ դու ասում ես, միայն ծերության ժամանակ էլ չէր կարողանում կատարել իր ուզածը: Ես իմ որսորդության ժամանակ համարյա միևնույնն էի անում, բայց հիմա ինչպե՞ս անեմ, ես որ երթամ, ո՞վ կկառավարի իմ տեղս:

— Ես ինքս կկառավարեմ, և այնպես կանեմ, որ ոչ ոք չի իմանալ, որ դու բացակա ես:

— Շատ լավ. ես հենց վաղը կարող եմ ճանապարհ ընկնել: Քսան օր ժամանակ եմ դնում, եթե քսան օրն անցնի և ես չգամ, իմացիր, որ ես կենդանի չեմ կամ մի փորձանքի մեջ եմ ընկել:



Վաչագան թագավորը հասարակ շինականի հագուստով ծպտված՝ ճանապարհ ընկավ դեպի իր երկրի հեռավոր կողմերը: Շատ բան տեսավ, շատ բան լսեց, բայց ամենից անցավ այն՝ ինչ որ նա տեսավ իր վերադարձին Պերոժ քաղաքումը:

Պերոժ քաղաքը, որ այժմ անհետացած է, գտնվում էր Կուր գետի ափումը: Բնակիչները կռապաշտ պարսիկներ էին: Կային և հայ քրիստոնյաներ, բայց շատ սակավ էին և չունեին ո՛չ քահանա և ո՛չ աղոթատուն:

Քաղաքի կենտրոնումը կար մի շատ ընդարձակ հրապարակ, որ քաղաքի շուկան էր. նրա չորս կողմն էին գտնվում բոլոր արհեստավորների և վաճառականների խանութները:

Մի օր այդ հրապարակումը նստած էր Վաչագանը, մեկ էլ տեսավ՝ ահա՛ մի խումբ մարդիկ են գալիս և բերում են իրանց հետ մի փառավոր և սպիտակ մորուքով ծերունի՝ աջ ու ձախ բազուկները բարձրացրած: Ծերունին շատ ծանր էր գալիս, նրա առջև սրբում էին ճանապարհը և աղյուսներ դնում ոտների տակին: Վաչագանը մոտեցավ մի մարդու և հարցրեց, թե ո՞վ է այդ ծերունին: Մարդը պատասխանեց.

— Սա մեր մեծ քրմապետն է, մի՞թե չես ճանաչում: Տես որքա՛ն սուրբ է, որ ոտը գետնին չի դնում, որ չլինի թե մի որևիցե միջատ ընկնի ոտքի տակը և սպանվի:

Հրապարակի ծայրումը մի կապերտ փռեցին, և քրմապետը չորեք նրա վրա, որ հանգստանա: Վաչագանը գնաց նրա դիմացը կանգնեց, որ տեսնի ի՞նչ է խոսում այդ մարդը կամ ի՞նչ է անում: Քրմապետը շատ սրատես էր, նա էլ Վաչագանի վրա նայեց և նկատելով նրա օտարական լինելը և առաջին անգամ իրան տեսնիլը, ձեռով արավ, որ գնա մոտը: Վաչագանը մոտեցավ:

— Դու ո՞վ ես, ի՞նչ գործի ես,— հարցրեց քրմապետը:

— Ես մի օտար բանվոր եմ,— պատասխանեց Վաչագանը,— եկել եմ այս քաղաքը մշակության:

— Շատ լավ, կգա՞ս ինձ հետ, ես քեզ գործ կտամ և լավ կվարձատրեմ:

Վաչագանը գլուխ տալով՝ հոժարություն ցույց տվավ և գնաց կանգնեց նրա հետ եղած մարդկանց մոտ:

Քրմապետն իր մոտ եղած քուրմերին մի քանի խոսք փսփսաց, և նրանք ցրվեցան այս ու այն կողմ, և մի քանի լոպեից վերադարձան այլևայլ պաշարներով՝ մշակների շալակը տված:

Երբ որ բոլոր քրմերը եկան, քրմապետը վեր կացավ և միևնույն հանդիսով ճանապարհ ընկավ դեպի իր բնակարանը: Վաչագանն էլ լուռ ու մունջ հետևեց նրան հետաքրքրությունից շարժված, որ տեսնի ինչով են զբաղված այդ քուրմերը, կամ ի՞նչ մարդ է քրմապետը, ի՞նչ բարեգործություններ ունի, որ այդպես սուրբի պես պաշտվում է: Այսպես գնացին մինչև քաղաքի ծայրը:

Այդտեղ քրմապետը՝ օրհնելով ճանապարհի դնող ջերմեռանդ կռապաշտներին՝ ետ դարձրեց, մնացին միայն իր քուրմերը և բեռնակիր մշակներն ու Վաչագանը: Դրանք շարունակեցին իրանց ճանապարհը և հեռանալով քաղաքից մոտ երկու վերստ, հասան մի պարսպապատ շենքի և կանգ առան նրա երկաթի դռան մոտ: Քրմապետն իր գրպանից հանեց մի ահագին բանալի, բաց արավ դուռը և ամենին ներս անելով՝ կրկին կողպեց: *Այսպեղ Վաչագանը մի անսովոր սարսուռ զգաց, փեսնելով, որ այսփեղից իր կամքով դուրս գնալու հնար չի ունենալու:* Վաչագանի հետ եղած մշակներն էլ առաջին անգամն էին մտնում այս շենքի մեջ: Նրանք ամենքն էլ իրար երեսի նայելով՝ սկսեցին փսփսալ, թե ո՞ր բերին մեզ այս մարդիկը: Վերջապես պարսպի կամարակապ ճանապարհն անցնելուց հետո, դրանց առջև բացվեց մի շատ ընդարձակ հրապարակ, որի մեջտեղը կար մի գմբեթահարկ մեհյան, մանր խուցերով շրջապատված: Մշակների բեռները ցած դնել տվին այն խուցերի մոտ, և նրանց՝ Վաչագանի

հետ միասին՝ քրմապետը տարավ մեհյանի մյուս կողմը, այնտեղ բաց արավ մի նոր երկաթի դուռ և ասաց.

— Գնացե՛ք ներս, այդտեղ ձեզ գործ կտան: Նրանք մոլորվածի պես լուռ ու մունջ ներս մտան և քրմապետն այդ դուռն էլ փակեց նրանց քամակից: Այստեղ մեր օտարականները նոր ուշքի եկան, նոր աչք բաց արին և տեսան, որ մի ստորերկրյա ճանապարհի վրա են կանգնած:



— Տղերք, ի՞նչ տեղ ենք մենք, չգիտե՞ք, — հարցրեց Վաչագանը:

— Ես գիտեմ, որ մենք թակարդի մեջ ենք ընկել, էլ այստեղից ազատվելու չենք, — ասաց մեկը:

— Բայց չէ՞ որ այս մարդը սուրբ մարդ է, մի՞թե այդպես բան կանի, — ասաց մի ուրիշը:

— Ինչո՞ւ չի անիլ, երևի այս սուրբ մարդը գիտե, որ մենք մեղավոր ենք, սրա համար մեզ բերավ ձգեց իր քավարանը, որ մեղքներս ապաշխարենք:

— Տղերք, կատակի ժամանակ չէ, — ասաց Վաչագանը: — Ես կարծում եմ, որ այդ դաժան ծերունին սուրբի անուն առած մի զարհուրելի դև է, և մենք կանգնած ենք այժմ նրա դժոխքի ճանապարհի վրա: Տեսե՛ք ինչպե՛ս խավար է, ինչպե՛ս մութ, և դեռ ով գիտե ի՞նչ տանջանքներ կան մեզ համար պատրաստված: Բայց ինչո՞ւ ենք քարացել կանգնել այստեղ, էլ հավիտյան բացվելու չէ այս դուռը, եկե՛ք առաջ գնանք, տեսնենք ո՞ր է տանում մեզ այս անդառնալի ճանապարհը:

Այդ ճանապարհով բավականին առաջ գնացին, և հանկարծ նրանց աչքին մի ճրագի աղոտ լույս երևաց: Գնացին դեպի ճրագը, և նրանց առջև բացվեց մի լայն քարահատակ, որի շորս կողմից լսվում էին խառնաշփոթ աղաղակներ: Վեր մայեցին և տեսան, որ մի արհեստական քարայրի մեջ են գտնվում: Դա շինված էր ցորենի հորի պես, վերևից սկսել էին փորել ժայռը և որքան ցած էին իջել, այնքան լայնացրել էին, և այս կերպով միասպաղաղ քարի մեջ շինել էին մի ստորերկրյա գմբեթաձև ընդարձակ սրահ:

Մեր կալանավորները մի կողմից ապշած գննում էին անելանելի բանտը, մյուս կողմից խլշած ականջ էին դնում, որ տեսնեն որտեղից էին գալիս խառնաշփոթ ձայները: Հենց այս միջոցին նրանց դիմացը երևաց մի ստվեր, որ հետզհետե մոտենալով ու թանձրանալով՝ մարդու նմանությամբ առավ: Վաչագանն առաջ գնաց դեպի այդ ստվերը և բարձրաձայն կանչեց.

— Ո՞վ ես դու ... մոտեցիր մեզ և ասա, որտեղ ենք գտնվում մենք:

Ուրվականը մոտեցավ և դողդողալով կանգնեց նորեկների առջև: Դա

մի մարդ էր, մեռելի կերպարանքով, աչքերը խոր ընկած, այտերը ցցված, մազերը թափված, մի մերկ կմախք, որի բոլոր ոսկորները համրվում էին: Այդ կենդանի մեռյալը, սրացած ծնոտիքը հազիվ շարժելով, հեկեկալով ու կակազելով՝ ասաց.

— Եկե՛ք իմ հետևիցս, ես ձեզ ցույց կտամ, թե ի՞նչ տեղ եք ընկել դուք:

Գնացին մի նեղ անցքով և մտան մի ուրիշ բույն, այնտեղ տեսան սառը գետնի վրա վայր թափված մերկ մարդիկ, որոնք աղեկտուր տնքոցով փչում էին իրանց վերջին շունչը: Այդտեղից անցան մի ուրիշ որջ և այնտեղ տեսան կարգով շարված ահագին կաթսաներ, որոնց մեջ կերակուր էին եփում մի քանի մեռելագույն մարդիկ: Վաչազանը մոտեցավ այդ կաթսաներին, որ տեսնե՝ ի՞նչ է նրանցում եփվածը, և երբ տեսավ, քստմնելով ետ քաշվեց և ընկերներին չասաց, թե ի՞նչ էր տեսածը: Այդտեղից մտան մի ավելի երկար սրահ և այդտեղ տեսան զանազան արհեստավորներ խառնիխառն աշխատելիս, մի քանիսը մի-մի բան էին ասեղնագործում, մյուսները նրանց կողքին մի-մի բան էին հյուսում, մի քանիսը կար էին անում, մյուսները՝ ոսկերչություն: Այսպես հարյուրաչափ մարդիկ այստեղ աշխատում էին աղոտ լույսի տակ, ամենքն էլ մեռելի գույն առած:

Այս ամենը ցույց տալուց հետո առաջնորդող մարդը կրկին տարավ նրանց առաջվա սրահը և այնտեղ ասաց.

— Այն դիվական ծերունին, որ ձեզ խաբել բերել է, մեզ ամենիս էլ նա է բերել այստեղ: Թե քանի ժամանակ է, որ ես այստեղ եմ, ինձ հայտնի չէ, որովհետև այստեղ օր ու գիշեր չկա, այլ կա միայն մի անվերջ խավար: Այսքանը միայն գիտեմ, որ ինձանից առաջ և ինձ հետ եկող մարդիկը կոտորվել են ամենքն էլ: Այստեղ բերում են երկու տեսակ մարդիկ, արհեստավոր և անարհեստ: Արհեստավորներին աշխատեցնում են մինչև իրանց մահը, իսկ արհեստ չգիտցողներին տանում են սպանդանոց, որ ես ձեզ ցույց չտվի, և այնտեղից բերում են այն խոհանոցը, որ դուք տեսաք: Ահա մի այսպիսի զարհուրելի տեղ է այս տեղը: Ծերունի դուր մենակ չէ, նա ունի հարյուրավոր գործակիցներ, որոնք ամենքն էլ քուրմեր են: Այս դժոխքի վրա է նրանց բնակարանը:

— Դու այս ասա, հիմա մեզ ի՞նչ են անելու, — հարցրեց Վաչազանը:

— Միևնույնը կանեն, ինչ որ մյուսներին: Ով որ ձեզանից արհեստ գիտե, կապրի մինչև մեռնիլը, իսկ ով որ չգիտե, նրան կտանեն սպանդանոց: Ես հիմա մեռելատանն եմ, ըստ որում հայտնեցի, որ է՛լ աշխատելու ուժ չունիմ: Բայց Աստված հոգիս չի առնում, երևի ուզում է ինձ լույս աշխարհի արժանացնել, և գիտե՞ք, ես հավատում եմ, որովհետև երագումս ինձ երևաց մի կինարմատ՝ գլխին թագածև սաղավարտ, ձեռին երկսայրի սուր, մի հրեղեն ձիու վրա նստած և ասաց ինձ. «Մի՛ հուսահատվիր, Վաղինակ,

ես կգամ շուտով և ձեզ ամենիդ կազատեմ»։ Ես վաղուց մեռած կլինեի, եթե այդ հրաշագեղ թագուհին ինձ հույս տված չլինեք, նրա տված հույսը իմ հոգու սնունդ է տալիս, և ինչքան թույլ եմ մարմնով, այնքան ուժեղ եմ հոգով։ Ա՛խ, ի՛նչ Վաչագան, ո՞րտեղ ես, ինչու ես մոռացել քո Վաղինակին ...»։

Վաչագանը, որ մինչև այս ժամանակ մի թմրած վիճակի մեջ էր, վերջին խոսքերից սթափվեց իբրև մի խոր քնից ... : «Ուրեմն սա մեր Վաղինակն է», մտածեց նա։ Այս մտածելով և ուշքի գալով, ուզում էր վրան ընկնիլ և հայտնել, թե ինքն է Վաչագանը, բայց մեկ էլ չհավատարով իր ականջին՝ կրկին հարցրեց, թե ո՞վ է նա և ինչպե՞ս է ընկել այստեղ։

Վաղինակը իր պատմությունն սկսեց շատ հեռվից։ Իսկ այդ միջոցին Վաչագանն սկսեց մտածել, որ լավ չի լինիլ, եթե ինքը հանկարծ հայտնե իր ով լինիլը։ Ըստ որում մի այդպիսի հայտնություն՝ թե՛ ուրախություն և թե՛ կսկիծ լինելով, կարող էր սրի պես կտրել նրա կյանքի բարակած թելը։ Այս պատճառով ընդհատեց նրա պատմությունը, ասելով.

— Քո անունը, ինչպես լսեցի, Վաղինա՞կ է։

— Վաղինակ է, այո՛, Վաղինակ ... ես մի ժամանակ ...

— Եղբայր Վաղինակ, շատ խոսիլը քեզ շատ վնաս է։ Ապրի՛ր մինչև քո երազը կատարվի։ Ես հավատում եմ քո երազին և շնորհակալ եմ, որ հայտնեցիր մեզ։ Այսուհետև մենք էլ կապրինք այդ հույսովը։ Լավ կանես, որ քո մյուս արհեստակիցներին էլ հայտնես քո երազը։ Ես ինքս երազ մեկնող եմ, հավատացնում եմ քեզ, որ երազդ պիտի կատարվի տեսածիդ պես։ Բայց ահա ոտքի ձայն է գալիս, դու գնա քո տեղը։



Վաչագանի հետ եկածները թվով վեց հոգի էին։ Հարցրեց նրանց, թե արդյոք մի որևիցե արհեստ գիտե՞ն։ Մինն ասաց, որ գիտե կտավ գործել, երկրորդը դերձակություն գիտեր, երրորդը մետաքսագործ էր, մյուս երեքը ոչ մի արհեստ չգիտեին։

— Վնաս չունի, որ դուք արհեստ չգիտեք, — ասաց Վաչագանը, — ես կասեմ, որ դուք ամենքդ ինձ արհեստակից եք, իսկ ես շատ լավ արհեստ գիտեմ։

Ոտնաձայնը հետզհետե մոտեցավ, և նրանց առջև կանգնեց մի դաժանատեսիլ քուրմ՝ հետն առած մի խումբ զինված մարդիկ։

— Դ-ո՞ք եք նոր եկածները, — հարցրեց քուրմը։

— Այո՛, ծառաներդ ե՛նք, — պատասխանեց Վաչագանը։

— Չեզանից ո՞վ է արհեստ իմանում։

— Մենք ամենքս էլ գիտենք, — ասաց Վաչագանը, — գիտենք շատ թանկագին դիպակ գործել։ Մեր գործվածքի մի կշիռը հարյուր կշիռ ոսկի



կարծես: Մենք մեծ գործարան ունեինք, բայց կրակ ընկավ այրվեց, և մենք ընկանք պարտքի տակ և խեղճացանք: Եկանք քաղաք, որ մի գործ գտնենք մեզ համար, հանդիպեցանք մեծ քրմապետին և նա մեզ բերավ այստեղ:

— Շատ լավ, բայց մի՞թե ճշմարիտ այդչափ թանկ կարծես ձեր գործվածքը:

— Մեր ասածի մեջ սուտ չկա, չէ՞ որ պիտի ստուգեք:

— Իհարկե, ես շուտով կիմանամ, թե որքան ճշմարիտ է ձեր ասածը, հիմա ասացեք, ի՞նչ նյութեղեն և գործիքներ են հարկավոր, որ ես բերեմ:

Վաչագանը հայտնեց մի առ մի, թե ինչ ու ինչ է հարկավոր: Մի քանի ժամից հետո ամեն ինչ պատրաստ էր: Քուրմը պատվիրեց, որ երթան արհեստատունը, այնտեղ աշխատեն և նրանց հետ կերակրվին:

— Այնտեղ մեր գործը լավ չի հաջողիլ,— ասաց Վաչագանը:— Մեզ հարկավոր է ջոկ և ընդարձակ տեղ, և այս տեղը ամենից հարմար է: Մեր գործի նրբությունը պահանջում է առատ լույս, աղոտ լույսի տակ ոչինչ չենք կարող կատարել, իսկ ինչ վերաբերում է մեր կերակուրին, պետք է գիտենանք, որ մենք մսակեր չենք, սովոր չենք այդ կերակուրին, հենց որ միս ուտենք, իսկույն կմեռնինք, և դուք կզրկվիք այն մեծ օգուտից, որ մեզանից կարող եք ստանալ: Ճշմարիտն եմ ասում, որ մեր գործի մի քաշը հարյուր քաշ ոսկի կարծես ...

— Շատ լավ,— ասաց քուրմը,— ես ձեզ համար կուղարկեմ հաց և բուսեղեն կերակուր, դուք կունենանք և առատ լույս, բայց եթե ձեր գործը այնպես չլինի, ինչպես խոստանում եք, ես ձեզ ամենիդ սպանդանոց կուղարկեմ, և սպանելուց առաջ՝ ենթարկել կտամ չարաչար տանջանքների:

— Մեր ասածի մեջ ոչինչ սուտ չկա, եթե ուզում եք մեր խոստացած շահն ստանալ, պետք է միայն կատարեք մեր ուզածը:

Քուրմը կատարեց իր խոստումը: Նրանց համար ուղարկում էր սպիտակ հաց, կանաչեղեն, կաթ, մածուց, պանիր և զանազան չոր ու թարմ մրգեր: Վաղինակն էլ մասնակցեց այդ սննդին, մյուսներին էլ նշխարքի պես բաժանում էին ծածկաբար սպիտակ հացից, հաղորդության տեղ էր բռնում և կենաց հացի պես կենդանություն տալիս նրանց: Վաղինակը նոր սննդի ազդեցությունով հետզհետե կազդուրվեց և կենդանի մարդու կերպարանք առավ: Վաչագանն սկսեց իր գործը և իր ընկերներին էլ իրան օգնական շինեց: Կարճ միջոցում պատրաստեց մի կտոր շատ պատվական դիպակ այնպիսի նախշերով, որոնց եթե ուշադրությամբ զննեին և իմանալին նրանց խորհուրդը, նույն դժոխքի պատմությունը պիտի կարդային նրանց մեջ:

Քուրմը եկավ, տեսավ պատրաստած դիպակը և մնաց հիացած:

Վաչագանը, ծալելով իր գործքը ինչպես պետք էր, և հանձնելով քուրմին, ասաց.

— Ես ասացի, որ մեր գործվածքի մի կշիռը հարյուր կշիռ ոսկի կարծե, բայց հիմա հարկավոր եմ համարում ասել, որ սա իմ ասածի կրկնապատիկը կարծե, ըստ որում սրա վրա կան այնպիսի թալիսմաններ, որ հազնողին միշտ զվարթ և ուրախ կպահեն: Այս կա միայն, որ հասարակ մարդիկը սրա գինը չեն իմանալ: Սրա գինը կիմանա միայն Անահիտ թագուհին, և բացի նրանից ոչ ոք չի համարձակիլ հագնիլ մի այսպիսի թանկագին գործվածք:

Արծաթամոլ քուրմը աչքերը չորս բաց արավ, երբ որ իմացավ դիպակի իսկական արժեքը: Այս մասին նա խորամանկ քրմապետին ոչինչ չհայտնեց և մինչև անգամ ցույց չտվավ նրան: Ուզեց, որ թագուհու տեսությանը միայն ինքն արժանանա, և նրանից առած ավելի ոսկիքը ինքը վալելի ...



Անահիտը Վաչագանի բացակայության ժամանակ լավ էր կառավարում երկիրը, և ամենքն էլ գոհ էին, առանց իմանալու, թե նա է կառավարողը, բայց ինքը սաստիկ մտատանջության մեջ էր ընկել, ըստ որում քսան օրից արդեն տասն օր էլ անցել էր, բայց թագավորը չէր վերադարձել: Նա գիշերը հանգիստ չուներ, սարսափելի երազներ էր տեսնում և հանկարծ վեր թռչում: Ամեն բան փոխվել էր նրա աչքումը և ամեն ինչ մի անսովոր հատկություն ստացել: Չանգին անդադար ոռնում ու վնգստում էր և թագուհու ոտներն ընկնելով աղիողորմ կերպով կլանչում ու նրան ավելի ևս մտատանջության մեջ ձգում: Վաչագանի ձին անընդհատ խրխնջում էր մայրը կորցրած քուռակի պես և իր ախորժակը կորցնելով՝ օրեցօր նիհարում էր ...: Արիասիրտ Անահիտը մի անսովոր երկյուղի մեջ էր ընկել: Մի հասարակ թխկոցից, մի սովորական գոչյունից նա վեր էր թռչում: Երբեմն ուզում էր կանչել իշխաններին և հայտնել նրանց թագավորի բացակայությունը և անհայտանալը, բայց վախենում էր, թե մի գուցե դրա հետևանքը վատ լինի, մի ապստամբություն ծագի երկրի մեջ և խռովություն ընկնի:

Մեկ առավոտ էլ, սաստիկ սրտնեղած, ման էր գալիս պարտիզումը, իր ծառաներից միներ ներս եկավ և հայտնեց նրան, թե մի օտար վաճառական է եկել և ասում է, որ մի երևելի բան ունի վաճառելու թագուհուն: Անահիտի սիրտն սկսեց մի անսովոր կերպով տրոփել: Հրամայեց՝ որ շուտով ներս բերեն այն մարդուն:

Ներս եկավ մի դաժան կերպարանքով մարդ, խոր գլուխ տվավ թագուհուն և արծաթե սինու վրա դրած մի ոսկե դիպակ դրավ թագուհու առջև:

Անահիտը վեր առավ, քննեց դիպակը և, ուշ չդարձնելով նախշերի վրա, հարցրեց գինը:

— Իր կշռովը երեք հարյուր կշիռ ոսկի կարծե, ողորմած թագուհի: Ուզում եմ ասել, որ ինձ վրա այդքան է նստել միայն գործքն ու նյութը, իսկ աշխատանքն էլ թողնում եմ քո ողորմության կամքին:

— Մի՞թե այդքան թանկ կարծե:

— Դրա մեջ կա մի այնպիսի գորություն, որ անգնահատելի է: Դրա վրա եղած նկարները հասարակ նախշեր չեն, այլ թալիսմաններ են, իսկ այդ թալիսմանները այն գորությունն ունին, որ դրա հագնողին միշտ զվարթ, միշտ ուրախ կպահեն: Իրա հագնողը կյանքի մեջ տխրություն չի տեսնի:

— Մի՞թե այդպես, — ասաց Անահիտը և սկսեց բաց անել դիպակը և ուշի ուշով զննել նրա նկարները, որոնք ոչ թե թալիսմաններ, այլ ծաղկագրեր էին: Անահիտը լուռ ու մունջ կարդաց նրանց մեջ հետևյալ խոսքերը.

*«Իմ աննման Անահիտ, ես ընկել եմ մի սուկալի դժոխքի մեջ: Այս դիպակ բերողը նույն դժոխքի վերակացուներից մեկն է: Ինչ մուր է և Վաղինակը: Դժոխքը գրվվում է Պերոժ քաղաքից դեպի արևելք մի պարսպապատ մեհյանի հատակում: Եթե շուտ օգնության չհասնես, մենք կորած ենք հավիտյան:*

*Վաչագան»:*

Անահիտը մեկ անգամ կարդալով չբավականացավ, երկրորդ և երրորդ անգամ էլ կարդաց, ըստ որում իր աչքերին չէր հավատում. կարդաց և չորրորդ անգամ, միայն այս անգամ ոչ թե կարդում էր իսկապես, այլ մտածում էր, թե ինչ անելու է: Աչքը ձգած գրերին՝ երկար մտածելուց հետո դարձավ դեպի վաճառականի հագուստի մեջ ծայտած քուրմը և ուրախ դեմքով ասաց.

— Դու ճշմարիտ ես ասում, քո դիպակիդ նկարները ուրախացնելու գորություն ունին: Ես այսօր շատ տխուր էի, բայց այս բոպեիս մի անպատմելի ուրախություն եմ գգում: Իմ կարծիքով այս դիպակը անգնահատելի է: Եթե սրա համար իմ թագավորության կեսը պահանջեիր, ես խնայելու չէի: Բայց գիտե՞ս ինչ կա, իմ կարծիքով ոչ մի գործ կարող չէ իր գործողից ավելի գորավոր լինել: Այսպե՞ս է, թե՛ ոչ:

— Թագուհին ո՞ղջ լինի, քո կարծիքը շատ ճշմարիտ է, արարածը կարող չէ հավասարվիլ արարողին:

— Եթե դու էլ գիտես, որ այդպես է, պետք է քերես ինձ մոտ սրա գործողին, որ ես վարձատրեմ նրան նույնպես, ինչպես և քեզ: Դու էլ լսած կլինիս, որ ես արհեստին մեծ նշանակություն եմ տալիս և պատրաստ եմ ամեն մի լավ արհեստավորին նույնպես վարձատրել, ինչպես իմ ամեն մի քաջ գրականին:

— Ողորմած թագուհի, ես տեսած չեմ դրա գործողին և չեմ ճանաչում: Ես մի վաճառական մարդ եմ, այս կտորը գնել եմ Հնդկաստանումը մի հրեայից, իսկ հրեան գնել էր մի արաբից, արաբն էլ ո՞վ գիտե ումից կամ ո՞ր աշխարհից:

— Բայց դու, կարծեմ, ասացիր, թե գործն ու նյութը այսքան կարժե, և չասացիր, թե ես այսքանով եմ գնել, դրանից երևաց, որ դու ինքդ ես գործել տվել:

— Ողորմած թագուհի, ինձ այդպես էին ասել Հնդկաստանումը, ես էլ...

— Սպասիր, որտե՞ղ է քո Հնդկաստանը. այստեղից մինչև Պերոժ կլինի՞:

— Ոչ, ողորմած տեր, Պերոժը մեր կշտին է, իսկ Հնդկաստանը երեք-չորս ամսվա ճանապարհ է:

— Բայց գիտե՞ս, եթե ես ուզեմ, կարող եմ քո Հնդկաստանը մինչև Պերոժ մոտեցնել: Կարո՞ղ ես ասել ինձ, թե դու ո՞վ ես, ի՞նչ տեղացի ես, ի՞նչ ազգից ես, ի՞նչ կրոնի ես, որտե՞ղ ես ծնվել, որտե՞ղ ես կենում, այժմ ինչ գործի ես ծառայում:

— Ողորմած թագուհի ...

— Լռի՛ր, ես քեզ ողորմելու չեմ. քո բերած թալիսմաններդ ինձ հայտնեցին քո ով լինելը: Ծառաներ, բռնեցեք այս մարդուն և ձգեցեք մթին բանտի մեջ:

[Վաչագանն ու Վաղինակը գրուցում են՝ հուսալով փրկության մասին...]

— Քո խոսքերդ խորհրդավոր են թվում ինձ ... բայց չէ՛ ... ինչպե՛ս կարելի է, որ իմ Վաչագանին քո օրն ընկած տեսնեմ, լավ է, որ ես մեռնիմ այս րոպեիս:

— Իմ խոսքերի մեջ ոչինչ խորհրդավոր բան չկա, եղբայր Վաղինակ, ես այն եմ ասում, ինչ որ սրտինս է: *Իմ կարծիքով թագավորն էլ մեզ նման մի մահկանացու մարդ է, մեզ նման ամեն փորձությունների ենթակա: Մենք հիվանդանում ենք, նա էլ է հիվանդանում, մեզ սպանում են, գերի են փակում, նրան էլ են այդպես անում,* նա էլ է ջուրն ընկած ժամանակ մեզ պես խեղդվում, կրակն ընկած ժամանակ մեզ պես այրվում, նրա կերածն էլ է մի փոր հաց, այն էլ գուցե ավելի դառն ...

— Այդ շատ ճշմարիտ ես ասում, վարպետ եղբայր, բայց իմ կարծիքով թագավորն այնքան խոհեմ պետք է լինի, որ ինձ նման լոկ հետաքրքրությունից շարժված քրմապետի հետևից չերթա և ընկնի նրա դժոխքի մեջ:

— Այդ մի փորձանք է, եղբայր Վաղինակ: Մի՞թե թագավորը կարող է կարծել, որ սուրբ քրմապետը մի գարհուրելի դև է. մի՞թե նա կարող է կար-

ծել, թե կան այնպիսի մարդիկ, որոնք քստմնելի եղեռնագործությունը իրանց համար մի զվարճություն են համարում: Չէ՛, Վաղինակ, աշխարհիս երեսին ոչ մի մահկանացու ազայր չէ փորձանքից, այս օրվան բախարավորը կարող չէ իմանալ, թե վաղն ի՞նչ անբախարության մեջ պիրի ընկնի: Բայց ուրիշ բան է, եթե վերահաս վրանգը առջևդ կանգնած երևում է իր իսկական կերպարանքով: Խելքը զլիսին մարդը, երբ որ պայտահում է մի վարար գետրի, զլիսապարառ ներս չի ընկնում, այլ փնտրում է նրա ծանծաղուրդը: Դու ինչ կուզես ասա՛, բայց մեր տեսած երազը ցույց է տալիս, որ թագավորը նմանապես ընկած է մի փորձանքի մեջ, և իմ սիրտն ասում է, որ նա կազատվի միայն այն ժամանակ, երբ որ կազատվինք մենք ինքներս:

— Եվ իհարկե նա ինքը կլինի ազատած մեզ իր դիպակագործության շնորհիվ: Իմ սիրտս էլ ասում է, որ այս թուպեիս ես լսում եմ իմ թագավորի ձայնը, այդ ձայնը հենց առաջին անգամ լսելիս թափանցել է սրտիս մեջ: Բայց արդյոք հավատա՞մ իմ ականջին, ի՞նչ կասես, ասա՛ ինձ կտրական:

— Ո՛չ, ո՛չ, մի հավատար, բայց հավատա՛ այն ձայնին, որ դրսից կլսես: Ականջ դրեք, ահա՛ ձայներ են լսվում, կարծես դժոխքի դուռն է դորդում, երևի փրկիչն արդեն մոտեցել է, իմա՛ց տվեք ամենքին, որ գան այստեղ պատրաստ կենան ...



Անահիտը երբ որ բանտարկեց ծպտած քուրմին, իսկույն փչել տվավ պատերազմական փողերը:

..... Պատշգամբի վրա երևաց Անահիտը, ոտից մինչև գլուխ սպառազինված, և դեպի ժողովուրդը դառնալով՝ այսպես խոսեց.

«Ձեր թագավորի կյանքը վտանգի մեջ է: Այս թուպեիս իմացա, թե ինչ տեղ է ընկել: Նա գնացել էր իր երկրի մեջ պտտելու, որ ժողովրդի կարիքներն ու հոգսերն աչքովը տեսնի: Չար մարդկանց է հանդիպել և ընկել է մի տարտարոսի մեջ: Ժամանակ չպետք է կորցնել: Ով որ սիրում է թագավորին, ում համար թանկ է նրա կյանքը, շուտով ձիավորվի և գա իմ հետևից: Մենք պետք է կեսօր չեղած՝ հասնենք Պերոժ քաղաքը: Ես արդեն պատրաստ եմ և ձեզ եմ սպասում: Դե՛հ գնացե՛ք և շուտով պատրաստվեցեք»:

Մի ակնթարթի մեջ ցրվեցավ ժողովուրդը, գոչելով՝ կեցցե՛ թագավորը, կեցցե՛ թագուհին, և մի ժամ չանցած, արդեն ամենքը զինված պատրաստ էին: Բաջասիրտ օրիորդներն ու տիկիներն էլ երբ որ իմացան, թե թագուհին պիտի առաջնորդե գորքին, նմանապես զրահավորվեցին ու ձիավորվելով շրջապատեցին թագուհուն:

Մի կատարյալ հիացք էր Անահիտը սպարապետի զգեստի մեջ: Կրա-

կոտ ձիու վրա նստած, ոսկեգօծ գրահով պատած, մազերը սաղավարտի մեջ ամփոփած, լայնաշեղք թուրը կապած, վահանը թիկունքին կախած: Այս բոլորը նրա արեգմատիպ դեմքի և հրավառ աչքերի հետ մի ահեղ կերպարանք էին տվել նրան:

Երբ քաղաքից դուրս եկան տափարակ դաշտը, Անահիտը դարձրեց ձիու գլուխը և այս ու այն կողմ քշելով՝ հրամաններ արձակեց, և մի քանի րոպեի մեջ կարգավորելով ամբողջ այրուծին, գոչեց բարձրաձայն «հառա՛ջ» և ինքն առաջ անցնելով ասպանդակեց ձին և մի վայրկյանի մեջ աներևութացավ: Հեռվից երևում էր մի ձիու բարձրացրած թանձր փոշին, որ ամպի պես մինչև երկինք էր հասնում: Երկու ժամից հետո նա իր հրեղեն ձիով կանգնած էր Պերոժ քաղաքի հրապարակի մեջ մեն-մենակ: Կռապաշտ քաղաքացիք նրան երկնքից իջած մի նոր աստված համարելով՝ խուռն բազմությունով չոքեցին նրա առջև և գլխները մինչև գետին կոբացրին:

— Ո՞ր է ձեր քաղաքապետը, — գոչեց Անահիտը սպառնալից ձայնով: Ծունկ չոքածներից մինը վեր կացավ և դողդողալով ասաց.

— Ծառա՛դ եմ, այստեղի քաղաքապետը:

— *Դո՛ւ ես ուրեմն, որ այնքան անհոգ ես, որ չգիտես թե ի՛նչ է գործվում քո աստվածների բնակարանում:*

— Ծառադ եմ, ես ոչի՛նչ չգիտեմ:

— Դու կարելի է, թե չգիտես էլ, թե որտե՞ղ է գտնվում ձեր տաճարը:

— Ինչպե՞ս չգիտեմ, ծառադ եմ, շատ լավ գիտեմ:

— Առա՛ջ անցիր ուրեմն...

Կես ժամ չանցած՝ ամբողջ քաղաքը խմբված գնում էր Անահիտի հետևից: Երբ որ մոտեցան մեծյանի պարիսպներին, քուրմերը կարծեցին, թե ուխտավորների մեծ բազմություն է եկողը, շտապով բաց արին դուռը: Բայց երբ ներս խոնվեց ժողովուրդը, երբ տեսան զրահավորված հրաշագեղ ասպետի սպառնալից դեմքը և իրանց ուշ չդարձնելը, մի անսովոր սարսափի մեջ ընկան: Անահիտը մի րոպեի մեջ գտավ տարտարոսի դուռը և դառնալով քաղաքապետին՝ հրամայեց.

— Բաց արեք ահա՛ այս դուռը:

Մինչդեռ քաղաքապետի հրամանով մի քանի անձինք պատրաստվում էին կոտրատել դուռը, ծերունի քրմապետը, վերահաս վտանգը տեսնելով, դուրս եկավ իր մեհենական զգեստով, որ ժողովրդի վրա սարսափ ձգե և ետ մղե: Երբ որ իր սպիտակ շուրջառը ձգած, քրմապետական երկնյուղ ու երկայն թագը գլխին դրած և գավազանը ձեռին դուրս եկավ՝ ուռած ու փքված՝ ժողովուրդը ճանապարհ բաց արավ և ետ քաշվեց ահ ու դողով: Նա մոտեցավ Անահիտին և պատգամախոսի ձայնով աղաղակեց.

— Ի՞նչ ես ուզո՞ւմ, ի՞նչ ես անո՞ւմ, ետ քաշվիր այդտեղից:

Անահիտը, բարկությունը հագիվ զսպելով, ասաց.

— Ես հրամայում եմ, որ այս դուռը բացվի՛:

— Ո՞վ է կարող հրամայել այստեղ, բացի ինձանից: Այս դուռը մեր սրբարանի դուռն է. այստեղ է գտնվում մեր նախնյաց փոշին, այստեղ է մեր անշեջ կրակարանը. տեսե՛ք ահա՛ այն ծուխը, որ մինչև երկինք է բարձրանո՞ւմ: Աստվածների բարկությունը մի՛ շարժեք: Յրվեցե՛ք, հեռացե՛ք, կորե՛ք, ինչպե՞ս եք համարձակվում ձեր պիղծ ոտներով կոխտտել այս սուրբ վայրը:

Քրմապետի ահեղագոչ սպառնալիքը սնապաշտ ժողովրդի վրա սարսափ բերավ, ամենքը կորագլուխ ետ քաշվեցին, բայց նրանց մեջ կային քրիստոնյաներ, որոնք պինդ կանգնեցին իրանց տեղերը, կասկածելով, որ այդ ծածկարանումը մի սարսափելի գաղտնիք պիտի լինի թաքնված: Նրանք միաբերան գոչեցին.

— Բացվի՛, բացվի՛ այդ տարտարոսի դուռը:

Քրմապետը տեսավ, որ իր հրամանին ընդդիմացողներ կան, երեսը դարձրեց դեպի մեհյանը և ձեռքերը մեկնելով՝ աղաղակեց.

— Ո՞վ հզոր աստվածնե՛ր, ձեր սուրբ տաճարը պղծվում է, օգնեք...

Այս ձայնի վրա մեհյանի դուռը բացվեց և նրա միջից դուրս թափվեցին մի խումբ սպառազինված դաժանատեսիլ մարդիկ: Սրանք քուրմերն էին, որոնք վերահաս վտանգը տեսնելով՝ անձնապաշտպանության էին պատրաստվել: Քրմապետը հրամայեց նրանց, որ դուռը պահպանեն և ոչ ոքի թույլ չտան մոտենալ:

Անահիտի համբերությունը հատավ աստիկ բարկությունիցը: Դարձրեց ձիու գլուխը և ետ նայելով՝ տեսավ, որ քաղաքի վրա ամպի պես փոշի է բարձրացած, իմացավ, որ գորքը մոտեցել է: Այդ հանգամանքից ավելի ևս սրտապնդվելով՝ ուզեց ինքը մենակ վերջացնել ամեն բան և մի թույլ առաջ տեսնել իր Վաչագանին: Չախ ձեռքն առավ վահանը և աջով սուրը հանելով, դարձավ դեպի քուրմերը և գոչեց.

— Վերջին անգամ հրամայում եմ ձեզ զինաթա՛փ լինել և բանա՛լ այդ դժոխքի դուռը:

Քուրմերը պատրաստվեցին դիմադրելու: Անահիտի իմաստուն ձին իմացավ տիրուհու մտադրությունը, մի թեթև ասպանդակի հարված ստանալուն պես՝ կոխկռտեց քավթառ քրմապետին և հարձակվեց քուրմերի վրա: Կայծակի արագությամբ երեքի գլուխը թոցրեց Անահիտը և իսկույն ետ մղեց ձին: Քուրմերը նրան շրջապատեցին և վիրավորեցին ձիուն: Անահիտը պաշտպանողական դիրք բռնեց, բայց ձին իր հարձակմունքը շարունակում էր. նա միանգամից թե՛ առջևից և թե՛ հետևից էր հարձակ-

վում և հարվածներ էր, որ տալիս էր արացիներով: Քուրմերը կովում էին ամենահուսահատ և կատաղի կերպով: Անահիտի կյանքը անխուսափելի վտանգի մեջ էր: Այդ որ նկատեցին քրիստոնյաները, քուրմերի քամակից հարձակվեցին: Քուրմերը շփոթվեցին և երեսները դարձրին, որ պաշտպանվին: Անահիտը, օգուտ քաղելով այդ հանգամանքից, կրկին հարձակվեց և էլի մի քանի գլուխ թռցրեց և մի քանիսին ոտնատակ տվավ: Կռապաշտները տեսան, որ քրիստոնյաներն օգնում են Անահիտին, կարծեցին թե կռիվը կրոնական է, իսկույն անցան քուրմերի կողմը և սկսեցին քարե կարկուտ թափել քրիստոնյաների վրա: Այդ միջոցին Անահիտի սաղավարտը վայր ընկավ մի քանի հարվածից, որ դիպավ նրա ծայրին: Նրա խիտ և երկայն մազերը փռվեցին և ծածկեցին ամբողջ կազմվածքը ամեն կողմից, բացի հրացայտ աչքերից: Նրա այդ տեսքը մի նոր սարսափ ձգեց ամբոխի վրա, որոնք իրանց քարե կարկուտը դադարեցրին իսկույն: Այդ հանգամանքից էլ օգուտ քաղեց Անահիտը, մի անգամ էլ հարձակվեց քուրմերի վրա և մի քանիսին մահացու վերք տալով գետին գորբեց: Հենց այդ ժամանակ վրա հասան գորքի առաջապահ նիզակավորները օրիորդների և տիկիների հետ և իրանց թագուհուն հուսահատ կովի մեջ տեսնելով, միաձայն աղաղակեցին և հարձակվեցին քուրմերի վրա: Մի րոպե չանցած՝ կենդանի մնացած քուրմերը փախան. ամբոխը ետ քաշվեց և բաց հրապարակի վրա մնաց Անահիտը՝ շրջապատված քաջասիրտ օրիորդներով ու տիկիներով: Քրիստոնյաներից մինը բերավ նրա սաղավարտը, որ ազատել էր ամբոխի ձեռից: Անահիտն իջավ ձիուց ողջ առողջ, կարգավորեց իր մազերը և սաղավարտը դրավ գլխին: Հրաման արձակեց, որ եկող գորքը շրջապատե մեիյանը, որի մեջ պատսպարվել էին բոլոր քուրմերը և ներսից դուռը փակել: Հետո դառնալով դեպի ամբոխը, ասաց. «Եկեք այստեղ կարգով կանգնեցեք հանդարտ, որ տեսնեք ինչ կա ձեր սուրբ քրմապետի սրբարանումը», և հրամայեց դուռը կոտրտել:

Մի զարհուրելի տեսարան բացվեց ժողովրդի առջև: Դժոխային որջից դուրս սողացին բազմաթիվ հոգիք, որոնք նոր գերեզմանից հանած դիակների էին նմանում: Շատերը վերջին շնչումն էին և ոտքի վրա կանգնել չէին կարողանում: Նրանց ուրախության լացն ու կոծը, ճիչն ու աղաղակը մարդու սիրտ էին կտրատում: Ամենից հետո դուրս եկան Վաչագանն ու Վաղինակը գլխները քաշ գցած: Թագուհին ճանաչեց Վաչագանին և նշանացի արավ իր մարդկանցը, որ նրան տանեն իրան համար պատրաստած վրանը: Վաչագանը գնաց Վաղինակի ձեռքից բռնած՝ որ աչքերը խփած կույր աղքատի պես հետևեց նրան: Մյուս բոլոր դուրս եկողներին հրապարակի վրա նստեցնելուց հետո, Անահիտը հրամայեց զինվորներին, որ



ներս գնան և ամեն բան՝ ինչ կա չկա՝ դուրս տան: Ջինվորները մտան դժոխքի մեջ և այնտեղից դուրս բերին նոր մեռած մարդկանց դիակներ, նոր կտրած գլուխներ ...

Վերջապես դուրս եկան այդտեղից և գնացին դեպի տաճարը: Բախեցին տաճարի դուռը, որ քուրմերը բաց անեն և անձնատուր լինին, բայց ներսից ձայն հանող չեղավ: Դուռը կոտորտեցին զինվորները և ներս գնացին, բայց ներսը մարդ չգտան, վերև նայեցին և մի նոր տեսարան բացվեց նրանց առջև. բոլոր քուրմերը և քրմապետը կախվել էին առաստաղից և դեռ ճոճվում էին իրենց պաշտած հնդկացի կուռքերի դիմաց: Երբ որ այդ մասին հայտնեցին թագուհուն, նա ասաց.

— Այդ մահը շատ թեթև է դրանց համար, բայց վնաս չունի, թողեք այդպես մնան, միայն թո՛ւյլ տվեք ժողովրդին, որ ներս գնան և երկրպագություն տան իրանց սուրբերին:

Դրսումը ամբողջված և գրգռված մարդիկը հեղեղի պես ներս թափվեցին և կատաղի կերպով հարձակվեցին կուռքերի վրա և ջարդուփշուր արին իրանց երեկվան պաշտած աստվածներին: «Ի՛նչ հեշտ են ջարդվում այս գարշելիները, մինչդեռ մենք կարծում էինք, թե անհպելի և անմատչելի են», ասում էին շատերը: Դուրս տվին բոլոր անոթներն ու սպասները, քարուքանդ արին խորաններն ու ծածկարանները, անթիվ ոսկի և արծաթ գտան, բայց առանց մի բան հափշտակելու և գողանալու՝ ամեն ինչ տարան թափեցին հրապարակի մեջ թագուհու առջև, *իսկ թագուհին կարգադրեց, որ քուրմերի բոլոր այդ ունեցածը բաժանվի դժոխքից ազատվածներին*: Երբ որ մեհյանի մեջ էլ ոչինչ չմնաց, ամեն ինչ տակն ու վրա արին, իրանց արդար գայրույթի վերջին մրուրը թափեցին խեղդամահ եղած քուրմերի գլխին: Յած բերին դժոխքի արբանյակներին և ամենքին կտոր-կտոր անելով դուրս նետեցին պարսպից, որ գազաններին լափ դառնան:

Մնացած անելիքը թագուհին հանձնեց իր հարյուրապետներից մեկին, իսկ ինքը գնաց իր վրանը, ուր նրան անհամբեր սպասում էր Վաչագանը: Երկու սիրելիները նստեցին իրար կողքի և միմյանց նայելուց չէին կշտանում: Վաղինակը մոտեցավ թագուհուն, համբուրեց նրա ձեռքը և մյուս կողքին նստելով՝ սկսեց հեկեկալ մորը գտած երեխայի պես:

— Դու ոչ թե այսօր ես փրկել մեզ, իմ անմահ թագուհի, այլ շատ օրեր արանից առաջ, երբ ես տեսա քեզ երագումս, հենց այդ զգեստիդ մեջ:

— Դու սխալվում ես, Վաղինակ, — ասաց Վաչագանը, — թագուհին այն ժամանակը փրկեց մեզ, երբ որ քեզ ասաց. «Ձեր թագավորի որդին արհեստ գիտե՞»: Մի՞տղ է, որ դու էլ մի կուշտ ծիծաղել էիր:

...Այդ միջոցին քաղաքապետը եկավ թագավորի ոտներն ընկավ, շնորհավորեց նրա ազատությունը և հայտնեց, որ ճաշ էր պատրաստել կանաչ

դաշտումը գորքի համար: Թագավորը հրաման տվավ գորականներին, որ երթան ճաշեն և ուրախություն անեն, իսկ ինքը գնաց Անահիտի մոտ, ուր արդեն օրհորդներն ու տիկիկները ճոխ սեղան էին սարքել և թագավորի գալուն էին սպասում, որ հացի նստեն: Այդտեղ էր Վաղինակը՝ փոխած իր հնոտիքը և գեղեցիկ հագուստով գուգված: Այդպես գեղեցիկ և ուրախ ճաշ էր արած Վաչագանը իր բոլոր կյանքումը...

Վաչագան թագավորի այս արկածքի լուրը տարածվեց բոլոր քաղաքներում և գյուղերում: Այդ մասին խոսում էին մինչև օտար երկրներում էլ և ամենայն տեղ Անահիտի և Վաչագանի գովասանքն էին անում: Ազգային երգիչները գյուղե գյուղ և քաղաքե քաղաք պտտելով՝ այդ անցքի պատմությունն էին անում երգերով: Ափսոս, որ այդ երգերը մեզ չեն հասել, բայց ինչ որ արել են Վաչագանն ու Անահիտը իրանց աշխարհի համար, այդ բանը հեքիաթի ձևով պատմում են մինչև այսօր էլ: Այդ հեքիաթի գլխավոր միտքը այն է, որ *թագավորի կյանքը արհեստը է փրկել*: Այս լավ միտք է, և ինչ ժողովրդի մեջ որ գտնվում է մի այսպիսի սրբացած ավանդություն, դա ցույց է տալիս, թե ուրեմն այն ժողովուրդը մեծ նշանակություն է տալիս արհեստներին, աշխատասիրությանը, որից գլխավորապես կախված է ժողովրդի բախտավորությունը...

ՄՈՒՐԱՅԱՆ

## ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ԶՎԱՐՃԱՆՈՒՄ ԵՆ (Հատվածներ վիպակից)

### Առաջին հանդիպումն

Գարնանային սիրուն երեկո էր: Արեգակը խոնարհվում էր դեպի յուր մուտքը: «Ազնվականական» կոչված բարձրադիր ծառուղին գրեթե խեղդվում էր զբոսնողների շատությամբ...

«Ազնվականական» ծառուղիում արգելված չէր, իհարկե, և աղքատներին զբոսնելու, միայն թե նրանք քաղաքավարությամբ խույս էին տալիս դեպի մենավոր ճեմելիքները, որպեսզի իրենց ներկայությամբ չխանգարեն հարուստների կամ գոնե հարուստ երևացողների զվարճությունը: Այս վերջինների թվին պատկանում էին տիկիկ Բերնարի երեք նորատի կարողուհիները: Սրանք բոլորն էլ հայուհիներ էին, խեղճ ընտանյաց աղջիկներ,

որոնք կարանցում հենց նոր էին ավարտել մի մեծ աշխատանք, և տիկին Բերնարն արձակել էր նրանց մի փոքր ժամանակով այգում զբոսնելու համար:

Հեղինեն, որին յուր ընկերուհիները Ելենա էին կանչում, յուր ընկերուհիների մեջ փայլում էր յուր արտաքո կարգի գեղեցկությամբ: Նրա բարձր հասակը, շնորհալի քայլվածքը և մանավանդ երկարատեգ արտևունքներով եզերված կախարհող հայացքը գրավել էին զբոսնողների ուշադրությունը: Նրա դեմքի յուրաքանչյուր շարժվածքը, նրա նրբաձայն ծիծաղը, նրա խոսակցությունը դիտում և զննում էին հարյուրավոր աչքեր: Հեղինեի ընկերուհիները, որոնք ավելի զարգացած էին այդ բաները նկատելու համար, հասկացնում էին նրան, և սա ընդ ակամբ զննում էր այդ բոլորը և հրճվում կատարյալ երեխայական անմեղությամբ: Բայց նա չէր տեսնում, թե ինչպիսի նախանձոտ հայացքներ էին զգում իր վրա շքեղ հագնված, բայց ոչ գեղեցիկ տիկինները և օրհորդները, մանավանդ երբ սրանց երիտասարդ ասպետները հիացմունքով մատնացույց էին անում յուր վրա և ցանկություն էին հայտնում յուր ո՞վ լինելն իմանալու համար:

Հեղինեն թիֆլիսեցի չէր: Նրա ծնողները նոր էին գաղթել այստեղ մի գավառական քաղաքից: Նրանք շատ պարկեշտ մարդիկ էին: Հեղինեի հայրը պարապում էր հյուսնությամբ, մայրը մերձակա հարուստ տներում լվացարարություն էր անում, իսկ իրեն մի քանի ամիս էր, ինչ տվել էին տիկին Բերնարի մոտ կար ու ձև սովորելու: Հեղինեն այդտեղ էլ մի քանի ուրիշ աղջիկների պես ապրում, ուտում և հագնվում էր տիկին Բերնարի հաշվով, և միայն կյուրակե օրերը զնում էր յուր ծնողացը այցելելու:

Հասարակությունը, որի մեջ ապրում էր նա, և որը բաղկացած էր աղքատ ընտանյաց աղջիկներից, կարող էր վնասավոր լինել Հեղինեի պես մի անփորձ աղջկա համար: Հաճախ նա լսում էր յուր ականջների համար բուլբուլին խորթ գրույցներ, անպատկառ խոսակցություններ, որոնք առհասարակ անպակաս են լինում կարանցներում: Բայց նա կարողանում էր տիրել իրեն: Նա զզվում էր: Եվ այդ տեսակ անախորժ վայրաբանությունները չլսելու համար քաշվում էր կարանցի մի հեռավոր անկյունը և լուռ ու մունջ կարում էր յուր գործը: Բայց միշտ այդպես վարվել նրան չէր հաջողվում: Պատահում էր, որ նա ստիպված էր լինում կարել մի մեծ գործ, երեք-չորս աղջիկների հետ միասին, որոնք այդ ժամանակ էլ շարունակում էին իրենց վայրաբանությունները, մանավանդ, երբ տիկին Բերնարն այստեղ չէր լինում: Այդպիսի դիպվածներում Հեղինեն գործ էր դնում յուր բոլոր ուժը՝ այդ աղջիկների մեջ ամոթի զգացմունքը զարթեցնելու համար, և նրա ջանքը երբեմն պակասվում էր հաջողությամբ:

Բոլոր կարողների մեջ նա միայն երկու աղջիկների հավանեց, որոնք թե՛

բնավորությամբ և թե՛ աշխատասիրությամբ նմանվում էին իրեն: Դրանցից մեկը Նինոն էր, խառատ Օսեփի աղջիկը, որ թեպետ մի առանձին գեղեկություն չուներ, բայց հայտնի էր յուր չափազանց բարի և ազնիվ բնավորությամբ, իսկ մյուսը դազազ Ալեքսի թոռը՝ Շուշանը, որ մեծ հեղինակություն ուներ կարանոցի մեջ, իբրև ամենից ավելի հառաջադեմ և լավ կարող աղջիկ: Այդ երկուսին էլ Հեղինեն յուր համար մշտական ընկերուհիներ ընտրեց: Նրանք երեքն էլ միմյանց չափից դուրս սիրում էին, սեղանի վրա միշտ միասին էին նստում, մեծ գործերը միասին կարում և ազատ ժամանակները միասին զբոսնում: Հենց այսօր էլ այգու մեջ դրանք երեքը միասին էին ման գալիս: Բայց ինչպես ասացինք, «Ազնվականական» ծառուղիի մեջ զբոսնողների ուշադրությունը միայն Հեղինեն էր գրաված:

Երկու երիտասարդներ, որոնցից մեկն ավելի աչքի էր ընկնում յուր դեմքի և կազմվածքի գեղեկությամբ և հազնված էր խիստ նուրբ ճաշակով, ուշի-ուշով հետևում էին տիկին Բերնարի կարողուհիներին: Յուրաքանչյուր անցուդարձի մեջ նրանք մի քանի անգամ պտույտ էին գալիս երեք աղջիկներին դեմ առ դեմ պատահելու համար և նրանց հանդիպած ժամանակ խոր ուշադրությամբ սևեռում էին իրենց աչքերը Հեղինեի վրա, որն ամոթից իսկույն շառագունում էր: Ամբողջ զբոսանքի ժամանակ մի բույս անգամ նրանք չհեռացան այդ աղջիկներից: Նինոն և Շուշանը գիտեին, որ երկու երիտասարդների դեգերանքը Հեղինեի համար էր, սակայն նրանք ոչ միայն չէին նախանձում նրան, այլև այդ առիթով նրա հետ կատակներ էին անում:

— Ելենա, այս երիտասարդները շատ են գրավվել քեզով, նրանցից մեկը անպատճառ քեզ ուզելու է, — ասում էր նրան Շուշանը ծիծաղելով:

— Ինչո՞ւ համար ես կարծում, որ ինձնով են գրավվել և ոչ թե քեզնով կամ Նինոյով, — պատասխանեց Ելենան շառագունելով:

— Ի՞նչ հարկ կա այդ հարցնելու, որովհետև դու ավելի գեղեցիկ ես, քան թե մենք երկուքս, — շտապով կցեց Նինոն և գաղտուկ դիտեց Շուշանին: Նրանք երկուսը միասին սկսան ծիծաղել:

— Ելենա՛, տե՛ս ի՞նչ գեղեցիկ տղա է այդ երիտասարդը, — կրկին դիմեց նրան Նինոն ծիծաղելով, երբ երկու երիտասարդները դեմ առ դեմ հանդիպեցին նրանց:

— Ախ, Նինո, դու բոլորովին զայրացնում ես ինձ, — բարկացած պատասխանեց նրան Ելենան ու ուղղվեցավ դեպի գառիվայր ճեմեկիքը տուն վերադառնալու դիտավորությամբ: Նինոն և Շուշանը քրքջալով հետևեցին նրան:

Բայց մի քանի քայլ հազիվ էր փոխել Ելենան, որ գեղեցիկ երիտասարդը հեռվից յուր աչքովն ընկավ: Նրանց հայացքները պատահեցին միմ-

յանց և մի քանի րոպե դեպի իրար սևեռած մնացին: Ելենան տեսավ, որ երիտասարդն իրոք շատ գեղեցիկ էր, Նինոն իրավունք ուներ նրանով հետաքրքրվելու: Բայց նա շատ երկար չնայեց նրան, այլ աչքերը դարձնելով շարունակեց յուր ճանապարհը:

Յուր ընկերուհիները երկու հայացքների միմյանց պատահելը չնկատեցին:

Երկու երիտասարդները նույնպես ուղղվեցան դեպի գառիվայր ծառուղին: Նրանք հետևում էին երեք ընկերուհիներին:

— Մամվել, մի՞թե դու չես ճանաչում այս աղջկանը, — հարցնում էր գեղեցիկ երիտասարդին յուր ընկեր Մարգարը:

— Չեմ ճանաչում, մինչև այսօր էլ տեսած չեմ:

— Չարմանք, ի՞նչ է շինում ուրեմն քո Սալոմեն, եթե այսպիսի թռչունները քեզանից անհայտ կարող են ապրել Թիֆլիսում:

— Ի՞նչ գարմանք, նա խո ամբողջ քաղաքը չի ճանաչում:

— Չէ, բարեկամ, չէ. ես չեմ հավատում, թե դու այս աղջկան տեսած չլինիս. երևի ժլատություն ես անում և կամ փորձել ես, ու ձեռքդ խաղողին չէ հասել:

— Ինչ վերաբերում է ժլատության, կարծում եմ՝ դու ինքդ էլ չես կարող հավատալ, թե երբևիցե ես կարող եմ ժլատ լինել: Բայց թե փորձել եմ ու ձեռքս խաղողին չէ հասել, այդ ինձ համար չէ ասված, եթե այդպես բան պատահելու լինի ինձ հետ, դա առաջին անհաջողությունը կլինի իմ ամբողջ կյանքում:

— Դու կարո՞ղ ես ապացուցանել, որ այս աղջկա վերաբերությամբ ոչինչ անհաջող փորձ չես արել դու:

— Որքան ժամանակ ես տալիս ինձ:

— Մի ամիս:

Մամվելը ոչինչ չպատասխանեց:

— Եթե այդ քիչ է, ես մի ամիս էլ կավելացնեմ, — հեզմելով ավելացրեց Մարգարը: — Մի փոքր սպասիր, բարեկամ, թո՞ղ տեսնեմ այս աղջիկները ո՞րտեղ են մտնում և հետո ես քեզ կպատասխանեմ, — ասաց նրան Մամվելը և լռեց: Մարգարը նույնպես լռեց: Նրանք երկուսը միասին հետևեցին երեք աղջիկներին:

Վերջիններս մտան մի խանութ, որի վերա ոսկեգօծ մեծ տառերով գրված էր՝ «Տիկին Մարգարիտա Բերնար»: Սա տիկին Բերնարի կարանոցն էր:

Մամվելը տեսնելով, թե որտեղ մտան աղջիկները՝ հանգստացավ և դառնալով դեպի ընկերը հարցրեց.

— Դու ո՞րքան ժամանակ տվիր ինձ ապացուցանելու համար, որ ես այս աղջկա վերաբերությամբ ոչինչ անհաջող փորձ չեմ արել:

- Մի ամիս, — պատասխանեց Մարգարը:
- Այդ շատ է, կյուրակե օրն այդ աղջիկը իմ առանձնարանում կլինի, և ես քեզ կհրավիրեմ այնտեղ միասին նրա հետ ճաշելու:
- Ճշմարի՞տ ես ասում, — ծիծաղելով հարցրավ Մարգարը:
- Դու այդ կտեսնես, — հակիրճ պատասխանեց Սամվելը և, ողջունելով բարեկամին, հեռացավ:

[Պայմանավորվելու երեկոյան երիտասարդը հանդիպում է մի ծեր կնոջ...]

- Ես քեզ վերա շատ եմ բարկացած, Սալոմե, գիտե՞ս, թե՛ ոչ:
- Ի՞նձ վերա, և ինչո՞ւ համար, որդի, — վախենալով հարցրեց նրան Սալոմեն:
- Տիկին Բերնարի կարանցում մի աղջիկ կա, դու նրա մասին ինձ ոչինչ տեղեկություն չես տվել մինչև այսօր:
- Տիկին Բերնարի... այդ կարանոցը ես...
- Այդ կարանոցը դու երևի չես էլ ճանաչում:
- Այո՛, որդի՛, ինչ թաքցնեմ, չեմ ճանաչում:
- Հիմա՛ր, թե ասում էիր ամբողջ Թիֆլիսը ճանաչում ես. մինչև այսօր խաբում էիր ինձ:
- Ինչո՞ւ այդպես բան ես ասում, որդի, ես քեզ ինչո՞ւ համար պիտի խաբեմ, մի՞թե ամբողջ Թիֆլիսում մի այնպիսի կորած անկյուն չի՞ պատահիլ, որը ես չճանաչեմ:
- Բերնարի կարանոցը կորած անկյուն չէ, նա քաղաքի մեջտեղումն է և ամենալավ փողոցի վրա:
- Հազար անգամ ներողություն եմ խնդրում: Բայց ի՞նչ ես հրամայում, ասա, որդիս, ես իսկույն կկատարեմ:
- Վաղը ամեն բան վերջացած պետք է լինի:
- Հա՛, տիկին Բերնարի կարանոցը գտնվում է Ս... փողոցի վրա, — շարունակեց երիտասարդն ընդհատված խոսակցությունը: — Այդտեղ մի աղջիկ կա Ելենա անունով, բարձրահասակ, գեղեցիկ դեմքով, սև և գրավիչ աչքերով, միով բանիվ բոլոր կարողուհիների մեջ նա ամենից գեղեցիկն է: Երեկ ես նրան պատահեցա այգիում յուր ընկերուհիների հետ զբոսնելիս: Հետո ավելի մոտիկից զննելու համար անձամբ մտա տիկին Բերնարի մոտ և նրան դիտմամբ կես դյուժին շապիկներ պատվիրեցի: Այդ առիթով ես մոտեցա և այդ աղջկանը. նա հայուհի է. մի քառորդ ժամու չափ խոսեցի նրա հետ. նա ինձ կախարդեց, ես հիացած եմ նրանով, հասկանո՞ւմ ես, հիացած եմ ...
- Հասկանում եմ, որդի, հասկանում եմ, բոլոր աղջիկներն առաջին անգամ քեզ հիացնում են ...

— Այ, որ ոչինչ չես հասկանում, — ընդհատեց Սալոմեին երիտասարդը, — նա բոլորովին ուրիշ աղջիկ է, ես մինչև անգամ նրան սիրեցի, հասկանում ես ...

— Հասկանում եմ, որդի, հասկանում եմ, — ամենախոնարհ ձայնով պատասխանեց Սալոմեն:

— Այդպես, նա շատ սիրուն աղջիկ է, ես մինչև անգամ լավ տեղեկացա, թե նա ով է և որտեղացի է:

— Մի՞թե թիֆլիսեցի չէ:

— Ո՛չ, նա գավառական քաղաքներից է:

— Օ՛, օ՛, ասա կռո՛ է, էլի. բաս բանը շատ դժվար պիտի գլուխ գա, — հուսահատաբար խոսեց Սալոմեն և շարժեց գլուխը:

— Դժվար-մժվար չգիտեմ: Այսօր հինգշաբթի է, կյուրակե օրը նա իմ առանձնարանում պիտի լինի, որովհետև ես խոստացել եմ մեր Մարգարին, որ այդ օրը Ելենայի հետ միասին ճաշ տամ նրան այնտեղ:

Պառավը մի փոքր ժամանակ մնաց լուռ և աչքերը սևեռեց գետնին: Երևում էր, որ նա մի մեծ արգելք է նկատում յուր ճանապարհի վրա. նա հետզհետե ընկղմվում էր մտածողության մեջ:

— Սալոմե՛, ի՞նչ ես լռել, քնո՞ւմ ես, — գոչեց հանկարծ երիտասարդն այնպիսի ձայնով, որ պառավը վեր թռավ:

— Չեմ քնում, որդի մտածում եմ:

— Ի՞նչ ես մտածում. քեզ խոսք եմ ասում. կյուրակե օրը Ելենան իմ առանձնարանում պիտի լինի:

— Լսեցի, որդի, լսեցի:

— Լսելը բավական չէ. դու ինձ ասա՛, խոստանո՞ւմ ես, որ նրան կբերես ինձ մոտ:

— Մի փոքր համբերություն ունեցիր, որդի, առաջ մի տեսնեմ ինչ աղջիկ է, ասում ես, թե թիֆլիսեցի չէ, կարելի է՝ ծնողները չեն համաձայնում, այն ժամանակ շատ դժվար...

— Լռիր, լռիր, — ընդհատեց Սալոմեին երիտասարդը, — ես քեզ ասել եմ, որ ինձ մոտ այդպիսի բաներ չխոսես, «չեմ կարող» կամ «դժվար է» բառերն ինձ մոտ բերանիցդ չհանես, հասկացա՞ր: Կյուրակե օրը նա ինձ մոտ պիտի լինի:

Այս ասելով երիտասարդը վեր կացավ տեղից:

— Ինչո՞ւ ես բարկանում, որդիս, եթե այդ է քո ցանկությունը, ինչպե՞ս կարող եմ հակառակել, — հեզությամբ պատասխանեց պառավը, — միամիտ եղիր, կերթամ, կաշխատեմ և չեմ ուտիլ, չեմ քնիլ, մինչև չկատարեմ քո ցանկությունը, Սալոմեի համար այդ խո առաջի՞նք չէ:

— Այ, այդպես պետք է խոսես, Սալոմե, այն ժամանակ ես քեզանից

շնորհակալ կլինիմ. աշխատիր, որ երբեք ինձ չբարկացնես, դու խո գիտե՞ս, ես ինչ բնություն ունեմ:

Այս ասելով Սամվելը հանեց գրպանից յուր պորտմոնեն և մի քանի թղթադրամներ պառավի ձեռքը խրելով դուրս գնաց սենյակից:

*Մալոմեի եկամտի աղքատը հերկյալն էր. գրնել հարուստ և շռայլող երիտասարդների համար զվարճության նորանոր առարկաներ, այսինքն՝ բարեկամուհիներ, տարտիածուներ... նա այնքան հնարագետ և ճարպիկ էր, որ այդ տեսակ գործերից ամենադժվարին անգամ աներկյուղ ձեռնարկում էր և հաջողությամբ զուլի հսկում: Յուր գրքացությունը այդ բանում օգնում էր նրան: Ծանոթ լինելով ամեն տեսակ ընտանիքների հետ՝ նա յուր առաջ փակ դուռ չուներ: Նա թափանցում էր անմատչելի գաղտնարանները, մտնում էր սկեսարներով և տագրներով շրջապատված հարսի առանձնարանը, խոսակցում էր հոր բռնության տակ ապրող աղջկա հետ, հիմարացնում էր հարուստ և աղքատ, բայց միշտ գեղեցիկ այրիներին, խաբում էր չքավոր մայրերին և հրապուրում թեթևտլիկ աղջիկներին...*

Ահա այսպիսի մի ծառայության համար էլ նա ծանոթացավ քաղաքի մի շատ հարուստ մարդու, այն է՝ Ադաբաբ Փուլշատյանի որդու՝ Սամվելի հետ: Վերջինս, մի քանի դեպքերում տեսնելով Մալոմեի արտաքո կարգի խորամանկությունը և ճարպկությունը, յուր սիրած գործերում, ընտրեց նրան յուր համար մշտական զվարճությանց մատակարար ամսական որոշ թոշակ կապելով նրա համար:



[Սամվելի պատվերը կատարելու համար Մալոմեն գնում է կարանոց և հանդիպում տիկին Բերնարին...]

— Հավատացնում եմ ձեզ, որ չեմ կարող, — համոզում էր տիկին Բերնարը Մալոմեին, — ձեր առաջարկածը շատ չնչին գին է համեմատելով առարկայի մեծության և այն վտանգի հետ, որին ինքս ինձ ենթարկում եմ:

— Թե առարկան մեծ և արժեքավոր է, դրան խոսք չունեմ, բայց պիտի իմանաք, որ մեր առաջարկած վարձատրությունն էլ պակաս գին չէ: Ես այդ գնով ավելի լավերն եմ ձեռք բերել: Իսկ ինչ վերաբերում է նրան, թե դուք վտանգի եք ենթարկվում մեր առաջարկությունն ընդունելով, դա բոլորովին ավելորդ երկյուղ է: Մենք խո այս բանի մասին միմյանց թողոք չե՞նք տալիս: Ո՞վ կարող է ապացուցանել, որ այդ գործում դուք եք մեղավորը:

Այս միամտացնող խոսքերի վերա տիկին Բերնարը ժպտաց: Նա կարծես դրանով կամենում էր հասկացնել Մալոմեին, թե «*քո կողմից ինչ խելք սովորեցնելն ավելորդ է, այս առաջին անգամը չէ, որ ես այդ տեսակ առևտուր եմ անում: Ուրեմն որքան էլ որ քիչ հասկացողություն ունենամ*



այդ ճանապարհների մասին, գոնե մի որևէ գրքաց Սալոմեից հետք չեմ մնալ»:

— Այսպես թե այնպես, մայրիկ, ես ձեր առաջարկությունն ընդունել չեմ կարող, — վճռաբար խոսաց տիկին Բերնարը, — ես մի գին ասացի, վերջացրի: Կամենո՞ւմ եք, տվեք, չե՞ք կամենում, բարով եկաք, ես երկար խոսելու ժամանակ չունիմ:

— Լավ, ուրեմն թող կրկնապատիկը լինի, սրա դեմ հո խոսք չունի՞ք, — վստահությամբ հարցրավ Սալոմեն:

— Չեզ ասացի, որ պակաս անկարելի է, ինչո՞ւ համար իզուր տեղը ժամանակ եք վատնում: — Այս ասելով, իբրև թե բարկացած, վեր կացավ տիկին Բերնարը և ուղղվեցավ դեպի դուռը:

Երևում էր, որ էլ խոսելու տեղ չկար, Սալոմեն մնացել էր շվարած:

— Լավ, մի՛ գնաք, համաձայն եմ, — գոչեց նա տիկին Բերնարի ետևից և յուր ձեռքը պարզեց դեպի նրան ի նշան հաճությամբ: Տիկին Բերնարն յուր կողմից սեղմեց նրան, և առևտուրը վերջացավ:

— Ուրեմն ինչպե՞ս կանեք, որ էգուց երեկոյան ես տանեմ նրան, — հարցրավ Սալոմեն տիկին Բերնարին:

— Դուք գնացեք փողը բերեք, իսկ մնացածը թողեք ինձ կարգադրելու, — հակիրճ պատասխանեց տիկին Բերնարը և հեռացավ:

Սալոմեն ուրախությամբ դուրս գնաց:

— Աղջիկներ, ինչո՞վ եք զբաղվում, մի քանիսդ թողեցեք քիչ հարկավոր գործերը և սկսեցեք կարել երեկվա պատվիրած շապիկները, նրանք շատ հարկավոր են, ես խոստացա վաղը երեկոյան հանձնել տիրոջը: — Այս խոսքերով տիկին Բերնարը մտավ կարանոցը և մի քանի աղջկերանց ձեռքից իրենց կարերը վերցնելով, փոխարենը բաժանեց պարոն Սամվել Փուլշատյանի պատվիրած շապիկներից մի-մի հատ:

Այս կարողների շարքում կային Ելենան և յուր երկու ընկերուհիները: Նրանք անընդհատ նայում էին միմյանց իրենց խորհրդավոր հայացքներով և ժպտում:

— Ուրախացի՛ր, Ելենա, էգուց պետք է գեղեցիկ երիտասարդին տեսնես, — կամացուկ շշուշաց Նինոն Ելենայի ականջում, տիկին Բերնարի ծանուցումը լսելուց ետ:

Իսկ Ելենան, որ արտաքուստ բնավ չէր հաշտվում յուր ընկերուհիների կատակների հետ, ներքուստ մեծ հրճվանք էր զգում իրեն դուր եկած երիտասարդի մասին այդքան արձակ խոսակցություններ լսելուն համար: Նա մինչև անգամ մի առանձին փութաջանությամբ սկսեց յուր կարը: Բայց տիկին Բերնարի նոր պատվերն անհանգստացնելու չափ հետաքրքրում էր նրան:

Ի՞նչ էր արդյոք պատճառը, որ նա շտապեցնում էր երիտասարդի գործը: Ելենան շատ լավ հիշում էր, որ երեկ տիկին Բերնարը նրան ոչինչ խոստում չէր արել շապիկները շուտ հանձնելու համար, և եթե արած էլ լիներ, ինչո՞ւ առավտովանից չտվավ նա այդ պատվերը կարողներին: Եվ վերջապես ո՞վ էր այն կինը, որ նրան կանչեց, ի՞նչ էր խոսում նա նրա հետ, այդ մանավանդ շատ հետաքրքրում էր իրեն, որովհետև նրա խոսածների և տիկին Բերնարի նոր պատվերի մեջ նա մի կապ էր նշմարում, բայց ճշմարտության հասու լինել չէր կարողանում:

Մինչև այն, տիկին Բերնարի մոտ շատ կանայք էին եկել, և տիկին Բերնարը շատ նոր պատվերներ էր տվել յուր կարողներին, բայց այդ դեպքերից և ոչ մեկն իրեն չէին հետաքրքրել: Իսկ այսօր... այսօր նա ամեն ել ու մոտ հետաքրքրությամբ դիտում է, բոլոր խոսակցությունները լսում է, բոլոր ակնարկները գնում է: Մի գաղտնի նախազգացմունք անհանգստացնում է նրան, նա սպասում է մի ինչ-որ նորության, որ անշուշտ իրեն պիտի վերաբերեր... և այդ նորությունը, որի ինչ լինելն ինքը չգիտեր, մերթ ուրախացնում և մերթ սարսափեցնում էր նրան:

### Անմեղությունը վաճառվում է

Մութը կոխել էր. կրպակներում հետզհետե վառվում էին կանթեղները, և գնալով փողոցների մեջ անցուղարձը կենդանանում էր: Բերնարի կարանոցը միայն բացառություն էր կազմում լուսավորված խանութների շարքի մեջ: Նրա դռները պինդ-պինդ կողպվում էին, որովհետև օրվան այդ ժամանակը այդտեղ դադարում էին աշխատանքները: Երթևեկ բանվորուհիներն արդեն ցրվել էին իրենց բնակարանները, և տիկին Բերնարի մոտ մնում էին նրա սակավաթիվ գիշերօթիկները, որոնք մի մեծ սենյակի մեջ հավաքված շաղակրատում էին, կատակներ էին անում և ծիծաղում էին: Ելենան նրանց մեջ չէր. այդ ժամանակ նա գտնվում էր տիկին Բերնարի առանձնասենյակում:

— Դու ասում ես պատրա՞ստ եմ արդեն այն պարոնի շապիկները, — հարցնում էր Ելենային տիկինը, անցուղարձ անելով սենյակի մեջ:

— Այո, ես ինքս իմ ձեռքով դարսեցի նրանց կողովի մեջ, կարող եք ուրարկել:

— Շատ լավ, շատ լավ, — մեքենաբար կրկնեց տիկինը և մի քանի անգամ անց ու դարձ անելուց ետ եկավ նստեց փափուկ բազկաթոռի վրա:

— Արի նստի՛ր ինձ մոտ, Ելենա, քեզ հետ գաղտնի խոսելիք ունիմ, — ասաց նա և մի աթոռ քաշեց իրեն մոտ:

Ելենան ծանր և կարծես ակամա քայլերով մոտեցավ տիկնոջը և նստեց նրա կողքին:

— Դու տեսա՞ր երեկվա երիտասարդին, Ելենա՛, — հարցրեց տիկինը:

— Ի՞նչ երիտասարդ:

— Այն, որ մեզ շապիկներ պատվիրեց:

— Այո՛... Ի՞նչ կա:

— Դու նրան հավանո՞ւմ ես:

— Ինչպե՞ս թե հավանում եմ, տիկին, ես ձեզ չեմ հասկանում, — հարցրեց Ելենան շառագունելով:

— Այնպե՛ս էլի, չե՞ս հասկանում, ուզում եմ ասել, հավանո՞ւմ ես նրա գեղեցկությանը, նրա շնորհքին, նրա...

— Ա՛խ, տիկին, թողեք խնդրեմ, այդ ի՞նչ հարցեր են, — դժգոհությամբ ընդհատեց նրան Ելենան և կամենում էր տեղից վեր կենալ:

— Սպասիր, ո՞ր ես գնում, ես քեզ հետ կատակի համար չեմ խոսում, այլ կարևոր գործի և քո օգտի համար, — նկատեց նրան տիկինը և ձեռքից բռնելով նստեցրեց յուր տեղը:

— Այդ երիտասարդը, — շարունակեց տիկին Բերնարը, — մի շատ պատվական երիտասարդ է. խելոք, ուսումնական և շատ հարուստ: *Նա յուր բարեկամուհու ձեռքով հայրնել է, որ քեզ հետ ուզում է ամուսնանալ, ուստի ամենից առաջ ցանկանում է, որ քեզ կրկին տեսնե:*

— Այդ բանի համար, տիկին, դուք իմ ծնողաց հետ պիտի խոսեք և ոչ ինձ հետ:

— Շատ լավ ես ասում, Ելենա, բայց քո ծնողները գավառացի մարդիկ են, նրանց չէ կարելի համոզել, որ քեզ թողնեն զնալ երիտասարդի մոտ, որ նա քեզ տեսնե, դու ավելի շուտ մեզ կհասկանաս:

— Ինչպե՞ս թե զնալ երիտասարդի մոտ:

— Հասպա նա իր տանն է ուզում քեզ տեսնել, նա մեծ մարդու որդի է, խո քո ոտքդ չի գալու:

— Ներեցեք, տիկին, ոչ ես կպահանջեմ, որ նա իմ ոտքը գա, և ոչ էլ ես կերթամ նրա մոտ. խնդրում եմ, թողեցեք ինձ հետ այդ խոսակցությունը և եթե կամենում եք, տեսնվեցեք իմ ծնողաց հետ, այդպես բաների վրա խոսելը իմ գործը չէ:

— *Լսիր, Ելենա՛, ես քեզ ախոսում եմ. դու քո բահարիցդ մի զրկվիր, այսպես բան էլ քեզ հետ չի պարտահիլ:* Քո ծնողներին նայելով քեզ հետ կամուսնանա շատ-շատ մի հյուսն կամ մի դարբին: Բայց սա քաղաքի ամենահարուստ մարդու որդին է. մոտ քսան և հինգ տեղ մեծամեծ տներ և հարյուրավոր խանութներ ունի, ապրում է իշխանի նման շքեղ պալատի մեջ. ման է գալիս սեփական կառետով. առջևը կանգնած ունի տասնյակ

ծառաներ, աղախիններ և վերջապես քաղաքի առաջին մարդն է համարվում, նրա աչքը հարստության վրա չէ. քեզ տեսել է, հավանել է, և այժմ ուզում է ամուսնանալ քեզ հետ. մի՞թե հիմար չես լինիլ, որ մերժես նրա առաջարկությունը:

— Ես չեմ մերժում նրա առաջարկությունը, տիկին, ընդհակառակը, ես բախտավոր կլինեմ այդպես ամուսին ունենալով, բայց այդ առաջարկությունն ինքս ընդունել չեմ կարող, այդ պարոնը պետք է իմ ծնողացը հայտներ յուր կամքը:

— Աղջիկ, դու գժվել ես կամ ինձ չես հասկանում: Նա խո այս րոպեին քեզ հետ չի ամուսնանում, այլ ուզում է կրկին քեզ տեսնել, լավ տնտղել, այդ բանի համար չարժե, որ հայտնենք քո ծնողացը, և նրանք էլ, ով գիտե, ի՞նչ հիմար պատասխան տան, և գործը քանդվի: Այս երեկո լուռ ու մունջ կերթաս նրա մոտ (նա միայնակ մի առանձին տան է կենում), այնպես որ մեր աղջիկներից ոչ ոք ոչինչ չի իմանալ, մի կես ժամ քեզ կտեսնե, հետո կխուսա և էլի կվերադառնաս ինձ մոտ:

— Ինչ եք խոսում, տիկին, ես վեր կենամ գնամ նրա մոտ, թե ինչ է՝ «եկել եմ, ինձ տեսնե՞ս...»:

— Ո՛չ, ո՛չ: Հիմար չեմ, եթե ուղարկեմ, ես գիտեմ ի՞նչպես կուղարկեմ, դու քո համաձայնությունը տուր, մնացածը իմ գործս է:

Ելեճայի հաստատամտությունը խախտվել էր: Յուր դեպի երիտասարդն ունեցած գաղտնի սերը, տիկնոջ խոսածների ազդեցությունը, հարուստ ամուսին ունենալու հույսը, բոլորը խառնվել միացել էին նրա մեջ. նա տարուբերվում էր հուստ և երկյուղի, ուրախության և անհանգստության մեջ, նա հակվում էր դեպի համաձայնվելու կողմը:

— Դիցուք թե համաձայնվում եմ, բայց ի՞նչ պատրվակով եմ գնում նրա մոտ և ո՞ւմ հետ:

— Պատրվա՞կը, ա՛յ, այս շապիկներն են: Ես նրանց կտամ իմ, մի բարեկամ կին ունեմ, Սալոմե անունով, նրա ձեռքը, երկուսդ միասին կնստեք ծածկված կառքում, կերթաք այն պարոնի տունը: Եվ դու կասես իբրև թե շապիկները բերել եմ տիկին Բերնարի կողմից, որ հանձնեմ ձեզ: Այնուհետև երիտասարդը գուցե մի փոքր կուշացնի քեզ, թեյ, բան կառաջարկի, այդ կնոջ հետ միասին մի փոքր կնստեք, կխմեք և կրկին կվերադառնաք:

— Բայց այդ ի՞նչ կին է, որ ինձ հետ պիտի գա, — կարծես անվստահությամբ հարցրեց Ելեճան:

— Օ՛ր, դա մի շատ բարի կին է, մի քանի տարի առաջ նա ինձ մոտ կար էր անում, այժմ խեղճի աչքերը լավ չեն տեսնում, բայց ես երբեմն-երբեմն նրան այդ տեսակ ծառայություններ եմ հանձնում և վարձատրում եմ: Այո՛, մի շատ բարի կին է: Բայց դու մի ուշանար, գնա լվացվիր և մի փոքր ուղ-

դիր հագուստներդ,— ավելացրեց տիկինը,— որքան էլ գեղեցիկ լինիս, դարձյալ լավ չէ, որ այդպես քծծված մազերով և ջարդված շորերով երևաս այն երիտասարդի մոտ, քո պակասությունն էլ իմ կարանցոյցին է վերաբերում:

Ելեման գնաց: Մի ներքին ուրախություն, որից դեռ չէր բաժանվում երկյուղի նման մի զգացմունք, լցրել էր նրա սիրտը: Նա պետք է տեսներ այն երիտասարդին, որը իրեն ամուսնություն է առաջարկում և որը գեղեցիկ ու հարուստ էր...

Եվ նա գնաց լվացվելու:

Այդ միջոցին ներս մտավ և Սալոմեն, որը մինչև այն պահված էր ետևի սենյակում:

— Հա՛, ամեն բան պատրաստ է,— խոսեց տիկին Բերնարը նրան տեսնելով,— *քե՛ր մնացած փողը, որ մեր հաշիվները վերջացնենք:*

Սալոմեն ուրախությամբ տարավ ձեռքը գրպանը և հանելով մի քանի ծալած թղթադրամներ, տվեց տիկնոջն ասելով՝ «Երեկ ես վճարեցի ձեզ 250 ռուբլին և ահա ինչպես պայմանավորված էինք, տալիս եմ ձեզ մյուս 250 ռուբլին»:

Տիկին Բերնարը համարեց փողերը և գրպանը դնելով գլխի թեթև շարժումով շնորհակալություն արեց Սալոմեին: Հետո նա պատմեց ինչ որ ինքը խոսացել էր Ելեմայի հետ և պատվիրեց նրան, որ յուր խոսածների համաձայն վարվի և խոսա նրա հետ:

— Իսկ ինչ վերաբերում է Ելեմայի երիտասարդի մոտ մնալուն,— ավելացրեց տիկինը,— նա կարող է մնալ այնտեղ այնքան ժամանակ, որքան ինքը կկամենա, նրա ծնողներին հարկ եղած պատասխանը ես ինքս կտամ:

Կես ժամից հետո Ելեման և Սալոմեն կարած շապիկներն իրենց հետ վերցրած, նստեցին մի ծածկված կառքի մեջ և ուղղվեցին դեպի Սամվել Փուլշատյանի առանձնարանը:



Սամվել Փուլշատյանի առանձնարանի գոյության մասին տեղեկություն չունեի մինչև անգամ յուր հայրը: Նա կառուցվել էր Սամվելի անվամբ և սեփական փողերով: (Չմոռանանք հիշել, որ երիտասարդը սեփական էր անվանում այն փողերը, որ նա ճարպկությամբ և հաշիվներ խարդախելով գողանում էր յուր հորից:) Այս փոքրիկ տան մեջ ամեն բան նախատեսված և պատրաստված էր գեղեցիկ ճաշակով, և այստեղ երիտասարդ Փուլշատյանն անցուցանում էր գիշերային ժամերի մեծ մասը յուր գեղեցիկ սիրուհիների և երբեմն էլ քեֆ սիրող մտերիմների հետ:

Երեկոյան ժամը ութն էր և մութը տիրել էր ամեն կողմ: Սամվելը լուռ և մտախոհ ճեմում էր գեղեցիկ կահավորված ընդունարանում: Առաստաղից կախված թանկագին ջահը յուր հինգ փառավոր կանթեղներով աչք կուրացնելու չափ լուսավորում էր սենյակը: Ամեն կողմը փայլում էր հարստութուն և ճոխութուն: Իսկ երիտասարդ տանուտերը յուր բարեկազմ հասակով, գեղեցիկ դեմքով և գանգրահեր ճակատով լրացնում էր այդ սենյակի զարդարանքը:

Գլխավոր դռան հնչակը ամուր-ամուր քաշեցին: «Նա է, եկավ...», — շշնջաց ինքն իրեն Սամվելը և զնաց նստեց թավշապատ բազկաթոռի վրա և ձեռքն առնելով օրվան լրագիրը սկսեց մեքենայաբար կարդալ նրան:

Մի քանի րոպեից հետո ընդունարանի դուռը բացվեցավ, և ներս մտավ Սալոմեն:

— Միայնա՞կ ես, ի՞նչ է, ո՞ր է Ելենան... — անհամբերությամբ վեր բռավ բազկաթոռից Սամվելը և այս խոսքերով դիմեց Սալոմեին:

— Միայնակ չեմ, նա այստեղ նախասենյակումն է, բայց ամաչում է գալ:

— Ի՞նչ հիմարություն, և դու թողել ես նրան այնտեղ միայնակ: — Այս ասելով Սամվելը դուրս բռավ նախասենյակ և տեսնելով Ելենային, որ կողովը ձեռքին կանգնած էր այստեղ, իսկույն բացականչեց՝ «Ա՛, բարյավ ձեզ, օրիորդ, ինչո՞ւ համար եք այդտեղ կանգնել, խնդրեմ ներս հրամայեցեք»:

Ելենան ոչինչ չպատասխանեց, բայց երիտասարդին տեսնելով սաստիկ շառագունեց:

— Դուք դարձյալ կանգնո՞ւմ եք, բայց ես խնդրում եմ ձեզ:

— Ներս գալու ոչինչ կարիք չկա, պարոն, ես տիկին Բերնարի կողմից բերի այս շապիկները ձեզ ցույց տալու համար, խնդրեմ մայեցեք և եթե մի որևէ պակասություն նշմարեք, ասացեք, որ ուղղենք: — Այս ասելով նա վայր դրավ ձեռքի կողովը պատուհանի վրա:

— Խնդրեմ ներս բերեք, ես այնտեղ կնայեմ, — ասաց Սամվելը և ակնարկելով Սալոմեին, ինքը ներս մտավ:

Սալոմեն վերցրեց կողովը և Ելենայի ձեռքից բռնելով, գրեթե գոռով, ներս քաշեց նրան դեպի երիտասարդի ընդունարանը:

— Ասացեք խնդրեմ, ի՞նչ կա քաշվելու, մի քանի րոպե նստեցեք այստեղ, իսկ ես կնայեմ շապիկները, — այս խոսքերով նա աթոռ առաջարկեց Ելենային: Նրանք նստեցին:

Մի քանի վայրկյան Սամվելը տնողեց շապիկները, մայեց աջ, ձախ և ապա «շատ լավ է, շատ գեղեցիկ է» ասելով, կանչեց աղախնին և հանձնեց նրան, մինևույն ժամանակ պատվիրելով թեյ բերել հյուրերի համար:

Իսկույն հայտնվեցավ գեղեցիկ և մաքուր հագնված ծառան և արծաթյա ասիսեով թեյ առաջարկեց յուր տիրոջը և նրա հյուրերին, թեյի հետ էլ քերելով կաթ և շաքարահաց:

Ելեման դժվարանում էր մինչև անգամ այդ հասարակ հյուրասիրությունն ընդունելու, բայց Սամվելն այնքան շատ ստիպեց նրան, որ նա հակառակել չկարողացավ:

— Այժմ մենք կարող ենք գնալ, — ցած ձայնով շշուջաց Սալոմեի ականջում Ելեման յուր բաժակը դատարկելուց հետո և վեր կացավ աթոռից:

— Ո՛չ, դեռ ձեզ հետ մի փոքր խոսելիք ունիմ, օրիորդ, մի շտապեք, — նկատեց Սամվելը նույնպես տեղից բարձրանալով:

— Հրամայեցեք, ես լսում եմ, — համեստությամբ պատասխանեց Ելեման:

— Ես առանձին պետք է խոսեմ ձեզ հետ:

— Ուրեմն ես դրսումը կսպասեմ, — ասաց Սալոմեն և արագ դուրս գնաց սենյակից:

— Սպասի՛ր, ո՞ր ես գնում, — բացականչեց Ելեման Սալոմեի ետևից և պատրաստվեցավ ինքը ևս դուրս գնալու:

— Դուք ո՞ր եք գնում, օրիորդ, սպասեցեք, ես ձեզ հետ շատ կարևոր խոսելիք ունեմ, — այս ասելով բռնեց երիտասարդը Ելեմայի ձեռքից և գոռով նստեցրեց թավշապատ դիվանի վրա:

— Ասացեք խնդրեմ, ինչ որ կամենում եք. ես շատ ուշանալ չեմ կարող, տիկին Բերնարն ինձ սպասում է:

— Ես ձեզ չեմ ուշացնիլ. բնավ մի անհանգստանաք, — միամտացրեց նրան Սամվելը և սկսավ յուր «կարևոր խոսելիքը»:

Ի՞նչ էր իսկապես նրա «կարևոր խոսելիքը», ես այդ մի առ մի չեմ կրկնիլ այստեղ՝ ձեզ չճանձրացնելու համար: Այսքանը միայն կասեմ, որ դա շատ նման էր այն սիրալիք և սրտառույ խոսակցության, որ տեղի է ունենում առաջին անգամ միայնության մեջ միմյանց պատահած երկու սիրող սրտերի, երկու միմյանց անկեղծաբար պաշտող հոգիների մեջ:

Սամվելը գեղեցիկ խոսելու ձիրք ուներ, նա գիտեր գրավել, գիտեր հրապուրել: Նույնիսկ յուր մարմնական գեղեցկությունն օգնում էր նրան այդ բանում: Նա ճանաչում էր յուր ուժը, ճանաչում էր և գեղեցիկ սեռի թուլությունը:

Եվ ահա բոլոր այդ գեներով նա զինվել էր մի տկար և անմեղ աղջկա դեմ, մի աղջկա, որ լռիկ, յուր սրտում, սիրում էր նրան:

Այս և սրա նման գողտրիկ խոսքեր անընդհատ շռայլում էր նա յուր սիրուհու առաջ: Ելեման, որ յուր ամբողջ կյանքում այսպիսի քնքուշ խոսքեր լսած չուներ, զմայլած նայում էր նրան, նա հափշտակվել էր և բնավ չէր հիշում ոչ տիկին Բերնարի կարանոցը և ոչ յուր ծնողները:

— Իսկ դու, Ելենա, մի՞թե դու ինձ չես սիրում:

— Ե՞ս, ես էլ քեզ շատ եմ սիրում, շատ, շատ... — այսքանը միայն կարողացավ արտասանել անմեղ աղջիկը և շառագունելով գլուխը կախեց ցած:

— Օ՛, քեզ կարելի է միայն պաշտել, — բացականչեց երիտասարդը և յուր հափշտակության մեջ ամուր գրկելով նրան, համբուրեց նրա շրթունքները:

Այդ համբույրից Ելենան ցնցվեցավ ամբողջ մարմնով և խլվելով երիտասարդի գրկից շառագունված ետ քաշվեցավ:

— Ա՛խ, ի՞նչ եք անում դուք, — շնջաց նա հագիվ լսելի ձայնով և ապա տեղից վեր բարձրանալով՝ «Ես պիտի գնամ, ուշանում եմ», — ասաց նա և ուղղվեցավ դեպի դուռը:

— Ո՛չ, սիրելիս, ես քեզ այդպես շուտ չեմ թողնիլ, — խոսեց Սամվելը նույնպես տեղից վեր բարձրանալով և Ելենայի ձեռքից բռնելով, — դու դեռ ինձ մոտ պիտի ընթրես, մենք դեռ մի քանի ժամ էլ միասին կանցկացնենք, և հետո կերթաս:

— Ո՛չ, խնդրում եմ, ինձ բաց թողեցեք, ես կամենում եմ գնալ...

— Այդ անկարելի է, Ելենա, դու պիտի մնաս, ես խնդրում եմ: Եվ մի՞թե դու կկամենայիր իմ խնդիրը մերժել:

— Բայց տիկին Բերնարդ... ա՛խ, նա ինձ կսպասե... գիտե՞ք, մեր այնտեղի աղջիկները շատ վատ աղջիկներ են, նրանք հազար մի բաներ կխոսեն...

— Ո՛չինչ, ո՛չինչ, հոգյակս, նրանք ովքե՞ր են, որ դու նրանց խոսելու վրա ուշադրություն ես դարձնում, մի շաբաթից հետո մենք պսակված կլինենք, դու ամենից հարուստ մարդու ամուսինը կդառնաս, և նրանք հեռվից միայն մտիկ կտան քեզ վերա և չեն համարձակվիլ անգամ քեզ բարևել: Այո՛, դու այդ տեսակ աղջիկներին քեզ աղախին պիտի ունենաս, արժե՞ ուրեմն նրանց վերա մտածել:

Այսպիսի հուսալիր խոսքերով Սամվելը դեռ հանգստացնում էր Ելենային, երբ ծառան մտավ և հայտնեց, որ սեղանը պատրաստ է:

Երիտասարդը Ելենային յուր թևն առավ և ուղղվեցավ դեպի սեղանատունը:

— Բայց խնդրում եմ, այն կնոջն էլ կանչեցեք, և եթե մենք ընթրում ենք, թո՛ղ նա էլ մեզ հետ ընթրի, նա երևի ինձ սպասում է այնտեղ, — ասաց Ելենան, չկամենալով միայնակ սեղանի վերա գտնվիլ օտար երիտասարդի հետ:

— Ա՛, ինչպես կարելի է, Ելենա: Էզուց մենք պետք է ամուսիններ լինենք, և այսօր ուզում ես, որ մեր սեղանի վերա մեզ հետ ընկերացնենք մի



ողորմելի աղքատ պառավի: Դու անփորձ ես, դու հարուստների շրջաններում չես գտնվել, դա շատ ամոթ բան է մեզ համար: Այն կինը կարող է ներքև մեր ծառայի և աղախնի հետ ընթրել, նրա համար ամեն բան կհոգացվի, դու միամիտ եղիր:

Ելենան ոչինչ չուներ պատասխանելու, նա լռեց, որովհետև կարծում էր, թե երիտասարդի խոսածներն այնպիսի ճշմարտություններ էին, որ ինքը չէր կարող հասկանալ:

Նրանք սկսեցին ընթրել:

Ծառան հետզհետե ներս էր բերում զանազան համեղ խորտիկներ, և Սամվելն ամեն մեկից յուր ձեռքովն էր բաժին վերցնում յուր գեղեցիկ հյուրի համար: Ելենան սկզբում ամաչում էր և քաշվելով էր ուտում, բայց մի երկու բաժակ շամպանիան, որ երիտասարդ տանուտերը զոռով խմեցրեց նրան, բացավ նրա երեսը: Նա մինչև անզամ սկսավ ազատ խոսել և ծիծաղել յուր սպազա ամուսնու հետ: Երիտասարդ Փուլշատյանը հետզհետե լցնում էր Ելենայի բաժակը քաղցր և անուշահամ գինիով և զանազան ոգեփց օշարակներով...

...Անուշ գինիներ, գողտրիկ երգեր, սիրալիր գրկախառնություններ...

Այս բոլորը միախառնված ո՞ր պիտի տանեին երկու երիտասարդներին...

— Ախ, ես ուշացա, ես պիտի գնամ...

— Դու կերթաս, միամիտ եղիր... դու կերթաս...

Ելենան հավատում էր յուր սպազա ամուսնուն և չէր ընդդիմանում նրան...



— Դու արդեն զարթնե՞լ ես, ես դիտմամբ թույլ տվի քեզ երկար քնելու: Ինչո՞ւ համար ես կանգնել այդտեղ, արի, արի ներս, — և այս ասելով Սամվելը կամեցավ բռնել Ելենայի ձեռքը:

— Հեռու, հեռու ինձանից, — ետ-ետ քաշվելով բացականչեց Ելենան, — ես սարսափում եմ ձեզանից...

— Ելենա, հոգյակս, ի՞նչ է պատահել քեզ. մի՞թե դու տխուր ես, մի՞թե դու ինձ ատում ես...

— Այո, ես Ձեզ ատում եմ. ես ի՞նչ ունիմ այստեղ, ո՞վ եք դուք, ինչո՞ւ համար ես ձեր տան մեջ եմ, ինչո՞ւ համար ինձ խաբեցիք... ի՞նչ պիտի անեմ ես այսուհետև... — իրար ետևից հարցրեց Ելենան և սկսեց հեկեկալ: Նրա՝ ամոթից, երկյուղից և հոգեկան տանջանաց սաստկությունից կապված արտասուքներն սկսան առվի պես հոսել...

— Լսի՛ր, սիրելի Ելենա, ես այսօր հրավիրել եմ այստեղ իմ բարեկամ և ընկեր Մարգարին, որը պետք է իմ և քո խաչեղբայրը լինի: Մեր պսակի մա-

սին մենք այսօր միմյանց հետ կարևոր խոսելիք ունինք, և դու էլ անպատճառ ներկա պիտի լինիս այդ խոսակցությանը, ուրեմն քո ծնողներդ մի քանի ժամ առաջ տեսնելու պատճառով այդ կարևոր գործը մի խանգարիլը. Մարգարը գուցե երկրորդ անգամ քեզ տեսնել չկարողացավ, իսկ ես կամենում եմ, որ մեր պակը շատ շուտ կատարվի, հասկանում ես, բայց եթե դու թողնես գնաս, այն ժամանակ ամիսներով կուշանա մեր ամուսնության գործը: Դու ինքդ չպետք է ցանկանաս այդ բանը, որովհետև դրանով կդժբախտացնես թե՛ ինձ, թե՛ քեզ...

Ի՞նչ աներ Ելենան, խեղճ, անմեղ աղջիկը: Կամուրջն արդեն ետևից վերցված էր, ճանապարհի կեսից ետ դառնալն անհնարին էր... Բացի այդ, նա սիրում էր Մամվելին, նա հավատում էր նրան... և մի՞թե կարող էր ընդդիմանալ, մասնավանդ, երբ հարցը օրինավոր ամուսնությանն էր վերաբերում:

Եվ նա համաձայնվեցավ մնալ:



Կեսօրից երկու ժամ արդեն անցել էր: Մամվելը Ելենային յուր թևն առած զբոսնում էր առանձնարանի հովանավոր այգիում և զանազան խոսակցություններով ու սիրալիր կատակներով զբաղեցնում էր նրան, աշխատելով միառժամանակ ցրել նրա տխրությունը: Նրանք դեռ չէին ճաշել և սպասում էին իրենց ապագա խաչեղբայր Մարգարին: Վերջինս շատ էլ սպասեցնել չտվավ: Մոտենալով շատ քաղաքավարությամբ ողջունեց նա Ելենային և Մամվելին: Վերջինս ծանոթացրեց նրան յուր սիրուհու հետ, յուր «ապագա հարսնացուն» անվանելով նրան:

— Ամենից առաջ պատիվ ունեմ ձեր թանկագին առողջության մասին հարցնել, օրհորդ: Ես ինձ բախտավոր եմ համարում այս բույեին ձեր ընկերության մեջ գտնվելուս համար, — այս բերան արած հաճոյախոսությամբ դիմեց Մարգարը Ելենային:

— Շնորհակալ եմ, պարոն, շատ լավ եմ, — ամաչկոտ ձայնով պատասխանեց Ելենան և աչքերը զցեց գետնին:

— Իսկ հետո սրբազան պարտք եմ համարում խոստովանել ձեր առաջ, — դարձավ նա Մամվելին, — որ դուք մի շատ քաջ երիտասարդ եք, և արժե ձեզ հարգել, որովհետև ինչ որ խոստացաք, այն էլ կատարեցիք: Այսուհետև ես ձեզ կանվանեմ «ամենակարող»...

— Դուք այն առևտրական գործի վերաբերությամբ եք խոսում, — ընդհատեց նրան Մամվելը (տեսնելով, որ յուր բարեկամը քիչ է մնում, թե յուր հիմարությամբ ամեն գաղտնիք լույս աշխարհի հանե), — այո, այո գործում ես շատ ճարպիկ շարժվեցա:

Մարգարն իսկույն հասկացավ յուր սխալը և խոսքը շուտ տվեց:

— Այդ բոլորը թողնենք մյուս կողմը, դուք ա՛յն ասացեք, թե ե՞րբ եք հանձնում ինձ իմ պաշտոնը:

— Խաչեղբայրություն, — հարցրեց Սամվելը:

— Իհարկե, ես այսօր հենց այդ բանն իմանալու համար եկա:

— Շատ շուտ, մինչև երկու շաբաթը:

— Օ՛, ոչ, ես համաձայն չեմ. այդ շատ հեռու է. միայն մի շաբաթ կարող եմ ես ժամանակ տալ ձեզ:

— Դե՛ռի՞ք ինչ կասեք սրա համար, օրհորդ, արդյոք ես ավելի լավ չե՞մ խոսում:

Ելենան ոչինչ չպատասխանեց, այլ շառագունվելով աչքերը դարձրեց մյուս կողմը:

Սամվելը նրա շփոթությունը տեսնելով, նկատեց.

— Այդ բանի համար մենք այսօր առանձին կխոսենք, օրհորդը երևի չէ ուզում մասնակցել մեր այդ գրույցին: Առայժմ երթանք ճաշելու, — հարեց նա, — ծառան ահա մեզ հրավիրելու է գալիս:

Եվ նրանք ուղղվեցան դեպի տուն:

Այսօր ճաշը փառավոր և բազմախորտիկ էր. և սակավաթիվ հյուրերին ծառայում էին երկու մաքուր հագնված սպասավորներ: Թանկագին գինիների և օշարակների թիվը նույնպես կատարյալ էր:

Բայց ճաշից հետո, երբ Սամվելը Մարգարի հետ առանձնացավ դահլիճը, իբր թե իրենց ամուսնության մասին նրա հետ խորհրդածելու համար, և Ելենան մնաց միայնակ, դարձյալ տխուր մտատանջությունները պաշարեցին նրան:

«Այս ո՞րտեղ եմ ես, այս ի՞նչ եմ անում, — մտածում էր նա ինքն իրեն, — փախստական իմ ընկերուհիների միջից, ես նստել եմ մի օտարի տանը, օտար տղաների հետ, և քե՛ֆ եմ անում. գինի եմ խմում, կենացներ եմ դատարկում... բայց իմ մայրը, իմ հայրը... ո՞ր եմ նրանք, որտե՞ղ եմ, չե՞ որ ինձ են որոնում... Եվ մի՞թե ես խելագարվել եմ, ո՞ր եմ մնում այստեղ և մինչև ե՞րբ պիտի մնամ...»: Այս մտածումները նրան շատ վրդովեցին: Նա վեր կացավ տեղից և դիմեց դեպի դահլիճի դուռը՝ դուրս գնալու դիտավորությամբ: Հանկարծ նրա ականջին զարկեց Մարգարի ձայնը, նա այնպես բարձր էր խոսում, որ Ելենան որոշ կերպով լսեց հետևյալ խոսքերը.

— Բայց գիտես ի՞նչ իրարանցում է եղել այսօր տիկին Բերնարի կարանոցում, Ելենայի ծնողները գնացել են այնտեղ, պահանջել են իրենց աղջիկը: Տիկին Բերնարը նրանց հետ կռվել է, վերջը ոստիկանություն հրավիրելով արձանագրություն է կազմել տվել՝ իբր թե նրանց պատժելու համար, որովհետև իրեն զրպարտել են: Հենց այն ժամին, երբ ես անցնում էի կարանոցի առջևից, Ելենայի ծնողները նոր էին դուրս եկել տիկին Բերնարի

մոտից, խեղճ մայրը այնպես էր լաց լինում, այնպես էր կոծում իրեն, որ ամբողջ փողոցը թափվել էր գլխին... Ելենան այլևս սպասել չկարողացավ, նա արագությամբ բացավ դուռը և խելագարի նման ներս ընկավ դահլիճը:

— Այդ ինչե՞ր եք պատմում, այդ ինչե՞ր են պատահել, իմ ծնողները պտրտում են ինձ, նրանք լաց են լինում, նրանք ծեծում են իրենց... իսկ այդ բոլորը դուք թաքցնում եք ինձանից... ախ անգութներ...

— Ի՞նչ է պատահել, Ելենա, հոգյակս, ի՞նչ բանից ես վրդովվել: Փաղաքշում էր նրան Սամվելը, իբր ոչինչ չիմանալով:

— Ի՞նչ բանից... դեռ նո՞ր եք հարցնում, բայց ես բոլորը լսեցի, ի սեր աստծո, պարոն, ազատեցեք ինձ այստեղից, տարեք ինձ իմ ծնողների մոտ. ես չեմ կարող ուշանալ, իմ շունչը կտրվում է, ես խելագարվում եմ... տարեք ինձ...

— Բայց ես այսպես ցերեկով քեզ հետ գնալ չեմ կարող, դա ամոթ բան է ինձ համար, սպասիր մութը մի փոքր կկոխես, այն ժամանակ ես կուղեկցեմ քեզ:

— Ամոթ բա՞ն է... օ՛, ամոթ բան է ինձ հետ ման գալ, շատ լավ. ուրեմն ես միայնակ կերթամ. գոնե ցույց տվեք ինձ ձեր տանից դուրս գալու ճանապարհը:

— Բայց այժմ ո՞ր ես գնում դու, գոնե մի երկու ժամ էլ սպասիր...

Ելենան թողեց Սամվելի խոսքը յուր բերանում և ինքը դուրս պրծավ դեպի պատշգամբը, այնտեղից այծյամի արագությամբ վար իջավ պարտեզը: Զբոսանքի ժամանակ նա այդտեղ նկատել էր մի գաղտնի դուռ, որ և յուր բախտից բաց գտավ:

Այդ դռնից նա դուրս փախավ և այլայլված սկսավ վազել մենավոր մի նեղ փողոցի մեջ:

— Ինչո՞ւ համար ծառաներից մեկին չես հրամայում ետ դարձնել նրան, — հարցրավ Մարգարը Սամվելից, երբ Ելենան իջավ պարտեզ:

— Ի՞նչ հարկ կա. թող ուր ուզում է գնա, — պատասխանեց Սամվելը, — այդպիսով նա իմ գործը դյուրացրավ: Իմ միակ ցանկությունն այն էր, որ այսօր քեզ նրա հետ ճաշ տայի իմ տանս, *խոսարունս կատարեցի և այժմ հանգիստ եմ*:



Հասնելով մի մեծ փողոց, Ելենան դանդաղեցրավ յուր քայլերը, որպեսզի անցորդների ուշադրությունը չգրավե: Եվ թեպետ նրա վրա ոչ որ մի առանձին ուշադրություն չէր դարձնում, բայց ինքն անդադար աջ, ձախ և ետ էր նայում: Նա կարծում էր, որ բոլորը գիտեն յուր արածը, որ

բոլորը յուր վերա են խոսում... Նա մինչև անգամ յուր երևակայության մեջ լսում էր, թե ինչպես յուր ետևից ծաղրում են իրեն: Եթե մեկը ճանապարհին դեմուդեմ պատահում էր նրան և աչքերն ուղղում էր յուր վերա, ինքը երեսը շուռ էր տալիս, վախենալով, թե իսկույն մի նախատինք պիտի լսի այդ անցորդից: Նա մինչև անգամ ամաչում էր օրը ցերեկով փողոցի մեջ, բայց երկնքի տակ գտնվելու համար և անհանգստությամբ շտապում էր մի գաղտնարանի մեջ ծածկվելու: Փուլշատյանի առանձնարանից դուրս գալու ընդհանրապես նա միայն մի բան էր մտածում՝ դիմել յուր ծնողաց մոտ, հայտնել, որ ինքը կորած չէ, որ ինքը կենդանի է, և այսպիսով ուրախացնել նրանց... իսկ այժմ նա այդ մտքից անգամ սարսափում էր: Ի՞նչ երեսով գնալ յուր ծնողաց մոտ, ինչո՞վ արդարացնել յուր անհայտանալը...

Վերջապես նա վճռեց դեռ գնալ տիկին Բերնարի մոտ, այն կնոջ, որ յուր համար պատրաստեց այս հոգեկան տագնապը... Գուցե նա նրան մի ելք կտվորեցներ... ուստի և ուղղեց յուր քայլերը դեպի կարանոցը:

...Սի քառորդ ժամից հետո տիկին Բերնարը մտավ Ելենայի մոտ:

— Այս որտե՞ղ էիք դուք, Ելենա, ձեզ չարաչար պտրտում էին ձեր ծնողները:

— Մի՞թե չգիտեք, թե որտեղ էի:

— Ճշմարիտ, որ չգիտեմ:

— Կատակ եք անում, տիկին...

— Ոչինչ կատակ չեմ անում:

— Ես այնտեղ էի, ուր որ դուք դրկել էիք, — կոշտ ձայնով նկատեց Ելենան, — այս դուք պետք է որ գիտենաք...

— Երիտասարդ Փուլշատյանի տա՞նը:

— Այո՛:

— Բայց ես չէի դրկել ձեզ, որ այսքան ժամանակ այնտեղ մնայիք, և ձեր անքաղաքավար ծնողները ինձ վերա կատաղեցնեիք:

— Անկե՞ղծ եք խոսում, տիկին: — Այս ասելով Ելենան յուր հայացքը սևեռեց ուղղակի տիկնոջ աչքերին:

Տիկին Բերնարն ուշադրություն անգամ չդարձրավ նրա խորհրդավոր հայացքին և սառնասրտությամբ շարունակեց.

— Օրիորդ, ես ձեզ այդպես չէի ճանաչել, այժմ դուք մի շատ վտանգավոր աղջիկ եք երևում իմ աչքում, ձեր այդ ակնարկություններն ինձ համար անտանելի են. և ես կկամենայի, որ իմ կարանոցը օր առաջ ազատ լիներ մի զրպարտողից. դուք կարող եք մինչև անգամ արատավորել նրա անունը:

Հեղինեն մնաց ընդարմացած, այս նրա սրտին կայծակի հարված իջեցրեց, և նա առաջին անգամ զգաց պատվի կործանման ծանրությունը...

Բայց տիկին Բերնարի այս տեսակ անողոք վարմունքն ուներ իր բնական պատճառները: *Ձգալով յուր գործած հանցանքի մեծությունը, նա աշխատում էր Ելենայի ամենաիտքը ակնարկություններն անգամ, որոնք վերաբերում էին իրեն, պատժել սպառնալիքներով և նրա ամոթիսած ու երկչուր բնավորությունն այս ճանապարհով բռնաբարելուց ետ, չբացնել միանգամայն յուր անչին սպառնացող վրանգները:* Եվ նա յուր հաշվի մեջ չէր սխալվում: Ելենան այժմ մի ծծկեր երեխայից էլ ավելի անգոր էր դարձել, ամեն մի ծանր խոսք նրան շփոթում էր, և տիկին Բերնարը վտանգներից իրեն ապահովեցնելու համար կարող էր անել նրա հետ ինչ որ կամենար:

— Դուք պետք է գնաք ձեր ծնողաց մոտ, — խոսեց նա կրկին, երբ տեսավ, որ Ելենայի լուռությունը շարունակվում է, — գոնե ձեր տան մեջ դուք պաշտպանված կլինիք, մինչդեռ այստեղ մեր աղջիկները ձեզ շատ նեղություն կպատճառեն. ձեր վարմունքն առիթ կտա նրանց ձեզ ծաղրելու, իսկ ես չեմ կարող միշտ զսպել նրանց:

Այս նոր հարվածի վերա Ելենան ամբողջ մարմնով դողդողաց, նա ըմբռնեց տիկնոջ խոսքերի բոլոր ճշմարտությունը... Եվ իրավ, չէ՞ որ նա այժմ մի անպատված աղջիկ էր, և նրան ամեն մարդ կարող էր և իրավունք ուներ ծաղրել... Այո, ամեն մարդ, մինչև անգամ փողոցի կանայք...

— Շնորհակալ եմ, տիկին, դուք ինձ լավ խորհուրդ եք տալիս, — վերջապես խոսեց Ելենան նվաղած ձայնով, — ես կերթամ, կհեռանամ այս տեղից, միայն մինչև երեկո թույլ պիտի տաք մնալ այստեղ, ես օրը ցերեկով չեմ կամենում ոչ ոքի երևալ:

— Շատ լավ, ինչպես կամենում եք, — ասաց տիկին Բերնարը և դուրս գնաց սենյակից:

Ելենան մնաց միայնակ, նա գլուխը կախեց և ընկղմվեցավ տխուր մտածումներին և հոգեկան տանջանաց անհատակ ծովի մեջ...

[Ելենայի հուզված հոգին հանգիստ էր որոնում... Նա այդ հանգիստը գտավ Քուռ գետի ալիքների մեջ... Իսկ պարոն Սամվել Փուլշատյա՞նը... Նա այժմ էլ ապրում է, դարձյալ ուրախ, դարձյալ զվարթ...]

ՐԱՖԻԻ

## ԱՆՄԵՂ ՎԱՃԱՌՔ (հատվածներ պատմվածքից)

... Խրճիթի դուռը զարկեցին:

- Քեթևան, Քեթևան, — լսելի եղավ մի խոսքուտ ձայն:
- Ախ, էլի եկավ... — ասաց հիվանդը վշտալի ձայնով:

Մանդրոն դուռը բաց արավ. հայտնվեցավ մի միջահասակ մարդ, նեղ և խորամանկ աչքերով: Նորա գորշ-պղնձագույն դեմքը կրում էր յուր վերա թափառական ցիգանի բոլոր վայրենի գծագրությունը: Եվ իրավ, այդ պարոնը կոչվում էր Բոշա-Կարապետ:

— Փողերը հագրեցի՞ր, — դարձավ նա դեպի հիվանդը:

— Ախար ո՞րտեղից հագրեմ, Կարապետ աղա, քո հոգուն մատաղ, — պատասխանեց Քեթևանը ողորմելի ձայնով:

— Օրհնած, եղպես չի ըլի է, — մի առանձին դժգոհական եղանակով խոսեց Բոշան, — գլուխքը չես կարացի տալ, շահն էլա տո՛ր...

— Ախար ո՞րտեղից տամ, Կարապետ աղա, դու չե՞ս տեսնում իմ հալը... ես հիվանդ, անտեր ընկած եմ... երեխեքս շատ գիշեր քաղցած եմ քնում...

Այդ խոսքերն այնպիսի դառն կերպով արտասանեց Քեթևանը, որ մի սիրտ, եթե քարից լիներ, դարձյալ կփափկեր: Բայց Բոշայի համար դրանք սովորական բառեր էին, որպիսիք նա հաճախ լսել էր յուր պարտականներից:

— Տե՛ս, ես քեզ ասում եմ, Քեթևան, թե որ մինչև ես շաբաթի վերջը չտաս, գանգատ կանեմ, — ասաց նա սպառնալով:

— Աստծուն բաշխե... քո որդիկներուն բաշխե... — աղաչում էր հիվանդը ողորմելի ձայնով:

Բայց Բոշայի համար անբախտի լացը, այրիի արտասուքը ոչինչ նշանակություն չունեին: Նա ինքն իրան բարկանալով խոսում էր՝ էսպես էլ օյին կուլի ... նաղդ փող տաս ու չկարենաս առնել...

Եվ նորա սատանայական աչքերը լի չարամտությամբ պտտում էին մերկ խրճիթի չորեքկողմը, կարծես մի բան որոնելու նպատակով: Նա տեսավ անկյունում կծկված հավերը, աղվեսի արագությամբ հարձակվեցավ նոցա վերա և բռնեց մի վառյակ ու մի մանուկ աքաղաղիկ:

— Մրանք էլա տանեմ, — ասաց նա դժոխային ուրախությամբ:

Մանդրոն, տեսնելով այդ հափշտակությունը, վրա պրծավ, բռնեց Բո-

շայի փեշից: — Աղա ջան, աղա ջան, ո՞ր ես տանում, էդ մինն իմ «խունունիան մամալն է»:

Այդպես էր կոչում պատանյակը յուր նախշուն աքաղաղին:

— Դե՛ն կորի,— գոռաց անգութ վաշխառուն,— այ, ես քեզ նշանց կտամ... Եվ նա սպառնացավ տղային յուր սարսափելի ապտակը:

Սանդրոն, մի այդպիսի ապտակ մի օր առաջ իմերելից կերած լինելով, զարհուրելով հետ քաշվեց, թողնելով վաշխառուի փեշը:

Վաշխառուն տարավ յուր կողոպուտը:

Սանդրոյի տխրությունը չափ չունե՛ր, նա շատ էր սիրում յուր նախշուն աքաղաղին: Հիվանդը, տեսնելով որդու արտասուքը, անդադար կրկնում էր.

— Ախ, է՛ն անիծված է՛ծը... էդ ի՛նչ կրակի մեջ գցեց մեզ...

Այդ խոսքերի մեջ, որ հիվանդն արտասանեց այնպիսի դառնությամբ, կար մի սարսափելի դեպք, որ գլխավորապես պատճառ եղավ նոցա անբախտությանը: Ամուսնի մահից հետո Քեթևանը պարտք առավ Բոշա-Կարապետից տասն ռուբլի փող, ամեն մի ամիսը մեկ ռուբլի տոկոս հաշվելով, տասնվեց ռուբլու պարտամուրհակ տվեց վեց ամիս ժամանակով: Այդ փողերով Քեթևանը գնեց մի այժ, որ յուր երեխեքը կերակրվեին նորա կաթնով: Բայց անգութ բախտը պետք է հասցներ նորանց յուր վերջին հարվածը, այժը երկու ամսից հետո մեռավ: Այնուհետև նոքա դարձան Բոշայի ստրուկը: Ամեն մի վեցամսյակին Բոշան պարտամուրհակը փոխում էր, տոկոսը տոկոսի վերա բազմապատկելով: Անցան մի քանի տարիներ: Քեթևանը յուր տան եղած-չեղածը ծախել նորան էր տվել, բայց տակավին հիսուն ռուբլի պարտական էր: Ամեն անգամ կգար Բոշան, ինչ որ ձեռքն ընկներ կտաներ՝ հավ, ձու, եղ և այլն: Բացի դորանից, նա յուր տան լվացքը նորանց էր լվանալ տալիս և ոչինչ չէր վճարում: Շատ անգամ Մարիամը կար էր անում նոցա համար և փող չէր ստանում: Այդ բոլորը նորա համար էր միայն, որ Բոշան համբերի և դատարանին գանգատ չանի: Իսկ համբերությունը Բոշայի միակ նպատակն էր, որովհետև օրըստօրե նորա պարտամուրհակի թվանշաններն ավելի խոշոր ձև էին ստանում...



Ծննդյան ցրտերը վաղուց անցել էին: Մարտը բերեց յուր հետ խոնավ և անձրևային օրեր: Եղանակը միշտ թխպոտ էր, և արեգակը հազիվ էր երևում:

Քեթևանի հիվանդությունը տակավին նույն դրության մեջն էր. նորա



կենսական ուժերն օրըստօրե սպառվում էին: Մի ցավալի անցք ավելի մեծ հարված տվեց նորա առողջությանը: Բոշան դատարանին գանգատվել էր, վճռել էին, որ Օվանեսի խրճիթը ծախսվի հրապարակական աճուրդով:

— Խեղճ երեխեքս ո՞րտեղ պահեմ... — ախ քաշելով ասում էր անդադար հիվանդը:

Մինչ Քեթևանը յուր ցավերի այդ հոգեվարք դրության մեջն էր, մի առավոտ նրա մոտ եկավ մի կարճլիկ պառավ, թուխ և ցամաք դեմքով, փոքրիկ և խորամանկ աչքերով: Նա երկար նստած խոսում էր Քեթևանի հետ: Մարիամը՝ Քեթևանի մանկամարդ աղջիկը, տանը չէր, նա Կեկելի մոտ զբաղված էր լվացքով:

— Էլ ասածուց ի՞նչ ես ուզում... — առաջ տարավ պառավը, — դու էդպես հիվանդ ես, տունդ ծախում եմ, ուտելու հաց չունես, հիմա մի էդպեսի մարդ, որ մեր քաղաքի ամենից հարուստն է, ուզում է քեզ օգնություն անել, դու ինչո՞ւ չես ընդունում... Էդ էլ խե՞ղք ե...

Քեթևանը ոչինչ չպատասխանեց:

— Տես, Քեթևան, — շարունակեց պառավը, — երկու հարյուր մանեթ էս գլխեմեն տալիս է... լավ հագցնում է... ասում է, թե հետո իմ փողով մի լավ մարդու կտամ... էլ ասածուց ի՞նչ ես ուզում...

— Ախ, ես ի՞նչպես իմ ձեռքով երեխես սաղ-սաղ գերեզմանը դնեմ... — պատասխանեց հիվանդը արտասվելով:

— Հիմա մեր քաղաքում ո՞վ չէ անում էդ բանը... — պատասխանեց պառավն ավելի գործազետ մարդու եղանակով: — Նրանք, որ ուտելու էլ ունեն, խմելու էլ ունեն, էդ բանն էլի անում են... դու ինչու չպիտի անես...

— Ախ, աստված, էդ ի՞նչ եմ լսում... — ձայն արձակեց Քեթևանը հառաչելով:

— Տես, Քեթևան, ասում եմ քեզ, հետո կփոշմանես...

— Թե որ հազար թուման էլ տա, չեմ կարա էդ բանն անել... — պատասխանեց Քեթևանը վճռական կերպով:

Մինչ նրանք այդ խոսակցության մեջն էին, խրճիթի դռները բացվեցան. ներս մտավ Բոշան, նրա հետ պրիստավը և մի տասնապետ: Հիվանդը սարսափեցավ:

Պրիստավը, մի սուր հայացք ձգելով աղքատ խրճիթի վրա, դարձավ դեպի պարտատերը. — Դե՛, պարոն, ի՞նչ եք կամենում, որ ես գրեմ:

— Ինչ որ տեսնում ես, ամենը գրե էլի, — պատասխանեց Բոշան դիվական սառնասրտությամբ: — Էդ կողենքը գրե՛, որի մեջ հիվանդը պառկած է, էդ տախտը գրե՛, էդ հավերը գրե՛, էն պատիկ պղինձը գրե՛, էդ ավելը գրե՛...

Քեթևանը պրիստավին տեսածին պես շփոթվեցավ. նա չէր իմանում, թե ինչ էր գործվում յուր տան մեջ: Մարիամը միայն կանգնած դռան հետևը լաց էր լինում: Պրիստավը տեսնելով անբախտների այդ ցավալի դրությունը և մանավանդ ճանաչելով Բոշային, թե ինչ ծառի պտուղ էր նա, խղճաց և սկսավ խնդրել պարտատիրոջը, որ դադարե տան կայքը գրել տալուց:

— Կարծեմ ավելի լավ կլինի, որ դուք թողնեք շարժական կայքերը և բավականանաք անշարժ կայքով, որովհետև խրճիթն իմ կարծիքով կլրացնե՞՞՛նք ձեր պահանջը:

— Էս քանդված քոխն երկու հարյուր մանեթ կդուրս բերե՞՞՛, — կտրեց Բոշան պրիստավի խոսքը, — ջիւղները տասը թումանից ավելի չեն տալիս, որ խառնեն իրանց գերեզմանատանը:

Երկու հարյուր մանեթի անունը լսածի պես Մարիամը մեջ մտավ.

— Ի՞նչ երկու հարյուր մանեթ, մերս ասում էր, որ հիսուն մանեթից ավելի քեզ պարտական չէ, գանա դու աստված չունե՞՞՛ս...

— Քո դեղեն շատ բան կասե, բայց էս թուղթը տեսնում ե՞՞՛ս...

Եվ իրավ, Բոշան ցույց տվեց երկու հարյուր մանեթի իսպոլնիտեղնի լիստ:

Մարիամի նկատողությունը բոլորովին ուղիղ էր: Քեթևանը հիսուն մանեթից ավելի պարտական չէր Բոշային, այն ևս մենք գիտենք, թե որպես էր կազմվել այդ սարսափելի գումարը... Բայց միամիտ Քեթևանը արել էր մի մեծ սխալ, ամեն անգամ հին պարտամուրհակները փոխելու, նորը տալու ժամանակ, միշտ հները թողել էր Բոշայի մոտ... Միամիտներին այդպես խաբելը Բոշայի սրբազան սովորություններից մինն էր...

Պրիստավը տեսնելով, որ Բոշային համոզելու հնար չկա, գրեց բոլոր այն կահ-կարասիքը, որ օրենքով թույլ էր տրված արեստի տակ դնել և Քեթևանի տնակեն դուրս բերելով այդ բաները, հանձնեց նոցա դրացի Կեկելին պահելու համար, մինչև աճուրդ նշանակվի: Բայց Սանդրոյի կոշիկները բարեբախտաբար գերծ մնացին հրապարակական ծախսի նյութ դառնալեն:

Անձանոթ պառավը, որ բոլոր ժամանակը ներկա էր այդ դրամատիկական հանդեսին, պրիստավի գնալեն հետո ինքն էլ հեռացավ: Մարիամը ճանաչեց նրան: Դա այն կինն էր, որ քանի շաբաթ առաջ օրիորդի հետ խոսել էր բաղնիքների ճանապարհին...

Պառավը, Քեթևանի տանից դուրս գալով, մոտեցավ պարոն Ք...ին.

— Հը՛, Կատո, տեսա՞ր, — եղավ հարստի առաջին խոսքը:

— Էս բոպեխ Էնտեղից եմ գալիս, — ասաց Կատոն: Այդպես էր պառավի անունը:

— Ի՞նչ շինեցիր:

— Շա՛տ ասեցի, շա՛տ խոսեցի, բայց գլուխ չէ գալիս...

— Ասացի՞ր, որ հարյուր մանեթ եմ տալիս:

— Ես իմ կողմից մեկ հարյուր էլ ավելցրի, շատ ուրիշ բաներ էլ խոստացա... էլի ռազի չկացավ...

Պարոն Ք... վրդովվեցավ. առաջին անգամն էր, որ նա նկատեց արծաթի անգորությունը: Նորա կարծիքով արծաթն ուներ յուր մեջ այնպիսի մի ուժ, որով բոլոր տիեզերքը մարդ կարող էր յուր ուզածին պես պտույտ տալ:

— Դու աղջկան տեսա՞ր, — շարունակեց նա յուր հարցմունքը:

— Տեսա, բայց աղջիկը ջեր երեխա է, ոչինչ չէ հասկանում:

— Նորան ավելի շուտ կարելի է խաբել...

— Նա Էնպեսներից չէ...

— Ուրեմն գլուխ գալու բան չէ՞... — հարցրուց պարոն Ք.-ն հուսահատ կերպով:

Կատոն չուզեց նորան բացասական պատասխան տալ, միայն մանրամասնաբար պատմեց Բոշայի և պրիստավի անցքը: Պարոն Ք...ի երեսի վրա շողաց վայրենի ուրախության լույսը, և նա մի առանձին հրճվանոք խոսեց.

— Կատո, քո արևը գիտեմա, էլ լա՛վ է էլի, շա՛տ լավ է էլի... հիմա բանը գլուխ կգա... դու մեկ էլ գնա, երկու անգամ էլ գնա, մինչև սարքես... Էդ քո փեշակն է, գիտես էլի, քեզ խոմ խրատ տալ չի ըլի... քո պատիվն էլ խոմ ես չեմ մոռանա, երկու թուման էլ քեզ եմ տալիս, տես, էս գլխեմեն:

Եվ նա հանեց յուր թղթապահի միջից երկու կարմիր տասր մանեթանոց և տվեց պառավին: Բայց Կատոն, ճանաչելով Քեթևանի երկաթի բնավորությունը, բոլորովին վստահություն չունեի դեպի յուր նպատակի հաջորությունը, այդ պատճառով նա հարցրուց պարոն Ք...ից.

— Հենց է՞ն աղջիկը պիտի ըլի:

— Հենց էն... մի անգամ տեսա լվացք էր տանում՝ խելքս գնաց...

— Թո՛ղ մի ուրիշը ճարեմ:

— Չէ՛, հենց էն...

— Մի քիչ դժար է: Պարոն Ք... բարկացավ.

— Ինչ ես սարսաղ խոսում:

Կատոն ոչինչ չպատասխանեց, միայն խոստացավ, որ նորա կամքը կկատարե:

Վերջացնելով յուր խոսակցությունը, կուսանենգը սկսեց գնալ դեպի յուր տուն: Նորա հետքից բերում էին յուր կառքը: Նա անցավ մի օտարազգի ժամատան դռնից, որի մոտ դրած էր աստվածածնա փոքրիկ պատկեր: Նա կանգնեց, գրպար վերցրեց և երեսը խաչակնքելով՝ երկար աղոթում էր նորա առջև: Ճանապարհից անցնողները ջերմեռանդությամբ խոսում էին նորա վրա: «Ինչ բարեպաշտ մարդ է», – ասում էին ամենքը:



Ապրիլ ամսի վերջին շաբաթն էր: Հովասուն օրը շնչում էր գարնանային թարմությամբ: Աստղագարդ երկինքը պարզ էր, որպես կաթնային օվկիանոս: Լուսնյակն ամեն տեղ թափում էր յուր արծաթափայլ լույսը:

Գիշերը մոտենում էր յուր կեսին:

Որպես գիշերային Վեստալկա, յուղային ճրագը ձախ ձեռից քաշ տված, Քեթևանի խրճիթից դուրս եկավ մի մանկահասակ աղջիկ, գարդարված նոր և խշխշուն հագուստով: Նորա հագուստը սեղմելով անցավ նեղ դռնից և նա հայտնվեցավ բակում: Երևում էր աղջիկը բոլորովին սիրահարված էր յուր զարդարանքով, նա անդադար հետ ու առաջ էր նայում, ուղղում էր հագուստի ծալքերը, ուղղում էր յուր փարիզյան գրակի վարդերը և զմայլվում էր...

— Մի հայելի էլ չկա, որ մտիկ անեի, — ասում էր նա ինքն իրան և շտապելով դիմում էր դեպի լվացարար Կեկելի տունը:

Փոքրիկ Յուցան հայտնի չէ ինչ չարամտությամբ նույն ժամում հոտոտելով վազվզում էր բակումը, նա, տեսնելով աղջկան, հարձակվեցավ նորա վերա և քիչ էր մնում, որ պատռե նորա փեշը:

— Այ, սատկես դու, քռռացե՞լ ես, — ճչաց աղջիկը:

Շնիկը ճանաչեց նորան, սկսավ ներողություն խնդրել, մի քանի անգամ պտույտ գալով օրիորդի շուրջը և քսքսվելով նորա փեշեքին: Աղջիկը մտավ լվացարարի տունը:

— Եկա մնաք բարով ասելու, Կեկել ջան, — ասաց օրիորդը, ընկնելով նորա գիրկը:

Կեկելը շփոթվեցավ, նա հագիվ կարողացավ ճանաչել, որ յուր գրկումը Մարիամն էր:

— Ես գնում եմ, Կեկել ջան:

— Ո՞ր, — հարցրուց լվացարարը զարմանալով:

— Չեմ գիտում... մերս ինձ մարդի տվեց:

— Ո՞ւմ տվեց:

— Չեմ գիտում, Կեկել ջան, տե՛ս էս շորերը, էս շլյապեն, էս քորոցը, էս

բրասլենունները... Էս ամենն իմ մարդն է ուղարկի,— ցույց տվեց Մարիամը ուրախ ժպիտն երեսին:

Կեկեկի գույնը շուտ-շուտ փոխվում էր, նա չէր կարողանում հավատալ յուր ականջներին:

— Դու տեսա՞ր էն մարդուն:

— Ես չեմ տեսի, Կեկեկ ջան, բայց էն պառավը, որ էս շորերը բերավ, ասում էր՝ շատ լավ մարդ է:

— Ի՞նչ պառավ:

— Մեկ պառավ էլի, նա հիմա մեր տանն է, երկու հարյուր մանեթ էլ փող տվեց մորս: Էլ Բոշան, էնպես չէ՞, Կեկեկ ջան, էլ չի կարա մեր տունը ծախել:

Կեկեկի զարմանքն ավելի սաստկացավ:

— Դու ճանաչո՞ւմ ես էն պառավին:

— Չէ՛, Կեկեկ ջան, մի անգամ ես նորան բաղնիքի ճամփումը տեսա, շատ խոսեց ինձ հետ,— պատասխանեց օրիորդը՝ մտաբերելով անցյալը:

— Էսօր էլ իրիկնապահին նա ինձ բաղնիք տարավ, լեղրուց, ֆայտոնով գնացինք, Կեկեկ ջան, ախ, ի՛նչ լավ էր ֆայտոնը, էնպես սլլում էր... գնում էր ու գնում...

Մարիամն այնպիսի մի ոգևորությամբ արտասանեց վերջին խոսքերը ֆայտոնի մասին, որ նա առաջին անգամն էր նստել, մինչ Կեկեկը, չնայելով յուր բոլոր վրդովմունքին, սկսավ ականա կերպով ծիծաղել:

— Լավ, դու էն ասա, աղջի, պսակն ու հարսանիքը ե՞րբ է լինում,— հարցրուց Կեկեկը:

Մարիամը շփոթվեցավ, չգիտեր թե ի՞նչ պատասխաներ «Չեմ գիտում, էս գիշեր ինձ տանում են», — ասաց նա միամիտ կերպով:

— Հետո դու էն մարդին պետք է սիրե՞ս:

— Բաս չի՞ պիտի սիրեմ, Կեկեկ ջան, ախար էս շորերը նա է ուղարկել:

Կեկեկը, չհասկանալով որ բոլորովին պարզամտությամբ ասաց Մարիամն այդ խոսքերը, ընդմիջեց նորան մի փոքր հանդիմանական ձևով.

— Օ, ծամ կտրած, դու ախար Նիկոլին էիր սիրում:

— Էլի կսիրեմ, Կեկեկ ջան, բա՛ն Նիկոլին կմոռանա՞մ,— պատասխանեց օրիորդը խիստ զգալի կերպով: — Քեզ էլ էի սիրում, Կեկեկ ջան, դու ինձ չէիր ծեծում, քեզ էլ չեմ մոռանա, շուտ-շուտ քեզ մոտ կգամ:

Այդ խոսքերի մեջ կար այնքան պարզություն, որքան մաքուր և անմեղ էր Մարիամի հրեշտակային սիրտը:

— Խեղճ աղջիկ... — ասաց Կեկեկն անլսելի ձայնով և երեսը մի կողմ շրջելով, սրբեց արտասուքը:

— Հիմա գնանք մեր տուն, Կեկել ջան, էնտեղից դու ինձ ճանապարհ կդնես, — աղաչում էր Մարիամը:

— Չէ Մարիամ, ես չեմ գա, ես չեմ ուզում տեսնել էն պառապի երեսը...

— Նա շատ լավ կնիկ է, Կեկել ջան, էնպես լավ խոսում էր որ...

— Ի՞նչ էր խոսում:

— Մերս չէր ուզում ինձ մարդի տա, հենց լաց էր ըլում ու լաց ըլում... Կեկել ջան, ինչո՞ւ էր լաց ըլում...

— Չեմ գիտում: Ասա, ինչ էր խոսում:

— Ինձ հանեցին դուրս, ես չլսեցի ինչ խոսեցին, հետո մերս կանչեց ինձ յուր մոտ, ասաց, «էդ կնիկն ինչ որ ասե, դրան ականջ դիր»: Ես տեսա էն վախտն էլ նրա աչքերումն արտասուք կար:

Կեկելը գրկեց օրիորդին և երկար նրան ճնշած ուներ յուր կուրծքի վերա: Նա չէր կարողանում բաժանվել այն աղջկանից, որին այնքան սիրում էր:

— Դու էլ լաց ես ըլում, Կեկել ջան, ինչո՞ւ ես լաց ըլում, — հարցնում էր Մարիամը տխրությամբ: — Մի՛ լաց ըլի, ես չեմ գնա էն մարդի մոտ, էլի քեզ մոտ կմնամ, քեզ համար բաղնիքը լվացք կտանեն:

Խեղճ աղջիկ... — կրկնեց Կեկելն անլսելի ձայնով:

— Ի՛նչ շատ ուշացար, Մաշո ջան, — ասաց նորան պառավը, որ սև սատանայի նման սպասում էր նորան: — Դե՛, գնանք, քո հոգուն մատաղ, ուշանում ենք:

Մարիամը ոչինչ չպատասխանեց: Նա քարե արձանի նման սառած կանգնել էր, չգիտեր, թե ի՛նչ անե:

— Գնանք, Մաշո ջան, ուշանում ենք, — կրկնեց պառավը:

— Բաս մերս չի՞ պիտի գա ինձ հետ, — հարցրուց Մարիամը, մոտենալով մոր մահճին:

Քեթևանի առողջությունը վերջին օրերում բավականին ուղղվել էր, բայց Մարիամը զարհուրեցավ, երբ գտավ նորան սաստիկ տաքության մեջ:

— Ա՛խ, աստված, ի՛նչ բան արեցի... — կրկնում էր հիվանդը խորին կերպով հոգոց հանելով: Նա տանջվում էր խղճի տենդային դրության մեջ...

— Մայրի՛կ, մայրի՛կ, — ձայն տվեց աղջիկը:

Հիվանդը ոչինչ չպատասխանեց, վերմակը քաշեց գլխին և ծածկեց երեսը:

— Նա լաց է լինում... — դարձավ Մարիամը դեպի պառավը, — ես չեմ կարող գալ, նորա քեփն էլի վատացավ:

— Նա քնած է, Մարիամ, դու նորան մի նեղացրու, — պատասխանեց պառավը: — Մենք գնանք, ֆայտոնով կտանենք քեզ, կես սիսթ չի քաշի, էլի ետ կբերեն:

— Ինչպես թե քնած է... լսի՛ր, — նա խոսում է:

— Ես նորան իմ ձեռքով գերեզման դրի... — լսելի եղավ հիվանդի ձայնը:

— Նա տաքության միջումն է խոսում, Մարիամ, գնանք, մի ուշացիր, — ստիպում էր պառավը:

— Լավ, ինձ ի՞նչի համար ես տանում, — հարցրուց օրիորդը:

— Էնպես, էլի, Մարիամ... Մերդ չասե՞ց քեզ, ես ինչ որ ասելու ըլեմ, դու պիտի ընդունես:

— Ասեց:

— Դե՛ գնանք:

— Բայց էլի շուտ ետ պիտի բերես, որ մորս մոտ ըլեմ:

— Կբերեն, ասաված է վկա:

— Էս գիշեր, գիտե՞ս:

— Հա՛, էս գիշեր:

Մարիամը մոտեցավ քնած Սանդրոյին, զարթեցրուց նորան:

— Սանդրո ջան, նստիր մայրիկի մոտ, ջուր ուզելու լինի՝ տուր, չքնես, ես էս նիմուտին գալիս եմ: Եվ նա տվեց եղբորը մի բուռը կոնֆետ, որ ստացել էր պառավից: Սանդրոն, տեսնելով քաղցրավենիքը, էլ չխոսեց և համաձայնվեցավ քրոջ պատվերներին:

Նոքա դուրս եկան: Խրճիթի անկյունում սպասում էր մի կառք: Կատոն յուր «անմեղ վաճառքը» դրեց կառքի մեջ: Չիաները սլացան, կառքն անհետացավ գիշերային խավարի միջում:

Կառքը քանի մի ժամ հանդարտ կերպով գնում էր կոկած քարուղիի վերա: Մարիամը նորա զվարճությունով գմայլված ամենևին չէր զգում ճանապարհի երկարությունը: Վերջապես նոքա հասան մի գեղեցիկ այգիի դռանը, որ գտնվում էր քաղաքից դուրս, մեծ գետի ափի մոտ: Կատոն ներս տարավ օրիորդին այգի, և նոքա մտան մի փառավոր տուն, որ էր այգետիրոջ ամառանոցը: Այդ հոյակապ շինվածքի սենյակներից մի-նը միայն լուսավորված էր նույն պահուն, ուր պառավը ներս տարավ Մարիամին:

Պարոն Զ... միայնակ անցողարձ էր անում սենյակի մեջ: Տեսնելով եկվորներին, նա մի կրիտիկական հայացք ձգեց օրիորդի երեսին:

— Շատ ուշացար, Կատո, — հարցրուց նա պառավից և, մոտենալով նորա ականջին, ասաց, — հազար թուման արժե:

Պառավն ընդունեց խիստ ինքնաբավական դեմք, որպես մի մարդ, որ

գոհ էր յուր հաջողությամբ, ոչինչ չպատասխանեց, միայն նորա խորամանկ երեսի վերա երևաց լի չարախնդությամբ մի դիվական ժպիտ:

Մարիամը, մի անկյունում կանգնած, լուռ և երկչոտ դեմքով նայում էր նոցա վերա, երբ պարոն Զ... գնաց նստեց կիսաթախտի վերա և հրավիրեց յուր մոտ օրիորդին:

Օրիորդի թշերն ամոթից կարմրել, վարդի գույն էին ստացել:

— Ե՛կ, մի ամաչիր, — կանչում էր նորան պարոն Զ...

— Գնա՛, մի ամաչիր, — բոթում էր նորան Կատոն:

Օրիորդը մի քայլ անգամ չարեց:

Պարոն Զ... տեսնելով, որ նա չէր համարձակվում յուր մոտ գալ, մոտեցավ օրիորդին, բռնեց նորա ձեռքից և տարավ կիսաթախտի վերա, ուր ինքն առաջ նստած էր:

— Ինչ լավ աղջիկ ես, — ասաց նա շոյելով Մարիամի սիրուն մազերը և ավելի մոտենալով նորան:

Օրիորդը բոլոր մարմնով դողում էր:

— Այժմ դու կարող ես գնալ, Կատո, — ասաց պարոն Զ... պառապին:

Երբ Կատոն պատրաստվում էր դուրս գնալ, Մարիամը վազեց նորա մոտ, բռնեց պառապի փեշից ասելով.

— Չէ, դու մի գնա:

— Ես չեմ գնալու, Մարիամ, — պատասխանեց պառապը նորան հանգստացնելով, — ես գնում եմ մեկել օթախից քեզ համար միրգ բերեմ:

— Չեմ ուզում միրգը, ինձ տար մեր տուն:

— Հիմա ուշ է, — ասաց նորան պարոն Զ... կրկին մոտենալով, — էս գիշեր մնա էստեղ, առավոտը Կատոն քեզ կտանե:

— Չէ՛, չեմ կարա մնալ, մերս հիվանդ է, հիմա թող տանե, — ասում էր Մարիամը աչքերը լցված արտասուքով:

— Դե՛ լավ, էստեղ սպասիր, գնամ ֆայտոնը կանչեմ, որ քեզ տանե, — ասաց Կատոն և դուրս վազեց:

Օրիորդն շտապեց նորան հետևել, դուռն արդեն կողպված էր դրսից...

Անցան մի քանի րոպեներ... դառն դրամատիկական րոպեներ... Անցավ քառորդ ժամ:

Հանկարծ սենյակի լուսամուտներից մինը շառաչմամբ բացվեցավ, և մի մարմին գլորվեցավ ներքև:

— Չե՛մ ուզի... չե՛մ ուզի... — օղի մեջ լսելի եղավ մի ձայն և շուտով լռեց... Այդ խեղճ Մարիամի ձայնն էր:

Մի քանի օրից հետո նույն այգիի կողքից հոտող մեծ գետի միջից ձկնորսը դուրս քաշեց մի սիրուն աղջկա մարմին: Բարի ձկնորսն առեց



դիակը յուր ուսին, տանում էր դեպի յուր խրճիթը, որ պատանե ու թաղե նորան, երբ տեսավ աղքատների մի փոքրիկ խումբ բերում էին յուր առջև մի դագաղ:

— Վա՛յ, դեղի, վա՛յ, դեղի, — հառաչում էր մի պատանի յուր ձեռքերով քարշ ընկած դագաղի կողքից:

— Սանդրո՛, հերի՛ք լաս, — մխիթարում էր նորան Կեկելը:

Դա Զեթևանի դագաղն էր:

Նրանք տեսան դիակը ձկնորսի ուսին:

— Մարիամ... — բռռաց Նիկոլը և գրկեց դիակը:

— Ա՛խ, սիրեկան... — ձայն տվեց Կեկելը և մարեցավ:

# ԹՐԱՖԻԹԻՆԳ

(ՄԱՐԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ)

ՁԵՌՆԱՐԿ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատվեր՝ 308: Տպաքանակ՝ 60000:  
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x90/16: 7.5 տպ. մանուկ:  
Տառատեսակը՝ DallakErkir, DallakTimeNew:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում





Schweizerische Eidgenossenschaft  
Confédération suisse  
Confederazione Svizzera  
Confederaziun svizra

Swiss Agency for Development  
and Cooperation SDC



IOM International Organization for Migration

